



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

3196

28

278

C-37

25



Printed in Turkey

2442

54

243

27

216

2439

18

6528

40

69

4

2452

3652

190

45

290

555

2010




28  
C-37

ՀԵՂԱՐՁԱԿ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՈՒՂՂԱՓԱՌ ԵՒ ԿԱԹՈՒՂԻԿԷ


ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ



ԹԱՐԳՄԱՆԵԱՆ Ի ՌՈՒՍԵՐԷՆԷ Ի ՅՈՒՆԱՐԷՆՆԵ

ԵՒ ԱՅԺՄ


Ի ՅՈՒՆԱՐԷՆԷ Ի ՀԱՅԵՐԷՆ



Մ Ա Խ Ի Ի Ք

Մ. ԿՈՍՏԱՆԴԻՆ ԵՒ Մ. ԵԱՆԳՕ

Վ. ԵԱՆԳՕԵԱՆ



ՂԱԼԱԹԱ

ՅՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ. Յ. ՔԻՒՐԲՋԵԱՆ



11228

2333  
40

ԱՌ

ՀԱՅՐԵ ԻՒՐ ՀՈԳԵԼՈՅՍ

Մ. ՎԱՍԻԼ ԵԱՆԳՕԵԱՆ

ԵԻ

ԼԻԱԿԻՑ ԿՈՐԻՆ Մ. ՎԱՐՎԱՌԱ

ԶՕՆԵՆ

ԶԱՐԶԱՆՍ

ՈՐԴԻԱԿԱՆ ԱՆՄԱՀ ՍԻՐՈՅ

ՀՍՐԱԶՍՏԳ ԿՈՑԻՆ

Մ. ԿՈՍՏԱՆԳԻՆ ԵԻ Մ. ԵԱՆԳՕ

Վ. ԵԱՆԳՕԵԱՆ

№ 2001.



✱

ΓΡΗΓΟΡΙΟΣ ΕΛΕΩ: ΘΕΟΥ ΑΡΧΙΕΠΙΣΚΟΠΟΣ  
ΝΕΑΣ ΡΩΜΗΣ ΚΑΙ ΟΚΙΟΥΜΕΝΙΚΟΣ  
ΠΑΤΡΙΑΡΧΗΣ

Αριθ. πρω. 5173. Λαβόντες υπ' ὄψιν τὴν ἀπὸ τῆς 15<sup>ης</sup>.  
» Δια 4002. Ὀκτωβρίου α ω ο, καὶ υπ' ἀριθ. Πρωτοκ.  
5173 Ἐγγραφον αἴτησιν τοῦ τε πανιερω-  
τάτου ἁγίου πρ. Ἀμίδης κὺρ Μακαρίου,  
τοῦ φιλοπόνου Κ. Δημητρίου Ι. Χ.  
Τζολακίδου. καὶ τοῦ τιμιωτάτου κὺρ  
Χ. Κωνσταντίνου Γιάγκογλου περιέχό-  
σεως ἱερᾶς κατηχήσεως ἀρμενιστί ἐκ  
πιστῆς, κατὰ τὴν διαβεβαίωσιν αὐτῶν,  
μεταγλωττήσεως ἐκ τοῦ Ἑλληνικοῦ κει-  
μένου τῆς ἐν Ὁδησσῷ ἀδείᾳ τῆς ἁγιωτά-  
της Συνόδου πασῶν τῶν Ρωσσιῶν  
ἐκδεδομένης ὀρθοδόξου ἱερᾶς Κατηχή-  
σεως, ἐγκρίνομεν τὴν ἀρμενικὴν μετάφρα-  
σιν καὶ παρέχομεν τὴν πρὸς ἐκτύπωσιν  
αὐτῆς Ἐκκλησιαστικὴν ἄδειαν εἰς  
διδασκαλίαν τῶν ἀρμενοφώνων εὐσεβῶν  
Χριστιανῶν.

ἔτει σωτηρίῳ α ω ο Νοεμβρίου κδ.  
ΠΑΤΡΙΑΡΧΗΣ ΚΩΝΣΤΑΝΤΙΝΟΥΠΟΛΕΩΣ  
ΑΠΟΦΑΙΝΕΤΑΙ.

✱

ἂν ἡ ἀπόφασις αὐτῆς ἀποβῇ ἐν ἴσῳ  
καὶ ἐν δυνάμει ἐπὶ τῶν ἀρμενοφώνων  
ἁγίων τοῦ ἐκείνου χωρίου

Համար 4002 • Աստիճակ 'ի տես թ 2 Հովհաննէս Բ Թ Ն Շ ընդ-  
5173 համարաւ արձ. 5173 զգրաւոր խնդիրն թէ  
Գառ. 4002 սրբազան նախկին Ամիսի տեան Մակարի-  
ոսի, թէ աշխատաւր Տիմիթրիոս Զօլաքեա-  
նի եւ թէ պատուարժան Ս. Բոնատանդին  
Եանդօյեանի վասն հրատարակման սրբազան  
Քրիստոնէական վարդապետութեան ի Հայ  
լեզու հաւատարիմ՝ ըստ հաստատութեան  
նոցա՝ 'ի թարգմանութեան որ 'ի Յունական  
լեզուէ, հրատարակեալ յՅոսեսսա հա-  
մանաւ Ս. Մինօղին ամենայն Ռուսաստան  
եայց, արժան դատիմք զթարգմանութիւնն  
ուղղափառ Սրբազան Քրիստոնէական վար-  
դապետութեան եւ տամք վասն տպագր-  
ութեան նորա եկեղեցական արտօնու-  
թիւն յուսումն հայաբարբառ բարեպաշտ  
քրիստոնէից :

Յամի փրկութեան 1870 Նոյեմբ. 26.

ՊԱՏՐԻԱՐԿ Կ. ՊՈԼՍՈՅ ՀԱՍՍՏԻ :



## ՄԵՆԱՊԱՏԻՒ ՏԵԱՐԲ .

Դուք որ քաջ զգացիք՝ թէ Արեւելեան երկու-  
կարեւոր ազգաց դարաւոր կրօնական ատելութեան  
կրճիւր բառնալն՝ մեծ քայլ մ'է այս երկու ազգաց  
երջանկութեան հասնելու , դուք որ քաջ զգացիք  
թէ այս բանին համար առաջին ընելիքը այս երկու  
ազգաց դաւանութիւններն միմեանց լեզուաւ փոխա-  
դարձաբար թարգմանելն է , որոնց մէջ երկու ազգք  
պիտի տեսնեն որ չէ թէ քրիստոնէութիւնն՝ այս  
փրկարար եւ բոլոր մարդկութիւնը մէկ շօր որդի եւ  
մէկ ընտանիք կազմող կրօնն , այլ զիրար չհասկնա-  
լու կամակորութիւնն է որ այսչափ մեծ խտիր դը-  
րած է ընդ ազգս եւ ազինս . այդ գեղեցիկ նպատա-  
կին հասնելու համար Յոյնք պարտին 'ի ձեռին ունե-  
նալ Հայոց դաւանութեան տետրն՝ եւ Հայք՝ Յունա-  
ցըն՝ իրարու հետ բազդատելու զանոնք , եւ առ  
այժմ այս վերջին 'ի յիշատակ ձեր ազնիւ ծնողաց 'ի  
լոյս անել տուիք առատաձեռնութեան նոր օրինա-  
կով մը , դո՛ւք , կ'ըսեմ , անօգուտ մատեան  
մը չէ՛ որ ձեր ազնուազգի ծնողաց գերեզմանի  
ճակատը կը փորագրէք : Ո՛չ , ո՛չ . զի այս  
սրբազան մատենիկը հոգւոյ վսե՛մ անունդն է ,  
սրտի բաղձանաց Մենտորը , արտակենդրոն զգաց-  
մանց ստանձն , երկնասլացիկ երեւակայութեան մըտ-  
բակն է , եւ փրկութեան պողոտայի սեմը . ո՛չ , ո՛չ .  
զի այս նուիրական մատենին իւրաքանչիւր թերթե-  
րըն՝ սփոփանաց անհուն թաշկինակներ են՝ վշտացե-  
լոց արտուէքը սրբելու կարող . հո՛ն դիմող թշուա-  
ռըն՝ իւր թշուառութեանց բեռը թեթեւցած կըզգայ .  
հո՛ն դիմող աղքատն՝ հարուստի մը չափ երջանիկ  
կը դառնայ . հո՛ն դիմող որքն՝ հարց Հայնս՝ իւր  
հայրը կը տեսնէ . հո՛ն դիմող տկարն՝ հօր կը վերա-



ՈՒՂՂԱՓԱՌ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԳԱՊԵՏՈՒԹԵԱՆ



ՆԱԽՆԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ



**Մ Ն Ա Ր Յ .** Ի՞նչ է Ուղղափառ Քրիստոնէական վարդապետութիւնը :

**Պ Ա Տ Ա Ս Ի Ա Ն .** Ուղղափառ Քրիստոնէական վարդապետութիւնը՝ քրիստոնէական ուղիղ հաւատոյ վարդապետութիւնն է, որ կ'աւանդուի իւրաքանչիւր քրիստոնէի՝ ՚ի հաճոյս Աստուծոյ և ՚ի փրկութիւն հոգւոյ :

**Լ .** Ի՞նչ կը նշանակէ Քրիստոնէական վարդապետութիւն բառը :

**Պ .** Քրիստոնէական վարդապետութիւն (Κατ' ἑγγύς) բառը կը նշանակէ կենդանի բարբառով վարդապետութիւն Քրիստոսի. այսինքն՝ ուղղափառ հաւատոյ նախնական վարդապետութիւն՝ Առաքելոց ժամանակէն սկսուած՝ և իւրաքանչիւր քրիստոնէի հարկաւոր սեպուած : Դուկ. Գլ Ա. Համար 4: Գործ. ԺԲ. Հմբ 23 :

**Լ .** Ի՞նչ կը պահանջուի ՚ի հաճոյս Աստուծոյ և ՚ի փրկութիւն հոգւոյ :

**Պ .** Նախ՝ ճանաչել զԱստուած ճշմարիտ, և ուղիղ հաւատք ունենալ առ նա. երկրորդ՝ ունենալ հաւատոյ համաձայն վարք, և բարի գործք :

**Լ .** Ինչո՞ւ նախ հաւատք կը պահանջուի :

**Պ .** Քանզի՛ ինչպէս որ Աստուծոյ խօսքը կը վը-

Է

դառնայ . հո՞ն դիմող ընկճեալն՝ ինքզինքն արի կը գտնէ . հո՞ն դիմող գերին՝ ազատ կը դառնայ . հո՞ն դիմող յուսահատն՝ յուսածիծաղ կը խայտայ Այո՛ , թո՛ղ չըսեն այսուհետեւ թէ Ակնայ Յունադաւան Հայոց հօրիգօնը սեւ է . բաւական են զայն լուսաւորելու : Այո՛ , Ձեր այս առատաձեռնութեան քաղբ ծընունդն անմահ պիտի պահէ Ձեր եւ Ձեր Ազնիւ ծնողաց յիշատակները , ցո՛րչափ անմահ ըլլան քրիստոնեայն ու քրիստոնէութիւնը : Եւ ո՞վ գիտէ թէ զԱզգս եւ զԱզկնս մի հօտ եւ մի հովիւ ընել նկրտողը՝ Ձեր դամբանաց վրայ չպիտի ծագեցունէ Արեւելեան երկու քոյր ազգայ կրօնական սիրոյ լուսափետուր արշալոյսն . . . . .

Արդ՝ Ձեր այսպիսի վեամ նպատակին նուաստ գործակից կոչուելու երջանկութեանս համար խորհի՛ւ չնորհակալութիւնս մատուցանելով :

Մնամ անձնուէր

1870 . Դեկտեմբեր 15

Տ . Ի . Խ . 201 ԱԳԵԱՆ



կայէ՝ «Առանց հաւատոյ՝ անհնար է հաճոյ լինել Աստուծոյ» . Առ երբ Գլ. ԺԱ. Հմբ 6:

Լ. Ինչո՞ւ հաւատոյ հետ կը պահանջուի նաև հաւատոյ համաձայն վարք և բարի գործք:

Պ. Վասն զի՝ ինչպէս որ Աստուծոյ խօսքը կը վկայէ՝ «Հաւատք առանց գործոց մեռեալ են» . Յակովբայ Գլ. Բ. Հմբ. 20:

Լ. Ի՞նչ է հաւատք:

Պ. Ըստ մեկնութեան Ս. Առա. Պօղոսի՝ «Զի՞նչ են հաւատք, եթէ ոչ յուսացելոյ իրաց հաստատութիւն, և յանդիմանութիւն որոց ոչն երեւին» . Առ երբ Գլ. ԺԱ. Հմբ. 1. Այսինքն ճանաչումն երևելեաց և աներևութից, ըրձացելոց և անկեղեցից:

Լ. Ի՞նչ տարբերութիւն կայ ճանաչման և հաւատոյ մէջ:

Պ. Ճանաչման առարկայ են բոլոր երևելիքն ու մտաց ըմբռնելիքն, իսկ հաւատոյ՝ աներեւոյթքն ու մտքէ վեր եղած բաները . ճանաչման հիմն է փորձառութիւն, կամ քննութիւն իրաց . իսկ հաւատքը՝ ճշմարտութեան վկայութեանը վրայ կը հիմնուի . ճանաչումը գլխաւորաբար մտաց, հզօր ներգործութեան ու սրտի կը վերաբերի . իսկ հաւատքը մասնաւորապէս սրտի կը պատկանի, թէև բոլորեալ ՚ի մտաց:

Լ. Ինչո՞ւ բարեպաշտութեան վարդապետութեանը մէջ չէ թէ միայն ճանաչում՝ այլ և հաւատք կը պահանջուի:

Պ. Քննելի՛ այս վարդապետութեան գլխաւոր նպատակն է Աստուած, որ աներևոյթ և ՚ի վերքան զմիտս է, և իմաստութիւն Աստուծոյ, որ ծածկեալ է ՚ի խորհուրդս: Աւստի՛ թէև կրօնա-

կան վարդապետութեան շատ մասերը մարդկային մտաց հաստութեան վեր են ճանաչմամբ՝ սակայն հաւատքը կ'ընդունի զանոնք: Սուրբն կիրելի երուսապեմային կ'ըսէ. «Հաւատքն է ամեն զգացմանց լուսաւոր աչքը . վասն որոյ կ'ըսէ Մարգարէն. «Եւ եթէ ոչ հաւատացէք, և ոչ ՚ի միտ աւանդուք» . Եսայեայ Գլ. Ի. Հմբ. 9. Կիրովի Քրիստոնէական վարդապետութիւն. 3:

Լ. Արեւ ի՞նչպէս կը բացատրուի թէ հաւատքը պէտք է:

Պ. Ս. Կիւրեղ կը բացատրէ զայն հետևեալ կերպով. «Եւ հաւատոյ արժէքը չէ թէ լոկ մեզ քրիստոնէիցս համար մեծ է՝ այլ և եկեղեցւոյ բընաւ չի վերաբերող գործոց համար ալ մեծ է. . . երկրագործութիւնն անգամ հաւատոյ վրայ կը կայանայ . քանզի պտուղ քաղել չի հաւատացողը՝ չի կրեր այնչափ աշխատանք . հաւատքով է որ մարդիկ կը նաւեն՝ առ ոչինչ համարելով տարբաց զայրոյթն ու այնեաց կատաղութիւնն և ինքզինքնին սկար փայտի մը վտահանալով ամեն խարխիսներէ ապահովագոյնին կը դիմեն . որ է հաւատք» . Քրիստոնէական վարդապետութիւն Ե՛:

ԱՍՏՈՒԱՄԱՍԵՆ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ

Լ. Ո՞ւրից կը բղխի Աւղղափառ հաւատոյ վարդապետութիւնը:

Պ. Աստուածային յայտնութեանն է:

Լ. Ի՞նչ կը հասկցուի Աստուածային յայտնութիւն բառէն:

Պ. Այն թէ՛ նոյն ինքն Աստուած մարդոց յայտանց՝ որպէս զի կարենան հաւատալ անոր՝ առ ՚ի



փրկութիւն, և արժանապէս զինքը պաշտել:

Լ. Արդեօք ամեն մարդոց տուաւ Աստուած այս յայտնութիւնը:

Պ. Իբր բոլորովին պիտանի ու փրկարար՝ ամբողջ մարդկային սեռին տուաւ զայն: Այլ քան զի բոլոր մարդիկ ընդունակ չեն Աստուծմէ անմիջական յայտնութեան՝ ասոր համար գործածեց Աստուած՝ իւր յայտնութեան (մասնաւոր) ընտիր քարոզիչներ, որպէս զի զայն աւանդեն այն ամենուն՝ որ կը փափաքին ստանալ զայն:

Լ. Ինչո՞ւ ամեն մարդիկ արժանի չեն ընդունիլ անմիջական յայտնութիւն յԱստուծոյ:

Պ. Վասն զազրութեան մեղաց և ակարութեան հոգւոյ և մարմնոյ:

Լ. Որո՞նք էին աստուածային յայտնութեան քարոզիչք:

Պ. Ադամ, Նոյ, Աբրահամ, Մովսէս և այլ մարդարէք առին ու քարոզեցին աստուածային Յայտնութեան սկզբունքն. այլ անոր լրումն ու կատարածը բերաւ յաշխարհ՝ մարմնացեալ Որդին Աստուծոյ՝ Տէրն մեր Յիսուս Քրիստոս, և այս յայտնութիւնն համայն տիեզերաց տուաւ՝ ՚ի ձեռն աշակերտաց և Առաքելոց իւրոց: Պօղոս առ էբրայեցիս ուղղած թղթոյն սկիզբը կ'ըսէ. «Բազում մասամբք, և բազում օրինակօք կան խառ խօսեցաւ Աստուած ընդ հարսն մերդարէիւք. ՚ի վախճան առուրցս այսոցիկ՝ խօսեցաւ ընդ մեզ Որդւոյն, զոր եզ պատանգ ամենայնի, որով և զյառիտեանսն արար.» Նոյն Առաքելայր կը գրէ առ Կորն. «Խօսիմք զԱստուծոյ խնայտութիւնն ծածուկ խորհրդով, զոր յառաջ քան զյառիտեանս սահմանեաց Աստուած ՚ի փառս մեր.

զոր ոչ ոք յիշխանաց աշխարհիս՝ այսորիկ ծանեաւ. . . Այլ մեզ յայտնեաց Աստուած հոգւոյն իւրով. զի Հոգին զամենայն քննէ՝ և զխորս Աստուծոյ.» Առ Կորնթ. Ա. Գլ. Բ. Ը, 7, 8, 10: Յովհաննէս աւետարանիչն ալ կը գրէ Աւետարանին մէջ. «զԱստուած ոչ ոք ետես երբէք, բայց միւսմինն «Որդի որ է ՚ի ծոց Հօր՝ նա պատմեալ.» Գլ. Ա. Ը, 18: ՚ի վերջոյ՝ Տէրն մեր Յիսուս Քրիստոս կ'ըսէ. «Ոչ ոք ճանաչէ զՈրդի՝ եթէ ոչ Հայր, և ոչ զՀայր ոք ճանաչէ՝ եթէ ոչ Որդի և ում Որդին կամիցի յայտնել.» Մատթ. Գլ. ԺԱ. Հաւմար 27:

Լ. Արդեօք անկարող է մարդ Աստուծոյ վրայ ծանօթութիւն ունենալ առանց մասնաւոր աստուածային յայտնութեան:

Պ. Մարդ կրնայ ճանչել զԱստուած՝ տեսնելով նորա ստեղծած բաներն: Այլ սակայն այս ճանաչումը թերի է և պակասաւոր, և միայն նախապատրաստական օգուտ մը կ'ընծայէ հաւատոյ, և միշտ մը կ'ըլլայ յայտնութեամբ զԱստուած ճանչելու: «Զի աներևոյթք նորա ՚ի սկզբ բանէ աշխարհի՝ արարածովքս խնայեալ տեսանին. այսինքն է՝ մշտնջենաւորութիւն և զօրութիւն և աստուածութիւն նորա.» Առ Հոովմ. Գլ. Ա. Հմբ. 20, «Արար ՚ի միջէ արեւնէ զամենայն ազգս մարդկան՝ բնակել ՚ի վերայ երեսաց ամենայն երկրի. հաստատեաց կարգեալ ժամանակս և սահմանադրութիւնս բնակութեան նոցա՝ խընդրել զԱստուած, զի թերեւս զննիցեն զնա և զբնայնիցեն. նա՝ և ոչ հեռի իսկ է յիւրաքանչիւր ումքէ ՚ի մէջ. զի նովաւ կեամք և շարժիմք և եմք.» Գործոց Գլ. ԺԷ. Հմբ. 26—28: «Աստու-



ծոյ մը վրայ մարդոց ունեցած բնական հաւատ-  
քը մեր միտքը կ'առաջնորդէ հաւատալ Աստու-  
ծոյ գոյութեանն . այս ալ արարածոց վրայ նայ-  
ուածք մը նետեալով կ'իմացուի, որով և իմաս-  
տուն, հզօր ու բարի Արարիչ ու Տէր մ'ունենալ-  
նին յայտ յանդիման կ'երեւի = Էւ որովհետեւ  
Աստուած արարիչն է համայն տիեզերաց որոյ  
մէջն եմք և մեք ուստի մերն ալ Արարիչն է =  
Ահա այս ճանաչման կը հետեւի հաւատք, որմէ  
եւալը կուգայ երկրպագութիւն . » Բարսեղի Մե-  
ծին թուղթ 233 :

**ՍՐԲԱԶԱՆ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆ ԵՒ ՍՈՒՐԲ ԳԻՐԲ**

Լ. Ի՞նչ կերպով աստուածային Յայանութիւ-  
նը տարածուեցաւ մարդկային սեռին մէջ, և  
ի՞նչպէս պահուած է ճամարիտ եկեղեցւոյ մէջ =

Պ. Երկու կերպով . այսինքն սրբազան աւան-  
դութեամբ և սուրբ Գիրքով =

Լ. Ի՞նչ կը հասկցուի սրբազան աւանդութիւն  
բառէն =

Պ. Սրբազան աւանդութիւն ըսելով կը հաս-  
կըցուի ճամարիտ հաւատացեալոց և աստուածա-  
պաշտից կողմէն բանիւ և օրինակաւ իրարու և  
ի հարց յորդիս եղած աւանդումն վարդապե-  
տութեան հաւատոյ, օրինաց Աստուծոյ, խոր-  
հրդոց և սրբազան արարողութեանց =

Լ. Կո՞նք արդեօք ասպահով շտեմարան սրբազան  
աւանդութեան =

Պ. Բոլոր ճամարիտ հաւատացեալք, որք հա-  
ւատքով ըստ սրբազան աւանդութիւն միացեալ  
են՝ բոլորը մէկէն և յաջորդաբար ըստ աստուա-

ծային անօրինութեան կը կազմակերպեն ղեկեղե-  
ցի, այս է ահա ասպահով շտեմարան սրբազան ա-  
ւանդութեանց, կամ ըստ բանից սրբոյն Պօղոսի  
Առաքելոյ՝ «Եկեղեցի Աստուծոյ կենդանոյ, սիւն  
և հաստատութիւն ճամարաութեան» . Առ Տիմոթ.  
Ա. Գլ. Գ. Հմբ. 13 :

Սուրբն Երանոս կը դրէ . « Պէտք չէ ուրիշ տեղ  
փնտռել այն ճամարաութիւնը՝ զոր կրնանք դիւ-  
րաւ ստանալ եկեղեցիէն : Որովհետեւ Առաքելաբ-  
բօլոր ճամարաութեան վերաբերեալներն եկեղեց-  
ւոյ մէջ առատարար ղետեղեցին՝ իբր ճօխ գան-  
ձարան մը . այնպէս որ փափաքողը կրնայ կենաց  
չուրն անկից ստանալ . զի նա է դուռն կենաց . »  
Գիրք Գ. Գլ. Գ. :

Լ. Որո՞նք կը կոչուին սուրբ Գիրք :

Պ. Այն մատեաններն՝ որք Աստուծոյ շնչովը  
գրուեցան՝ ձեռամբ Աստուծոյ ընտրած մարդ-  
կանց, որք կը կոչուին Մարգարէք և Առաքելաբ :

Լ. Ո՞րն է հնագոյն, սրբազան Աւանդութիւնը  
թէ սուրբ Գիրքը :

Պ. Աստուածային յայտնութեան տարածման  
հնագոյն ու նախնական եղանակն է սրբազան Ա-  
ւանդութիւնն : Ադամէն մինչև Մովսէս չի կայրն  
սուրբ Գիրք . և նոյն իսկ Տէրն մեր Յիսուս Քրի-  
ստոս իւր աստուածային ճառերն ու պատուի-  
րանքը բանիւ ու օրինակաւ իւր աշակերտաց ա-  
ւանդեց, և չէ թէ գիրքով . այս կերպով՝ ի սկզբ-  
բան Առաքելաբ քարոզեցին զհաւատս, և Քրիս-  
տոսի եկեղեցին հաստատեցին : Աւանդութեան  
անհրաժեշտ պէտքն անկից ալ յայտնի կ'ըլլայ թէ՛  
մարդոց խիստ թիչերը կրնան Աստուածաշունչ  
գիրք գործածել, բանի որ ամենուն օգտակար



է աւանդութիւնն :

Լ. Աւրեմն ինչո՞ւ տրուեցաւ սուրբ Գիրքը :

Պ. Սատուածային յայտնութեան մանրամասնազոյն ու անփոփոխ պահպանութեան համար : Երբ սուրբ Գիրքերը կը կարդամք՝ Մարգարէից ու Առաքելոց խօսքերուն անմիջական ունկնդիր՝ և անոնց կենսակից եղածի պէս կը դանեմք ինքզինքնիս , թէ և այս սուրբ Մատեանքը մենէ շատ ժամանակ առաջ գրուեցան :

Լ. Արդեօք կրնանք սրբազան Աւանդութիւնը պահել՝ քանի որ ունինք սուրբ Գիրք :

Պ. կրնանք պահել այն աւանդութիւնքն՝ որք համաձայն են աստուածային Յայտնութեան և սուրբ Գրոց , ըստ որում սուրբ Գիրքն ալ կ'ուսուցանէ զայս՝ Պօղոս Առաքելոյն բերնով . « Այս սուհեաւ , եղբարք , հաստատուն կացէք՝ և պինդ կալարուք զաւանդութիւնն՝ զոր ուսարուք , եթէ բանիւ և եթէ թղթով մերով » . Բ. առ թեսաղ ԴԼ Բ. Հմր. 14—15 :

Լ. Ինչո՞ւ այսօր ալ պէտք է Աւանդութիւնը :

Պ. Քանզի կ'առաջնորդէ դէպ յ'ուզիդ հասկացումն սուրբ Գրոց , 'ի կանոնական կատարումն խորհրդոց՝ և 'ի պահպանութիւն սրբազործութեանց՝ ըստ կատարեալ մաքրութեան անոնց նախնական կարգադրութեան : Սուրբն Բարսեղ ասոր համար կ'ըսէ . « Եկեղեցւոյ մէջ պահուած վարդապետութիւններէն ու քարոզներէն մէկ քանին գրով ընդունած ենք , մէկ քանին ալ Առաքելոց աւանդութենէն , որոնք ամենն ալ մի և նոյն զօրութիւնն ունին բարեպաշտութեան վերայ , և եկեղեցական օրինաց փոքր 'ի շատէ հըմտութիւն ունեցող մը բնաւ չի կրնար ուրանալ

զայս : Եթէ աւանդութիւնքն առ ոչինչ համարիմք՝ Աւետարանը խանդարած կ'ըլլամք . զի ո՞վ գրով աւանդեց մեզ Քրիստոսի անուամբ խաչակրնքուիլ , աղօթելու ատեն յարեւելա դառնալ , Ս. Պատարագի ատեն զանազան աղօթքներ ուղղել առ Աստուած , որք թէ և գրուած չեն Աւետարանին մէջ՝ սակայն անոր ոգւոյն համաձայն են բոլորովին . ուսկից առած ենք Մկրտութեան ջուրն , Օծման իւղն ու մկրտուողն օրհնելն , երեք անգամ ջուրն ընկղմելն , օծելն , « Հրաժարիմք 'ի սատանայէ և 'ի հրեշտակաց 'նորա » ըսելն , եւն՝ եթէ ոչ այն աւանդութիւններէն՝ զորս Ս. Հարք յԱռաքելոց ընդունելով մեզ հաղորդեցին : Ուստի պէտք չէ զարմանալ թէ ի՞նչպէս անգիր աւանդութիւնքն եկեղեցւոյ մէջ մուտ գտնելով՝ տիրեցին » . կանոն կԶ. Ի վերայ Հողւոյն սրբոյ՝ ԳԼ ԻԷ :

ՍՈՒՐԲ ԳԻՐԲ Ի ՄԱՍՆԱՒՈՐԻ

- Լ. Ե՞րբ գրուեցան սուրբ Գիրքը :
- Պ. Չանազան ժամանակաց մէջ , սրբ Քրիստոսի մենդէն առաջ՝ որը վերջը :
- Լ. Արդեօք սուրբ Գրոց այս երկու մասունքը մասնաւոր անուն չունին :
- Պ. Ունին . Քրիստոսէ առաջ գրուած սուրբ Գիրք կը կոչուին Հին կտակարան , վերջը Գըրուածներն ալ՝ Նոր կտակարան :
- Լ. Ի՞նչ են Հին ու Նոր կտակարանք :
- Պ. Առաջինն՝ հին կապ կամ դաշն և երկրորդը՝ նոր կապ կամ դաշն Աստուծոյ ու մարդոց մէջ :
- Լ. Հին կտակարանն ի՞նչ բանի վրայ կը կա-



յանայ :

Պ. Անոր վրայ թէ՛ Աստուած մարդոց կը խոստանայ փրկիչ Աստուածային, և կը պատրաստէ զանոնք՝ յընդունելութիւն նորա :

Լ. Ի՞նչպէս պատրաստեց Աստուած զմարդիկ՝ յընդունելութիւն փրկչին :

Պ. Տակաւ առ տակաւ ծանուցեալ յայտնութեամբք, մարդարէութեամբք ու նախանկար անտեսութեամբք :

Լ. Ի՞նչ բանի վրայ կը կայանայ Նոր կտակաւրանն :

Պ. Անոր վրայ թէ՛ Աստուած ստուգիւ չնորհեց մարդոց՝ փրկիչ Աստուածային՝ միածին Որդիիւր Յիսուս Գրիստոս :

Լ. Հին կտակարանը քանի՞ սուրբ Գրքեր կը պարունակէ :

Պ. Սուրբն կիւրեղ Երուսաղէմացին, սուրբն մեծն Աթանաս և Ս. Յովհաննէս Դամասկացին՝ 22 գիրք կը համրեն, այն կերպով՝ որով Հրէայք կը վերծանեն զանոնք՝ նախատիպ լեզուաւ տեսն Աթանասայ թղթ. 1թ՝ տօնից վրայ. և Յովհ. Դամասկ. աստուածաբանութեան Գիրք Դ. Գլ. Ժէ. :

Լ. Ի՞նչու Հրէից հաշուելու կերպին յարգ կ'ընձայուի :

Պ. Քանզի, ինչպէս որ կ'ըսէ Պօղոս Առաքեալ՝ «Նոցա հաւատարիմ եղեն պատգամքն Աստուծոյ» և Գրիստոսէ յետոյ եկած եկեղեցին՝ Քրիստոսէ առաջ եղող Հրէական եկեղեցիէն ընդունեց սուրբ Գիրքն. Առ Հռոմիմ. Գլ. Դ. Հմբ. 2 :

Լ. Ուրեմն ի՞նչպէս նախնի Ս. Գրքերը կը հաշուեն սուրբն կիւրեղ ու սուրբն Աթանաս :

Պ. Հետեւեալ կերպով. 1. Գիրք Ծննդ. 2.

Ելից, 3. Ղեւտացուց, 4. Թուոց, 5. Երկրորդօրինաց, 6. Յետուայ որդւոյ Նաւեայ, 7. Դասաւորաց, և այս գրքին իբր յաւելուած՝ Հռոմիայ, 8. Թագաւորաց Ա. և Բ. իբր այս գրքին երկու մասերն, 9. Թագաւորաց Գ. և Դ. 10 Մնայորդաց Ա. և Բ. Գիրք, 11. Եղրասայ Ա. գիրքն ու անոր Բ. ք, կամ լատ Հէլլենական վերադրի՝ Նէմիայ, 12. Եսթերայ, 13. Յորայ, 14. Սաղմսաց, 15. Առակաց Սողոմոնի, 16. Ժողովողի՝ նորա, 17. Երգ երգոց՝ նորա, 18. Եսայեայ մարգարէին, 19. Երեմիայ, 20. Եղեկիէի, 21. Դանիէի. 22՝ 12 մարգարէից :

Լ. Ինչո՞ւ նախնեաց այս մասեաններուն չեն վերաբերիր Իմաստութիւն Սիրաբայ, և ուրիշ մէկ քանի գրքեր :

Պ. Քանզի Երբայեցերէնի մէջ չի կան :

Լ. Ի՞նչպէս պէտք են ընդունուիլ այս վերջին գրքերը :

Պ. Մեծն Աթանաս կ'ըսէ թէ հարք զանոնք սահմանեցին՝ յընթերցումն երախայից :

Լ. Ի՞նչպէս պէտք է որոշագոյն բաժանել Հին կտակարանի գրոց պարունակութիւնը :

Պ. Հետեւեալ չորս մասերուն կրնան բաժնը ուիլ. Ա. Գիրք Օրէնագրականք, որք Հին կտակարանի հիմն են զլիսաւորաբար. Բ. Պատմականք, որք մասնաւորապէս բարեպաշտութեան պատմութիւնը կը պարունակեն. Գ. վարդապետականք, որք կը պարունակեն բարեպաշտութեան վարդապետութիւնը. Դ. Մարգարէականք, որք կը պարունակեն մարգարէութիւնք, կամ լաւ ևս՝ ապառեաց վրայ կանխասացութիւնք, և մանաւանդ Յիսուսի Գրիստոսի վրայօք :



Լ. Որո՞նք են Օրէնսդրական գիրքերն ։  
 Պ. Հնգամատեանք կոչուածներն են, զորս Մովսէս գրեց, և են՝ Ծնունդք, Ելք, Ղեւտացիք, Թիւք և Երկրորդ օրէնք ։ Յիսուս այս գրքերն համառօտիւ կը կոչէ Մովսէսի օրէնք . տես Ղուկաս, Գլ. ԻԳ. Հմբ. 44 ։

Լ. Ի՞նչ կը պարունակէ Ծննդոց գիրքն ։  
 Պ. Աշխարհի ու մարդոց ստեղծման պատմութիւնն, և հետեւաբար՝ մարդկային սեռին նախնական ժամանակները բարեպաշտութեան պատուէրքն ու պատմութիւնն ։

Լ. Մովսէսի միւս չորս գրքերն ի՞նչ կը պարունակեն ։

Պ. Մովսէս մարգարէին օրովն եղած բարեպաշտութեան պատմութիւնն ու Աստուծմէ անոր արբուած օրէնքն ։

Լ. Որո՞նք են Հին կտակարանի պատմական գրքերն ։

Պ. Յեսու որդի Նաւեայ, Դատաւորաց, Հըռուսթ, Թագաւորաց, Մնացորդաց, Եղրաս, Նէէմիա և Եսթեր ։

Լ. Որո՞նք են վարդապետական գրքերն ։

Պ. Յորայ գիրքը, Սաղմոսքն ու Մողմոնի գրքերն ։

Լ. Սաղմոսաց վրայօք նշանակելու արժանի ի՞նչ կայ ։

Պ. Այս գիրքը, բաց ՚ի բարեպաշտութեան վրայի ճառերէն, կը պարունակէ նաև պատմական ապացոյցներ և Փրկչին վրայօք շատ մարդարէութիւններ . հրաշալի կերպով կ'առաջնորդէ առ Աստուած ուղղեալ արօթից ու փառաբանութեան գործոյն, որով և եկեղեցական արարողու-

թեանց մէջ միշտ կը դործածուի ։

Լ. Որո՞նք են Մարգարէական գրքերն ։

Պ. Եսայի, Երեմիա, Եղեկիէլ, Դանիէլ և միւս

12 Մարգարէից գրքերն ։

Լ. Քանի՞ են Նոր կտակարանի գրքերն ։

Պ. Քսան և եօթն ։

Լ. Արդեօք գլխաւորաբար օրինաց գրքեր կան ասոնց մէջ, այսինքն Նոր կտակարանի հիմք կազմող մատեաններ ։

Պ. Արդարև իբրև օրէնք կրնայ կոչուիլ Աւետարանն, որ Մատթէոս, Մարկոս, Ղուկաս ու Յովհաննէս Աւետարանչաց չորս գրքերէն կը բաղկանայ ։

Լ. Ի՞նչ կը նշանակէ Աւետարան բառը ։

Պ. Աւետարան (Εὐαγγέλιον) բառը կը նշանակէ բարի կամ բերկրալի աւետիս ։

Լ. Աւետարան կոչուած գրքերն ի՞նչ կ'աւետեն ։

Պ. Տեսն մերոյ Յիսուսի Ֆրիստոսի աստուածութիւնն . աշխարհ գալն, աշխարհի վրայ ունեցած վարքն, հրաշքները, փրկարար խօսքերն, և վերջապէս՝ ՚ի խաչ հանուելով մեռնիլը, փառաւոր յարութիւնն ու յերկինս համբարձումը ։

Լ. Ի՞նչու այս գրքերն Աւետարան կոչուեցան ։

Պ. Քանզի՞ Աստուածային Փրկչին ու յաւիտեանական փրկութեան աւետիսէն աւելի բերկրալի աւետիս չի կրնար տրուիլ ։ Ուստի և եկեղեցւոյ մէջ Աւետարանի ընթերցումը կըսկսի և կը վերջանայ միշտ՝ « Փառք քեզ, Տէր, փառք քեզ » բերկրալից ձայնիւն ։

Լ. Արդեօք Նոր կտակարանի գրոց մէջ Պատմականներ ալ կը գտնուին ։

Պ. Կը գտնուին . և զլխաւորաբար Ս. Առաքե-



Լոյ Գործոց գիրքը :

Լ. Այս գիրքն ի՞նչ կը պատմէ :

Պ. Հոգւոյն Սրբոյ Առաքելոց վրայ իջնելն ու անոնց ձեռքով Գրիստոնէական Եկեղեցւոյ տա-  
րածումը :

Լ. Ի՞նչ կը նշանակէ Առաքեալ բառը :

Պ. Առաքեալ (Απόστολος) բառը կը նշանակէ՝  
խրիւած . այսպէս կը կոչուին Տեառն մերոյ Յի-  
սուսի Գրիստոսի ընտիր աշակերտները, զորս խը-  
կեց քարոզել զԱւետարան :

Լ. Որո՞նք են Նոր կտակարանի վարդապետա-  
կան Գրքերն :

Պ. Եօթը կաթմուղիկէ թուղթեր . Յակոբայ Ա-  
ռաքելոյն՝ մէկ, Պետրոսի՝ երկու, Յովհաննու՝  
երեք, Յուդայի՝ մէկ, և Պողոս Առաքելոյն 14  
թուղթերն, առ Հռովմ. մէկ, առ Կորնթացիս՝  
երկու, առ Գաղատացիս՝ մէկ, առ Եփեսացիս՝  
մէկ, առ Փիլիպպեցիս՝ մէկ, առ Կողոսացիս՝ մէկ,  
առ Թեսալոնիկեցիս՝ երկու, առ Տիմոթէոս՝ եր-  
կու, առ Տիտոս՝ մէկ, առ Փիլիմոն և առ Եբ-  
րայեցիս :

Լ. Կա՞ն արդեօք Նոր կտակարանի գրքերուն  
մէջ մարդարէականներ ալ :

Պ. Այս գիրքն է Յայտնութիւնն :

Լ. Այդ բառն ի՞նչ կը նշանակէ :

Պ. Յայտնութիւն (Αποκάλυψις) բառը կը նշանա-  
կէ ծածկուած բաներու երեւան ելնելն :

Լ. Ի՞նչ կը պարունակէ :

Պ. Բոլոր աշխարհի և Գրիստոսի եկեղեցւոյն  
ապագայ վիճակին մէկ խորհրդաւոր պատկերն :

Լ. Աստուածային գիրքը կարդալու ատեն ի՞նչ  
գիտել պարտիմք :

Պ. Նախ՝ ընթերցումն սուրբ Գրոց բարեպաշտու-  
թեամբ, իբր Աստուծոյ խօսքն, և ուշադրու-  
թեամբ՝ անոր մէջ գրուածներն ՚ի միտ առնելոյ հա-  
մար. երկրորդ՝ ընթերցումն մաքուր կամօք՝ հա-  
ւասոց մէջ յստաջադիմելու՝ և ՚ի բարի գործս  
յորդորուելու համար. երրորդ՝ սուրբ Գիրքը  
պէտք է հասկնալ ըստ մեկնութեան Ուղղախա-  
եկեղեցւոյ և սուրբ Հոգւոյ :

Լ. Քանի որ եկեղեցին աստուածային Յայտնու-  
թիւնն ու սուրբ Գիրքը չը գիտցողներուն կը  
սովեցունէ՝ ի՞նչ նշան ու ապացոյց կուտայ ա-  
նոնց Աստուծոյ խօսքն ըլլալուն :

Պ. Ասոր նշանն ու ապացոյցն են հետեւեալքը .  
նախ՝ վարդապետութեան բարձրութիւնն, որ կը  
վկայէ թէ մարդկային մտաց ներքեւ անոր հը-  
նարուիլն անկարելի է. երկրորդ՝ վարդապետու-  
թեան մաքրութիւնը որ կ'ապացուցանէ թէ Աս-  
տուածային ամենամաքուր մտքէն բխած է. եր-  
րորդ՝ մարդարէութիւններն. չորրորդ՝ հրաշքներն .  
հինգերորդ՝ այս վարդապետութեան մարդուս  
սրտին վրայ ունեցած ամենահզօր ներգործութիւ-  
նըն, որ վայել է միայն Աստուծոյ կարողութեանը :

Լ. Ի՞նչ կերպով մարդարէութիւնքն Աստուա-  
ծային Յայտնութեան ճշմարտութիւնը կը ցուցը-  
նեն :

Պ. Ասի օրինակաւ կը մեկնուի . երբ Եսայի մար-  
դարէն փրկչին կոչսէ մը ծնանիլը կանխատեյ (հը-  
րաշք անհասանելի մարդկային մտաց) և երբ մէկ  
քանի դարեր անցնելէ յետոյ Տէրն մեր Յիսուս Քը-  
րիստոս Ամենասուրբ Մարիամ կուսէն ծնաւ՝ այն  
ատեն բացայայտ կերպով ապացուցուեցաւ թէ՛  
մարդարէութիւնն ամենազէտ Աստուծոյ խօսքն



էր, և թէ մարգարէութեան կատարումն Ամե-  
նակարող Աստուծոյ գործն է: Անոր համար Ս.  
Աւետարանիչն Մատթէոս, Գրիստոսի ծնունդը  
պատմելով՝ Եսայեայ մարգարէութիւնը մէջ կը  
բերէ՝ որ կ'ըսէ. «Այլ այս ամենայն եղեւ, զի լոյսի  
որ ասացան ՚ի Տեառնէ ՚ի ձեռն Եսայեայ մար-  
գարէի. Ահա կոյս յղասցի և ծնցի որդի, և կո-  
չեացեն զանուն նորա Էմանուէլ, որ թարգմանի՝  
Ընդ մեզ Աստուած»: Մատթ. Ա. Հմբ. 22—23:

Լ. Հրաշքն Ի՞նչ է:

Պ. Մարդոց կարողութեանն ու արհեստին առ-  
ջեւ անկարելի գործեր, զոր ամենակարողն Աս-  
տուած ներգործած է, զոր օրինակ յարութիւնն  
՚ի մեռելոց է:

Լ. Ի՞նչ կերպով հրաշքներն Աստուծոյ խօսքն  
ճշմարտութեան նշանները կ'ըլլան:

Պ. Ճշմարտապէս հրաշք գործողն Աստուա-  
ծային կարողութեամբ կը գործէ. ուրեմն հա-  
ճելի է այնպիսին Աստուծոյ, և հաղորդակից հոգ-  
ւոյն Աստուծոյ. այսպիսի մարդ մը ճշմարտու-  
թիւնը միայն կը պատմէ. ուստի՝ քանի որ յանուն  
Աստուծոյ կը խօսի՝ անշուշտ Աստուծոյ խօսքը  
կ'աւետէ, ասոր համար՝ Տէրն մեր Յիսուս Քրի-  
ստոս հրաշքները կը նկատէ իբր բացայայտ  
վկայութիւն իւր յԱստուածուստ առաքմանն.  
«Չգործան զոր ետ ցիս հայր զի կատարեցից ըջ  
նոսա, նոքին իսկ գործքն զոր գործեմ՝ վկայեն  
վասն իմ, եթէ հայր առաքեաց զիս»: Յովհ. ԳԼ.  
Ե. Համար. 36:

Լ. Ի՞նչպէս կրնանք գիտնալ թէ Քրիստոսի  
վարդապետութիւնքն այսպիսի ամենազօր ներ-  
գործութիւններ ունեցած են:

Պ. Ասով կրնամք գիտնալ որ այն 12 Առաքեալք՝  
աղքատ, ազէտ ու նուսաա կարգի մարդոց մէ-  
ջէն առնուելով՝ այս քարոզութեամբ յայժմեցին ու  
Քրիստոսի հնազանդեցուցին հզօրներն, իմաս-  
տուններն, հարուստներն, թագաւորներն ու աշ-  
խարհի թագաւորութիւնքը:

2333  
40

ԲԱԺԱՆՈՒՄՆ ՔՐԻՍՏՈՍՆԻ ԱՆԱՆ  
ՎԱՊԴԱՊՆՏՈՒԹԵԱՆ

Լ. Ի՞նչպէս կը բաժնուի բարեպաշտութեան վը-  
րայ եղած Քրիստոնէական վարդապետութիւնը:

Պ. Ըստ օրինակի «Ռուդափառ Դաւանութիւն»  
վերնագրով մասնին, զոր ուղղափառ հարք վաւե-  
րացուցին, կրնայ իբր հիմն գրուիլ Պօղոս Առա-  
քելոյն խօսքն, որ կ'ըսէ թէ՝ Քրիստոնէին իւր  
ներկայ կենաց մէջ ունեցած բոլոր միջումն այս  
երեք բաներուս մէջ կը կայանայ, հաւատք, յոյս  
և սէր. «բայց արդ մնան հաւատք, յոյս սէր,  
սուք երեքեան». առ կորնթ. Ա. Գլ. ԺԳ. Հմբ.  
13. —Ուրեմն Քրիստոնէացն պարտական է նախ  
հաւատալ յԱստուած և ՚ի խորհուրդս՝ զոր Աստ-  
ուած յայտնեց. երկրորդ՝ յուսալ յԱստուած և  
այն միջոցներուն՝ որք յուսոյ նեցուկն են. եր-  
րորդ՝ սիրել զԱստուած և բոլոր այն բաները զորս  
սիրել կը հրամայէ Աստուած:

Լ. Ի՞նչ կերպով զմեզ կը մուծանէ եկեղեցին՝  
հաւատոյ վրայ եղած վարդապետութեան մէջ:

Պ. Հաւատոյ հանդանակոյն:

Լ. Որո՞նք են մեր առաջնորդքն՝ յուսոյ վրայ  
եղած վարդապետութեան մէջ:

Պ. Տիրոջ երանութիւնքն ու Տէրունական ա-



դօժքն :

Լ. Ո՞ւր կը գտնուի սիրոյ վրայ եղած նախնական վարդապետութիւնն :

Պ. Աստուածային օրինաց տասը պատուիրա նացը մէջ :



ՄԱՍՆ Ա:

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ



ՀԱԽԱՏՔ

Ի ՎԵՐԱՅ ՀԱՆԳՈՆԱԿԻՆ ՀԱՒՏՏՈՅ



Լ. Ի՞նչ է հաւատոյ հանգանակը :

Պ. Հաւատոյ հանգանակը՝ համառօտ այլ մանրամասն բացատրութիւնն է այն ամենուն՝ որոյ կը պարտաւորին հաւատալ Քրիստոնեայք :

Լ. Այս վարդապետութեան պարունակութիւնքըն որո՞նք են բառ առ բառ :

Պ. Հետեւեալներն են. Ա. Հաւատամ ՚ի մի Աստուած՝ Հայր ամենակալ՝ յԱրարիչն երկնի և երկրի, ամենայն երեւելեաց և աներեւութից :

Բ. Եւ ՚ի մի Տէր Յիսուս Քրիստոս՝ Որդին Աստուծոյ, միածին, ծնեալն ՚ի Հօրէ յառաջ քան զամենայն յաւիտեանս, Լոյս ՚ի լուսոյ, Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ, ծնունդ՝ և ոչ արա-

րած, էակից Հօր, որով ամենայն ինչ եղև :

Գ. Որ յազապս մեր մարդկան, և վասն մերոյ վերկութեան՝ իջեալ յերկնից՝ և մարմնացեալ ՚ի Հոգւոյն Սբբոյ և ՚ի կուսէն Մարիամայ՝ և մարգացաւ :

Դ. Խաչեալ վասն մեր առ Պանտացի Պիղատոսիւ՝ և շարչարեալ և թաղեալ :

Ե. Եւ յարեաւ յաւուր երրորդի ըստ գրոց :

Չ. Եւ ելեալ ՚ի յերկինս, նստի ընդ աջմէ Հօր :

Ի. Եւ միասնգամ գալոյ է փառօք՝ գասել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան :

Բ. Եւ ՚ի Հոգին սուրբ, Տէր և կենդանարար ՚ի Հօրէ բղխեալ, որ ընդ Հօր և ընդ Որդւոյ երկրրպագի և ՚ի միասին փառաւորի որ խօսեցաւ ՚ի ձեռն մարգարեիցն :

Թ. Ի մի, սուրբ, կաթմողիկէ և Առաքելական եկեղեցի :

Ժ. Խոստովանիմ մի Մկրտութիւն՝ ՚ի թողութիւն մերաց :

ԺԱ. Ակն ունիմ ՚ի յարութիւն մեռելոց :

ԺԲ. Եւ կենայն հանդերձեալ յաւիտեանին ամէն :

Լ. Ո՞վ այսպէս շարակարգեց հաւատոյ վարդապետութիւնն :

Պ. Ա. և Բ. Տիեզերական ժողովոյ Հարք :

Լ. Ի՞նչ է Տիեզերական Ժողովը :

Պ. Քրիստոսի կաթմողիկէ եկեղեցւոյ հովուացն ու վարդապետացն աշխարհի ամեն կողմերէն՝ ճշմարիտ վարդապետութեան հաստատութեանն և ըրիստոնէից բարեկարգութեանն համար՝ կարելի եղածին չափ մէկ տեղ ժողովուրի է Տիեզերական Ժողովը :



Հ. Բանի<sup>6</sup> են Տիեզերական Ժողովք:

Պ. Եօթն. Ա. Նիկիոյ, Բ. Կոստանդնուպօլսոյ, Գ. Եփեսոսի, Դ. Բագկեդոնի, Ե. Կոստանդնուպօլսոյ 2. Զ. Կոստանդնուպօլսոյ 3, Է. Նիկիոյ 2:

Հ. Ժողով կազմելու կանոն ուսկից հաստատուած է:

Պ. Առաքելոց առած օրինակին, որք երուսաղիմի մէջ ժողով կազմեցին. աեն Գործ. Գլ. Ժե: Ասի կը հիմնուի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի խօսքերուն վրայ, Յիսուս Քրիստոս եկեղեցւոյ վիճաներուն այնպիսի զօրութիւն ու կարողութիւն կուտայ՝ որ անոնց անհնադանդ դանձուղը կը զրկուի ՚ի շնորհաց՝ իբր հեթմանոս: «Ապա թէ և եկեղեցւոյն ոչ լուիցէ՝ եղիցի քեզ իբրև զհեթմանսն և զմաքսաւոր»: Մատթ. Գլ. ԺԲ. Համար 17:

Հ. Ի՞նչ մասնաւոր նպատակաւ կազմուեցան Ա. և Բ. Տիեզերական Ժողովներն, որոց մէջ հաւատոյ հանդանակը յօրինուեցաւ:

Պ. Ա.ը կազմուեցաւ ՚ի հաստատութիւն ճշմարիտ վարդապետութեան յաղագս որդւոյն Աստուծոյ՝ ընդդէմ մղար վարդապետութեան Արիոսի, որն որ անպարիշա կարծիք մ՝ունէր Աստուծոյ Որդւոյն վրայօք: Բ.ը կազմուեցաւ ՚ի հաստատութիւն վարդապետութեան յաղաղ Ս. Հոգւոյն՝ ընդդէմ Մակեդոնի, որ Հոգւոյն սրբոյ վրայ անպարիշա կարծիք ունէր:

Հ. Ե՞րբ տեղի ունեցան այս Ժողովները:

Պ. Ա.ը՝ Քրիստոսի 325՝ և Բ.ը՝ 381 թուականին:

ՀԱՄԱՏՈՅ ՀԱՆԳԱՆԱԿԻՆ ՅՕԴՈՒԱԾՆԵՐՆ

Հ. Հաւատոյ Տիեզերական հանդանակը աղէկ միաք առնելու համար ի՞նչ կերպ բռնելու եմք:

Պ. Պարտիմք տաններկու յօդուածի բաժնել զոյն և մէկիկ մէկիկ քննել:

Հ. Հաւատոյ հանդանակին իւրաքանչիւր յօդուածն ի՞նչ բանի վրայ կը խօսի:

Պ. Ա. Յօդուածը գլխաւորապէս Աստուծոյ՝ և մասնաւորապէս Ս. Երրորդութեան Ա. անձին Հօր Աստուծոյ՝ և Աստուծոյ վրայ կը խօսի, իբր Արարիչ ամենայնի:

Բ. յօդուածը Ս. Երրորդութեան Բ. անձին Յիսուսի Քրիստոսի Որդւոյ Աստուծոյ վրայ կը խօսի:

Գ. յօդուածը Որդւոյն Աստուծոյ մարմնաւորութեանը վրայ կը խօսի:

Դ.ը՝ Յիսուսի Քրիստոսի չարչարանացն ու մահուանը վրայ:

Ե.ը՝ Յիսուսի յարութեանը վրայ:

Զ.ը՝ Յիսուսի յերկինս համբարձմանը վրայ:

Է.ը՝ Յիսուսի երկրորդ անգամ յաշխարհ գալուն վրայ:

Ը.ը՝ կը խօսի Ս. Երրորդութեան երրորդ անձին վրայ, այսինքն Հոգւոյն սրբոյ վրայօք:

Թ.ը՝ եկեղեցւոյ վրայօք:

Ժ.ը՝ Մկրտութեան վրայ, յորում կ'իմացուին նաեւ միւս խորհուրդներն:

ԺԱ.ը՝ Մեռելոց յարութեանը վրայ:

ԺԲ.ը՝ Յաւիտենական կենաց վրայօք:



Հ. Ի՞նչ ըսել է հաւատալ յԱստուած :

Պ. Աստուծոյ դոյութեանն և Աստուածային յատկութեանց ու ներգործութեանց վրայ կենդանի համոզումն ունենալ և մարդկային սեռին վերկութեանը համար յայտնութեամբ նորա տուած խօսքը բոլորով սրտիւ ընդունիլ, բւել է :

Հ. Արդեօք Աստուածային գրքէն կրնայ ապացուցուիլ թէ ասոնց վրայ կը կայանայ հաւատն առ Աստուած :

Պ. Պօղոս Առաքեալ կը գրէ. « Առանց հաւատոյ՝ անհնար է հաճոյ լինիլ. այլ հաւատալ արժան է այնմ՝ որ մերձեանայ առ Աստուած թէ է Աստուած. և որ խնդրեն զնա՝ լինի պարգեւատու » . Առ Երբ. Գլ. ԺԱ. Համար 6 :

Նոյն առաքեալը՝ քրիստոնէից սրտերուն վրայ հաւատոյ ներգործութիւնը կը նկարագրէ. անոնց համար բրած հետեւեալ աղօթքովն. « Տաղէ ձեզ ըսա մեծութեան փառայ իւրոց, հաստատել զօրութեամբ ՚ի ձեռն Հոգւոյն իւրոց, ՚ի ներքին մարդն. բնակել Քրիստոսի հաւատովք ՚ի սիրտս ձեր » . Առ ՚իբես. Գլ. Գ. Համար 16—17 :

Հ. Ո՞րն է սրտադին հաւատոյ անմիջական ու անփոփոխելի ներգործութիւնը :

Պ. Հաւատոյ խոստովանութիւնն է :

Հ. Ի՞նչ ըսել է հաւատոյ խոստովանութիւնն :

Պ. Բացայայտ կերպով յայտնել թէ պարտիք այնպէս հաւատարմաբար ու հաստատ պահել մեր Ուղղափառ հաւատքն՝ որ ոչ խաբէութիւն, ոչ սպառնալիք, ոչ տանջանք, և ոչ իսկ մահը չեն կարող ուրանալ տալ մեզ այն հաւատքը՝ զոր ու

նիւք առ Աստուածն ճշմարիտ և Տէրն մեր Յիսուս Քրիստոս :

Հ. Ի՞նչ բանի օգտակար է հաւատոյ խոստովանութիւնը :

Պ. Պօղոս առաքեալ կը վկայէ թէ վերկութեան համար օգտակար է. « Սրտիւ հաւատայք յարդարութիւն, և բերանով խոստովանիք ՚ի վերկութիւն » . առ Հռովմ. Գլ. Ժ. Համար 10 :

Հ. Ինչո՞ւ վերկութեան համար Ուղղափառ հաւատոյ խոստովանութիւն այ կը պահանջուի :

Պ. Քանզի՞ ով որ ՚ի պահպանութիւն ժամանակաւոր կենեայ՝ կամ ուրիշ երկրային վայելմանց, կ'ուրանայ Ուղղափառ հաւատոյ խոստովանութիւնը՝ յայտնի կ'ընէ թէ զրկուած է արդէն իւր Փրկչին՝ Աստուծոյ ճշմարիտ հաւատքէն, և ապազայ երանելի կեանքէն :

Հ. Ինչո՞ւ հաւատոյ հանգանակը ՚ի մի Աստուծոյ՝ և ոչ յաստուած հաւատալ կը պատուիրէ :

Պ. Հեթանոսաց մոլար վարդապետութիւնը մերժելու համար, որոնք շատ աստուածոց կը հաւատան՝ և փոխանակ Սրբային՝ արարածոց պաշտօն կը մատուցանեն :

Հ. Սուրբ Գիւրքն ի՞նչ կը վարդապետէ Աստուծոյ միութեանը վրայ :

Պ. Հաւատոյ հանգանակը բառ առ բառ մէջ կը բերէ Պօղոս Առաքելոյն վկայութիւնը, որ կ'ըսէ. « Չիք ոք Աստուած բաց ՚ի միոյն. զի թէ պէտ և իցեն անուանեալ աստուածք՝ եթէ յերկինս և եթէ յերկրի, որպէս և են աստուածք բազումք և տեարք բազումք, այլ մեզ մի է Աստուած Հայր՝ յորմէ ամենայն, և մեք ՚ի նա և մի Տէր Յիսուս Քրիստոս, որով ամենայն, և մեք՝



նովաւ» . Կորն . Ս . Գլ . Բ . Հմբ . 4-5-6 :

Լ . Արդեօք Աստուծոյ այս դոյութիւնը կրնայ հասկցուիլ :

Պ . Ո՛չ . ըստ որում ամեն մարդկային ու նոյն խի հրեշտակային գիտութենէ վեր է :

Լ . Այս բանիս վրայօք ի՞նչ կը վարդապետէ սուրբ Գիրք :

Պ . Պօղոս Առաքեալ կ'ըսէ . « Աստուած՝ բնական ՚ի լոյս անմատոյց . զոր ոչ ոք ետես ՚ի մարդկանէ , և ոչ տեսանել կարող է » . Սա Տիմոթ . Ս . Գլ . 2 . Հմբ . 16 :

Լ . Աստուածային յայտնութենէն՝ Աստուծոյ դոյութեանն ու գլխաւոր յատկութեանցը վրայ ի՞նչ գաղափար կրնանք առնուիլ :

Պ . Աստուած . Հոգի , յախտենական , ամենաբարի , ամենազէտ , արդար , ամենազօր , աննորեք ներկայ . անփոփոխելի , ինքնագոյ , աննաերանեալ է :

Լ . Այս ամենը հաստատէ սուրբ Գրքէն :

Պ . Յիսուս ըսաւ . « Հոգի է Աստուած » . Յովհ . Գլ . Գ . Հմբ . 24 : Աստուծոյ յախտենականութեան համար կ'ըսէ Դաւիթ . « Մինչչեւ լերինք հաստատեալ էին , մինչչեւ ստեղծեալ զերկիր և զամենայն տիեզերս , և յախտենից մինչև յախտեանս դու ես » . Սաղմ . 2Թ . Հմբ . 2 :

Յայտնութեան մէջ հետեւեալ փառաբանութիւնը կը կարդանք . « Սուրբ , Սուրբ , Սուրբ Տէր Աստուած ամենակալ , որ էն և ես և որ դալց ես » . Յայտն . Գլ . Գ . Հմբ . 8 :

Պօղոս Առաքեալ կ'ըսէ թէ՛ Աւետարանն ըստ հրամանի մշտնջենաւորին Աստուծոյ կ'աւետէ . առ Հռովմ . Գլ . ԺԶ . Հմբ . 26 : Աստուծոյ բարու

թեանը վրայօք Յիսուս ըսաւ . « Ոչ ոք է բարի , այլ Աստուած միայն » . Մատթ . Գլ . ԺԹ . Հմբ . 17 : Եւ Յովհաննէս առաքեալ կ'ըսէ . « Աստուած սէր է » . Թուղթ Յովհ . Ս . Գլ . Գ . Հմբ . 16 : Եւ Դաւիթ կը սաղմոսէ . « Գթամ ողորմած է Տէր , երկայնամիտ և բազումուղորմ : Քաղցր է Տէր առ ամենեւեան և զթութիւն նորա ՚ի վերայ ամենայն արարածոց իւրոց » . Սաղմ . ՃԹԳ . Հմբ . 8-9 :

Աստուծոյ ամենագիտութեան վրայօք Յովհաննէս Առաքեալ կ'ըսէ . « Աստուած մեծ է քան զփրստ մեր և զիտէ գամենոյն » . Յովհ . Թուղթ Ս . Գլ . Գ . Հմբ . 20 : Պօղոս Առաքեալ կը գոչէ « Ո՛վ խորք մեծութեան և իմաստութեան և զիտութեանն Աստուծոյ . սրբէս առանց քննելոյ եւ դատաստանք նորա , և առանց զննելոյ եւ հանապարհք նորա » . առ Հռովմ . Գլ . ԺԱ . Հմբ . 33 : Աստուծոյ արդարութեանը վրայօք Դաւիթ կը սաղմոսերգէ . « Արդար է Տէր՝ զարդարութիւն սիրէ , զուզութիւն տեսանեն երեսք նորա » . Սաղմ . Ժ . Հմբ . 7 : Պօղոս Առաքեալ կ'ըսէ . « Աստուած հատուցանէ իւրաքանչիւր ըստ գործս իւրեանց , և ոչ է ակնառութիւն առաջի Աստուծոյ » . Առ Հռովմ . Գլ . Բ . Հմբ . 6-11 : Աստուծոյ Ամենազօրութեանը վրայօք կ'ըսէ Դաւիթ . « Նա աւաց՝ և եղեն , ինքն հրամայեաց՝ և հաստատեցան » . Սաղմ . 1Բ . Հմբ . 9 : Աւետարանին մէջ Հրեշտակագեար կ'ըսէ . « Ոչ տկարացի առ յԱստուծոյ ամենայն բան » . Դուկ . Գլ . Ա . Հմբ . 37 . Դաւիթ այսպէս կը նկարագրէ Աստուծոյ ամեն տեղ ըլլալը . « Յո՞ երթայց ես յողւոյ քումմէ , կամ յերեսաց քոց ես յո՞ վախտայց : Թէ՛ էլանեմ յերկինս՝ դու անդ ես , թէ՛ իջանեմ ՚ի դժոխս՝ և



անգր մօտ ես : Թէ առկց զԹեւս իմ ընդ առաւօտս , և բնակեցայց յերզրս ծովու , սակայն և անդ ձեռն քո առաջնորդեսցէ ինձ , և աջ քո ընկալցի զիս : Ասացի , խաւար ուրեմն արդեօք ծածկեաց զիս , կամ գիշեր փոխանակ լուսոյ փափկութեան իմոյ : Խաւարն՝ ՚ի քէն ոչ խաւարանայ , և գիշերն որպէս օր լուսաւոր եղիցի , և խաւար նորս որպէս զլոյս նորս » . Սաղմ . ՃԼԲ . Հմբ . 7-12 : Յակովբ Առաքեալ կը գրէ . « Ի Հայրն լուսոյ չիք փոփոխումն և կամ շրջելոյ ստուեր » . Յակովբ Ա . Հմբ . 17 : Պօղոս Առաքեալ կ'ըսէ . « Աստուած ոչ ՚ի ձեռաց մարդկան պաշտի իբրեւ կարօտ իմիքնա տայ ամենայնի կեանս և շունչ և զամենայն ինչ » . Գործ . Գլ ԺԷ . Հմբ . 23 : Այս Առաքեալը կ'անուանէ զԱստուած՝ Երանելի , և միայն հօր , Թագաւոր Թագաւորաց , և Տէր Տէրանց » . առ Տիմոթ . Ա . Գլ 2 . Հմբ . 13 :

Լ . Եթէ հոգի է Աստուած՝ ուրեմն ի՞նչպէս սուրբ Գիրքն անոր մարմնական անդամներ կուտայ , զոր օրինակ սիրտ , աչք , ախանջ և ձեռք :

Պ . Սուրբ Գիրքն ասով մարդոց սովորական խօսուածքին հետ կը համաձայնի : Այս անդամներն իրենց հոգեւոր նշանակութիւնն ունին , զոր օրինակ՝ Աստուծոյ սիրտն իւր բարութիւնն ու սէրը կը նշանակէ , աչքն ու ախանջը՝ նորս ամենագէտ ըլլալը կը յայտնեն , ձեռքերն՝ Աստուածային ամենակարողութիւնը կը նշանակեն :

Լ . Եթէ Աստուած ամեն տեղ է՝ ուրեմն ինչու կ'ըսեն թէ յերկինս կամ ՚ի տաճարս է :

Պ . Ամեն տեղ է Աստուած , այլ մասնաւորապէս յերկինս է իւր ներկայութիւնն՝ յաւիտենական փառօք երեւելով Երանելի Հոգիներու : Իսկ տաճարաց մէջ շնորհօք ու խորհրդապէս կը ներկայանայ , ուր իր ներկայութիւնը բարեպաշտաբար կ'ըզան հաւատացեալք , երբեմն ալ մասնաւոր նշաններով կ'իմանան : Աստի կ'ըսէ Յիսուս Քրիստոս . « Զի ուր իցին երկու կամ երեք ժողովալ յանուն իմ , անց եմ ես ՚ի մէջ նոցա » . Մատթ . Գլ ԺԲ . Հմբ . 20 :

Լ . Հաւատոյ հանգանակին « Հաւատամ ՚ի մի Աստուած Հայր » խօսքերն որով կը վերաբերէր : Պ . Սրբոյ Երրորդութեան խորհրդոյն կը վերաբերին . ըստ որում մի է Աստուած էութեամբ , այլ յերկու անձինս , Հայր , Որդի և Հոգին սուրբ , որոց երեքն ալ համազոյ և անբաժանելի են :

Լ . Սուրբ Գիրքն ի՞նչ կ'ըսէ սրբոյ երրորդութեան վրայ :

Պ . Նոր կտակարանէն ասոր վրայ բերուած զըլխաւոր վկայութիւնը հետեւեալն է . « Գնացէք այսուհետեւ աշակերտեցէք զամենայն հեթանոսս , մկրտեցէք զնոսս յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ » . Մատթ . Գլ ԻԲ . Հմբ . 19 : Սուրբ երեքին են որ վկայեն յերկինս , Հայր , Բանն և Հոգին սուրբ , և երեքին մի են » . Թուղթ Յովն . Ա . Գլ Ե . Հմբ . 7 :

Լ . Արդեօք Հին կտակարանն ալ սուրբ երրորդութեան վրայ բան մը կ'ըսէ :

Պ . Կ'ըսէ , բայց ոչ այնչափ բացայայտ . « Բանի Տեառն հաստատեցան երկինք , և շնչով բերանոյ նորս ամենայն զօրութիւն նոցա » : Սաղմ . ԻԲ . Հմբ . 6 : « Սուրբ , Սուրբ , Սուրբ Տէր Սարաւովթ , լի է ամենայն երկիր փառօք նորս » . Երայեայ Զ . 3 :

Լ . Ի՞նչպէս կ'ըլլայ մի Աստուած յերկու ան



ձինս :

Պ. Աստուածութեան այս խորհուրդը մեք չեմք հրնար ըմբռնել, այլ ասոր կը հաւատամք՝ ըստ անխորհրդի վկայութեան Աստուծոյ խօսքին, « Նոյնպէս և ոչ զԱստուծոյն սք գիտէ, եթէ ոչ Հոգին Աստուծոյ » . Ա. առ կորթ . Գլ. Բ. Հմբ. 11 :

Լ. Սուրբ Երրորդութեան անձանց տարբերութիւնն ո՞րն է :

Պ. Հայրն Աստուած՝ ոչ ուրիշէ մը ծնեալ է և ոչ բղխեալ . Որդին Աստուծոյ՝ յառաջ քան զյաւիտեանս ծնեալ է 'ի Հօրէ . Հոգին սուրբ բղխեալ է 'ի Հօրէ՝ յառաջ քան զյաւիտեանս :

Լ. Ամենասուրբ Երրորդութեան այս երեք անձերն արդեօք հաւասարապատիւ են :

Պ. Բարբառն հաւասար են իրենց աստուածային յարգն ու արժանիքը . Ինչպէս որ Հայրն Աստուած ճշմարիտ է . նոյնպէս ճշմարիտ է նաեւ Որդին Աստուած և Հոգին սուրբ Աստուած, այլ այնպէս որ յերիս անձինս մի է և միակ՝ երեքանձն Աստուած :

Լ. Ինչո՞ւ Ամենակալ կը կոչուի Աստուած :

Պ. Իբր ամեն բան իւր կարողութեամբն ու կամօքը կառավարող :

Լ. Ի՞նչ կը նշանակեն հաւատոյ հանգանակին սա խօսքերը . « Արարիչ երկնի և երկրի, ամենայն երեւելեաց և աներեւութից » :

Պ. կը նշանակէ թէ Աստուած ստեղծեց ամեն բան, և թէ առանց Աստուծոյ բան չըլլար :

Լ. Այս խօսքերն արդեօք սուրբ Գրքէն առնուեցան :

Պ. Այո՛ . Ենեդոց գիրքն այսպէս կրտսի . « Ի սկըզբանէ արար Աստուած զերկին և զերկիր » .

Պօղոս Առաքեալն ալ կ'ըսէ Աստուածորդւոյն վերայօք . « Նովա հաստատեցաւ ամենայն, որ ինչ յերկին՝ և որ ինչ յերկրի, որ երեւին՝ և որ ոչն երեւին, եթէ ավտօք եթէ Տէրութիւնք, եթէ պետութիւնք, եթէ իշխանութիւնք . ամենայն ինչ նովա՝ և 'ի նոյն հաստատեցաւ » . առ կողմացիս Գլ. Ա. Հմբ. 16 :

Լ. Հաւատոյ հանգ անակին մէջ աներեւոյթ կուռւածներն ի՞նչպէս կ'իմացուին :

Պ. Աներեւոյթ հոգեւոր աշխարհ կ'իմացուի, որու կը վերաբերին հրեշտակք :

Լ. Ի՞նչ են հրեշտակք :

Պ. Անմարմին հոգիներ, որք միաք, կամք ու զօրութիւն ունին :

Լ. Ինչո՞ւ հրեշտակ ("Աγγελοι") կոչուեցան :

Պ. Քանզի զանոնք Աստուած կը խրկէ՝ իւր կամքը ծանուցանելու : Այսպէս Գաբրիէլ խորհուրդեալ՝ որպէս զի Փրկչին յղութիւնն աւետէ ամենասուրբ կուսին Մարիամոյ :

Լ. Որո՞նք առաջ ստեղծուեցան, երեւելիք թէ աներեւոյթ :

Պ. Նախ՝ աներեւոյթք հրեշտակք ստեղծուեցան՝ և ապա երեւելիք և մարդիկ : Տէ՛ս Ուղղափառ խոստովանութեան Մասն Ա. Հարց 18 :

Լ. Արդեօք ասոր վրայ վկայութիւն մը կայ սուրբ Գրոց մէջ :

Պ. Յոբայ գրքին մէջ՝ աշխարհի ստեղծման համար կ'ըսէ Աստուած . « Ո՞ր է որ արկ զվէմն անկեան 'ի դմա : Յորժամ եղեն աստեղք ծերք, ամենայն հրեշտակք օրհնեցին զիս մեծածայն » . Յօբ . Գլ. ԼԲ. Հմբ. 6—7 :

Լ. Հրեշտակաց Պահապան անուանակոչութիւնն



ուսկինց առնուեցաւ :

Պ. Սուրբ Գրոց հետեւեալ խօսքէն . « Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո , 'ի պահել գրեզ յամենայն ճանապարհս քո » . Մալմ . Գ . Հմր . 11 :

Լ. Արդեօք ամեն մարդ պահապան հրեշտակունի :

Պ. Անշուշտ . այս բանիս վրայ կը տեղեկացունէ մեզ Յիսուսի հետեւեալ խօսքն . « Ձգոյշ լեբուք՝ մի արհամարիցէք զմի 'ի փոքրկանցս յայսցանէ . ասեմ ձեզ , զի հրեշտակք նոցա յերկինս՝ հանապաղ տեսանեն զերեսս հօր իմոյ՝ որ յերկինս է » . Մատթ . Գլ . ԺԲ . Հմր . 10 :

Լ. Արդեօք բոլոր հրեշտակները բարի ու բարեգործ են :

Պ. Ո՛չ . չար հրեշտակներ ալ կան , որք , կը կոչուին Սատանայ :

Լ. Ինչո՞ւ չար են :

Պ. Բարի ստեղծուեցան , այլ առ Սատուած ունեցած կատարեալ հպատակութեան պարտքերնին զանց առին յետոյ , և այս կերպով չեղբջան անկէ , և անձնասիրութեան , գուռզութեան ու չարութեան մէջ ինկան : Բոտ վկայութեան Յուդա Առաքելոյ՝ ասոնք են . « Հրեշտակք՝ որ ոչ պահեցին զիրեանց իշխանութիւնն , այլ թողին զիրեանց բնակութիւնն » . Թուղթ Յուդա . Հմր . 6 :

Լ. Ի՞նչ կը նշանակէ Սատանայ (Διάβολος) բառը :

Պ. կը նշանակէ հակառակորդ , բանասարկու և գրգռիչ :

Լ. Ինչո՞ւ չար հրեշտակք սատանայ կը կոչուին : այսինքն բանասարկու և գրգռիչ :

Պ. Քանցի չարանալով զմարդիկ խաբել կը ճրգնին , և անոնց թիւր դալափարներ ու չար վափազներ կը ներշնչեն = Ասոր համար Յիսուս անհրճազանգ Հրէից ըսաւ . « Գուք՝ 'ի հօրէ սատանայէ էք , և զցանկութիւնս հօրն ձերոց կամիր առնել . զի նա մարդասպան էր 'ի սկզբանէ , և 'ի ճշմարտութեան ոչ եկաց . զի ոչ գոյ ճըշմարտութիւն 'ի նմա . յորժամ խօսիցի՞ սուս յիւրոց անտի խօսի . զի սուս է և հայր նորա » . Յովհ . Գլ . Ը . Հ . 44 :

Լ. Սուրբ գիրքն ի՞նչ կը յայանէ մեզ աշխարհի ստեղծմանը վրայօք :

Պ. Նախ յոչնչէ ստեղծեց Սատուած զերկինս և զերկիր . և երկիր՝ անձեւ և անկաղմ էր . յետոյ տակաւ առ տակաւ կաղմեց զայն : Առաջին օրն ստեղծեց լոյսն , երկրորդ օրն՝ հաստատութիւնն , որ է մեր տեսած երկինքն . երրորդ օրն՝ երկրի վրայի ջրոց հաւաքումը , ցամաքն ու բոյսերը , չորրորդ օրն՝ արեւը , լուսինն ու աստղերն . հինգերորդ օրը՝ ձուկերն ու թռչունները . վեցերորդ օրն՝ ցամաքի վրայ գանուած չորքոտանիներն , ու ամենէն վերջը՝ մարդս , որով կատարեցաւ արարչագործութիւնն . եօթներորդ օրն՝ իւր ամեն գործերէն հանգչեցաւ Սատուած , ուսկինց՝ եօթներորդ օրը Շաբաթ կոչուեցաւ , որ եբբայեցերէն հանդիստ կը նշանակէ : Տես Մին . Գլ . Բ . Հմր . 2 :

Լ. Այս երեւելի արարածներն այնպէ՞ս ստեղծուեցան ինչպէս որ կը տեսնուք զանոնք այսօր :

Պ. Ո՛չ . Արարչագործութեան ատեն ամեն բան խիստ բարի էր , այսինքն՝ մաքուր , վայելուչ ու անվնաս :



Լ. Մարգուս ստեղծմանը վրայօք մանաւորինչ բան կպատմուի :

Պ. Աստուած այսինքն Ամենասուրբ երբոր դու թիւնն ըսաւ . « Արասցուք մարդ՝ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան » . Ծն . Գլ . Ա . Հ . 26 : Եւ Աստուած՝ Ադամայ՝ առաջին մարդոյն մարմինը հողէ ստեղծեց , անոր երեսք կենդանի շունչ փչեց , զԱդամ՝ Իրախաին մէջ դրաւ , տուաւ անոր յուտեամ՝ Իրախաին բոլոր ծառերուն պտուղները՝ կենաց ծառոյն պտուղներէն դատ , ՚ի վերջոյ՝ Ադամայ քնացած տտենն անոր կողերէն մին առնելով՝ անով ստեղծեց առաջին կինն , Եւան : Տե՛ս Ծնն . Գլ . Բ . Հ . 22 :

Լ. Ի պատկեր Աստուծոյ ի՞նչ կը նշանակէ :

Պ. Ըստ վկայութեան Պօղոս Առաքելոյ՝ կը նշանակէ՝ ճշմարտութիւն , արդարութիւն ու սքրբութիւն . Առ Եփեսացիս . Գլ . Գ . Հ . 24 :

Լ. Ի՞նչ է շունչ կենդանի :

Պ. Հոգի , որ է անմահ հակ :

Լ. Ի՞նչ է դրախտ :

Պ. Իրախտ ( Παράδεισος ) բառը կը նշանակէ պարտէզ . այսպէս կոչուեցաւ նախաստեղծ մարդոյն բազմազուարճ և երանական բնակութիւնն , որ ըստ նկարագրութեան Ծննդոց գրքին՝ պարտէզի կը նմանէր :

Լ. Իրախտը նախաստեղծից համար , հողերու՞ր չէ՞նէ մարմնաւոր երջանկութիւն մ'էր :

Պ. Մարմնոյ համար մարմնաւոր երջանկութիւն էր ըստ որում տեսանելի և երանաւէտ բընակարան մ'էր . հողոյ համար ալ հողերուր երջանկութիւն էր . ըստ որում մարդս՝ Աստուծոյ հետ հաղորդակցութիւն ունենալու վիճակի մէջ

էր շնորհօք : Տե՛ս Գրիգ . Աստուածաբանի ճառ . ԼԸ և ԽԲ . Յովհ . Դամասկ . Աստուածաբանութիւն . Գիրք Բ . Գ . ԺԲ . Հմբ . 3 :

Լ. Ի՞նչ է ծառ կենաց :

Պ. Ծառ մը՝ որուն պտուղն ուտող մարդն ո՛չ հիւանդութիւն կ'ունենար և ո՛չ մահ :

Լ. Ինչո՞ւ Ադամայ կողէն ստեղծուեցաւ Էւան :

Պ. Արպէս զի բոլոր մարդկային սեռն՝ իր ծագմանն համեմատ մի մարմին ըլլաց , և մարդիկ բնագէտ զիրար սիրեն ու պահպանեն :

Լ. Ի՞նչ պատճառաւ մարդս ստեղծուեցաւ :

Պ. ՉԱստուած ճանչելու , սիրելու և փառաւորելու և ասով յախտեան երջանիկ ըլլալու համար :

Լ. Արդեօք հաւատոյ վարդապետութեան մէջ մանաւոր անուն չունի՞ Աստուծոյ՝ մարդս յախտեան երջանկացունելու համար ունեցած կամքը :

Պ. Անի , և է Աստուածային Նախասահմանութիւն (Θεία Πρόνοια) :

Լ. Մարդուս երանութեանն համար Աստուծոյ ունեցած Նախասահմանութիւնը միթէ անփոփոխ մնացած կ'ըլլայ՝ քանի որ այսօր կը տեսնեմք թէ մարդս երջանիկ չէ :

Պ. Անփոփոխ կը մնայ , ըստ որում Աստուած՝ իր կանխագիտութեամբն ու անհուն զթութեամբը՝ երջանկութեան ճամբէն դուրս ելնելիք մարդոց նկատմամբ , իր Միածին Արդեոյն Յիսուսի Իրիստոսի ձեռքով փրկութիւն սահմանեց : « Ընտրեանց զմեզ նովաւ » , յառանջ քան զլինելն աշխարհի » կ'ըսէ Պօղոս Առաքելալ : Առ Եփեսացիս . Գլ . Գ . Հմբ . 4 :

Լ. Ի՞նչպէս կ'ըմբռնուի Աստուածոյին Նախա-



առհմանութիւնը՝ թէ՛ ընդհանուր մարդոց՝ և թէ՛ ՚ի մասնաւորի՝ մեր իւրաքանչիւրին նկատմամբ ։

Պ. Աստուած կամեցաւ բոլոր մարդոց պարգեւել, և ստուգիւ պարգեւեց չնորհ, ք և սպաշույ միջոցներ՝ որք զմեզ երանութեան կառաջնորդեն ։ Բայց անոնք որ Աստուծոյ պարգեւած չնորհքը սրանց կ'ընդունին՝ լաւ դորձած ելով, յԱստուածուստ արուած փրկութեան միջոցները, և կը հետեւին Աստուծոյ զմեզ յերանութիւն առաջնորդելու համար ցոյց տուած ճամբուն, անոնք կ'ըսեմք՝ նախասահմանեալ են յԱստուծոյ՝ երանութիւն ստանալու ։

Լ. Այս բանիս վրայօք ի՞նչ կ'ըսէ Աստուծոյ խօսքը ։

Պ. « Զորս յառաջն ճանաչէր, յառաջագոյն և հրաւիրեաց » ։ Առ. Հռոմ. Գլ. Ը. Հմբ. 29 ։

Լ. Ուղղափառ եկեղեցին ի՞նչ կ'ըսէ ասոր վրայ ։

Պ. Արեւելեան Հարց հաւատոյ բացատրութեանը մէջ այսպէս կը մեկնուի. « Որովհետեւ ինքը (Աստուած) նախատեսեց թէ ոմանք լաւ՝ ոմանք գէշ պիտի գործածեն իրենց անձնիշխանութիւնը՝ ուստի զոմանս փառաց նախասահմանեց՝ զոմանս ալ դատապարտեց. » Յօդ. Գ ։

Լ. Աշխարհի և մարդու արտրչազորութենէ ետքը՝ աշխարհի և մասնաւորապէս մարդու նըկատմամբ ոյն է աստուածային անմիջական ներգործութիւնն ։

Պ. Աստուծոյ նախախնամութիւնն է ։

Լ. Ի՞նչ է Աստուածային նախախնամութիւնը ։

Պ. Յարատեւ ներգործութիւն աստուածային Ամենակարողութեան, ամենագիտութեան և Բա-

րութեան, որով Աստուած արարածոց գոյութիւնըն ու յատկութիւնները կը պահպանէ, կատարեալ բարութեամբ կ'առաջնորդէ անոնց, բարիներուն կ'օգնէ, և բարիէն զարտուցմամբ յառաջ եկած չարիքը կամ կը կտրէ կը նետէ և կամ կ'ուղղէ, և կը դարձունէ գէտ ՚ի բարի վախճան ։

Լ. Սուրբ Գիրքն ի՞նչ կ'ըսէ Աստուածային նախախնամութեան վրայօք ։

Պ. Յիսուս Քրիստոս կ'ըսէ. « Հայեցայնք ՚ի թաշուես երկնից՝ զի ոչ վարեն և ոչ հնձեն, և ոչ ժողովեն ՚ի շեմմարանս. և հայրն ձեր երկնաւոր կերակրէ զնոսա. ոչ ապաքին գուք առաւել էք քան զնոսա. » Մատթ. Գլ. 2. Հմբ. 26 ։ Այս վկայութեան մէջ յայնի կ'երեւի՝ արարածոց վրայ Աստուծոյ ունեցած ընդհանուր նախախնամութիւնն՝ ինչպէս նաեւ մարդոց վրայ ունեցած մասնաւոր խնամքը ։ 90. Սաղմոսը Աստուծոյ՝ մարդուն համար ունեցած մասնաւոր ու բաղմազդի նախախնամութեան մանրամասն պատմութիւնը կ'ընէ ։

### ՅՕԴՈՒՍԾ Բ.

Լ. Ի՞նչպէս կը մեկնուին Յիսուս Քրիստոս, Որդի Աստուծոյ անուանակոչութիւններն ։

Պ. Որդի Աստուծոյ կը կոչուի Սբ. այ երբորդութեան երկրորդ Անձը՝ ըստ իւր Աստուածութեան ։ Սա է որ կոչեցաւ Յիսուս՝ երբ իբր մարդ ծնաւ երկրես վրայ ։ Մարդարէք Քրիստոս կոչեցին զոյն՝ երբ անոր աշխարհ գալը կ'ակնկալէին ։

Լ. Ի՞նչ կը նշանակէ Յիսուս անունը ։

Պ. Փրկիչ ։



Ը. Ո՞ր Յիսուս անունը դրաւ անոր :  
 Պ. Գարբէլէ Հրեշտակը :  
 Ը. Ինչո՞ւ Աստուծոյ Արդւոյն սոյ անունը առին՝  
 երբ ծնաւ երկրիս վրայ :  
 Պ. Վասն զի մարդկային ազգը վրկելու համար  
 ծնաւ :  
 Ը. Ի՞նչ կը նշանակէ Քրիստոս (Χριστός) բառը :  
 Պ. կը նշանակէ Օծեալ :  
 Ը. Օծեալ անունն ո՞ւր կից յառաջ եկաւ :  
 Պ. Հոգւոյն Սրբոյ Հնորհաց օրինակ եղած սուրբ  
 Միւռոնիաւ օծուեցին :  
 Ը. Միայն Յիսուս կը կոչուի Օծեալ :  
 Պ. Ա՞յ. Օծեալ կը կոչուէին նաեւ հին ասեմի  
 թագաւորք, Գահանայապետք ու Մարգարէք :  
 Ը. Ինչո՞ւ ուրեմն Յիսուս, Արդին Աստուծոյ,  
 Օծեալ կ'անուանուի :  
 Պ. Քանզի՛ Հոգւոյն Սրբոյ Հնորհքներն իւր  
 մարդկութեանը անչափապէս արուեցան . այնպէս  
 որ դերագրական կերպով իրեն կը վերաբերին  
 Մարգարէի անտախտութիւնը, Գահանայապետի սրբ-  
 բութիւնն ու թագաւորի կարողութիւնն :  
 Ը. Ի՞նչ մտքով Յիսուս Քրիստոս կը կոչուի  
 Տէր (Κύριος) :  
 Պ. Ըստ որում Աստուած ճշմարիտ . Տէր անու-  
 նը մին է աստուածային անուանակալութիւննե-  
 րէն :  
 Ը. Սուրբ Գիրքն ի՞նչ կ'ըսէ Յիսուսի Աստուա-  
 ծութեանը վրայօք :  
 Պ. « Ի սկզբանէ էր բանն , և բանն էր առ Աստ-  
 ուած , և Աստուած էր բանն . » Յովհ. Գլ. Ա. Հ. 1 :  
 Ը. Ինչո՞ւ Յիսուս Քրիստոս կը կոչուի Միաժին  
 Արդին Աստուծոյ :

Պ. Ասի կ'իմացունէ թէ ինքն է միայն՝ Արդի  
 Աստուծոյ, ծնեալ Աստուծոյ և Հօր էութենէն ,  
 և հետեւարար իւր էութենէն ընդ Աստուծոյ և  
 ընդ Հօր , որով անհամեմատարար վեր է Սուրբ  
 Հրեշտակներէն , և սուրբ մարդոցմէ , որոնք ըստ  
 Հնորհաց կը կոչուին Արդիք Աստուծոյ : Տես Յովհ.  
 Գլ. Ա. Հմբ. 12 :  
 Ը. Սուրբ Գիրքը Միաժին կ'անուանէ՞ զՅիսուս  
 Քրիստոս :  
 Պ. Այո՛ . Յովհաննէս Աւետարանիչ կ'ըսէ . « Եւ-  
 բանն մարմին եղեւ , և բնակեաց 'ի մեզ , (և տե-  
 սաք զփառս նորա՝ զփառս իբրեւ զմիածնի առ  
 'ի Հօրէ) , լի շնորհօք և ճշմարտութեամբ . » Յովհ.  
 Գլ. Ա. Հմբ. 14 . « զԱստուած ոչ սքեաես երբէք ,  
 բայց միաժինն որդի՛ որ է 'ի ծոց Հօր՝ նա պատ-  
 մեաց . » Հ. 18 :  
 Ը. Ինչո՞ւ հաւատոյ Հանդանակին մէջ Աստ-  
 ուածորդւոյն վրայօք ըսուեցաւ թէ 'ի Հօրէ  
 ծնաւ :  
 Պ. Յոյց ապու համար այն անձնական յատկու-  
 թիւնն՝ որով ինքը Սուրբ Երրորդութեան միւս  
 անձերէն կը տարբերի :  
 Ը. Ինչո՞ւ կ'ըսուի թէ յառաջ քան զամենայն  
 յաւիտեանս ծնաւ :  
 Պ. Մի գուցէ կարծուի թէ էր երբեմն յոր-  
 ժամ չկար նա , կամ՝ ուրիշ կերպ ըսելով՝ առով  
 կ'իմանանք թէ Յիսուս յաւիտեանական Արդի Աս-  
 տուծոյէ . Ինչպէս Հայրը՝ յաւիտեանական Աստ-  
 ուած է :  
 Ը. Հաւատոյ Հանդանակին մէջի « ըյս 'ի Լու-  
 սոյ » բառերն ի՞նչ կը նշանակեն :  
 Պ. Մեր տեսած լուսոյն նման՝ այս բառերը բա-



ւական կը յայտնեն Որդւոյն Աստուծոյ անհասանելի ծնունդն 'ի Հօրէ : Արեւուն նայելով՝ լոյս կը տեսնեմք . և այս լոյսէն կը ծնանի Լոյս մը որ բոլոր արեգական ներքեւ գանուած իրերը կը լուստորէ . բայց՝ թէ՛ այս թէ՛ այն լոյսը մի, անբաժանելի ու համարուն են : Նմանապէս Հայր Աստուած ալ յաւիտենական լոյս է . (Տես Թղթ. Ա. Յ. վ՛նանու Գլ. Ա. Հմբ. 5) : Իրմէ կը ծնի Որդին Աստուծոյ, որ հաւասարապէս յաւիտենական լոյս է . այլ սակայն Հայրն Աստուած և Որդին Աստուծոյ մի են և նոյն լոյս յաւիտենական, անբաժանելի և նոյն Աստուածային բնութենէն են :

Հ. Հաւատոյ Հանգանակին « Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ » բառերուն զօրութիւնն ի՞նչ է :

Պ. Կ'իմացունէ թէ Աստուծոյ որդին ճշմարտապէս Աստուած կը կոչուի, ինչպէս նաեւ թէ՛ Հայրն Աստուած է :

Հ. Այս խօսքերը Սուրբ Գրքէն առնուեցան :

Պ. Յովհաննէս Աստուածարանին հետեւեալ խօսքերէն առնուեցան . « Էւ դիտեմք եթէ Որդին Աստուծոյ եկն, և ես մեզ միտս, զի ծանկցուք զճշմարիտն Աստուած՝ և եմք 'ի ճշմարտին որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի . զի նա է ճշմարիտ Աստուած՝ և կեանք յաւիտենականք . » Թղթ. Յովհ. Ա. Գլ. Ե. Հմբ. 20 :

Հ. Ինչո՞ւ հաւատոյ Հանգանակին մէջ Աստուծոյ որդւոյն համար « Ծնունդ և ոչ արարած » գրուած է :

Պ. Ի յանդիմանութիւն Արիստի գրուեցաւ, որն որ ամպարշապար կը քարոզէր թէ՛ Որդին Աստուծոյ արարած է :

Հ. Ի՞նչ կ'իմացուի « Էական Հօր » բառերով :  
 Պ. Կ'իմացուի թէ՛ Աստուծոյ Որդին՝ Հօր Աստուծոյ հետ մի և նոյն Աստուածային գոյութիւնն ունին :

Հ. Սուրբ Գիրքն ասոր վրայ ի՞նչ կ'ըսէ :  
 Պ. Յիսուս թէ՛ իր և թէ՛ Հօր Աստուծոյ համար այսպէս կ'ըսէ . « Էս և հայր իմ մի եմք » Յովհ. Գլ. Ժ. Հմբ. 30 :

Հ. Ի՞նչ կը նշանակեն հաւատոյ Հանգանակին « որով ամենայն ինչ եղեւ » խօսքերը :

Պ. Կը նշանակեն թէ՛ Հայրն ամեն բան իւր յաւիտենական իմաստութեամբն ու յաւիտենական բանիւն կամ որդւոցն ստեղծեց : « Ամենայն ինչ՝ նովաւ եղեւ . և առանց նորա եղեւ և ոչ ինչ՝ որ ինչ եղեւն . » Յովհ. Գլ. Ա. Հմբ. 3 :

**ՅՕԴՈՒՍԾ Գ.**

Հ. Որո՞ւ համար « իջեալ յերկնից » կ'ըսէ հաւատոյ Հանգանակը :

Պ. Աստուծոյ որդւոյն համար :

Հ. Ի՞նչպէս երկինքէն իջաւ, քանի որ իւր Աստուած ամեն տեղ է :

Պ. Ուղիղ կ'ըսես թէ ամեն տեղ է . ուստի միշտ երկնից մէջ ալ՝ երկրի վրայ ալ կը գտնուի . այլ սակայն 'ի վաղուց անտի երկրի վրայ անտեսանելի էր . իսկ յետոյ մարմնով երեւեցաւ . և ահա այս նշանակութեամբ լուսեցաւ թէ երկինքէն իջաւ :

Հ. Այս բանիս վրայօք ի՞նչ կ'ըսէ Սուրբ Գիրքը :

Պ. Ահա բուն իսկ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի խօսքերն . « Ոչ ոք ել յերկինս՝ եթէ ոչ



որ էջն յերկնից, որդին մարդոյ, որ էն յերկինս . »  
Յովհ. Կը Զ. Հմր. 13 :

Լ. Ինչո՞ւ Աստուծոյ որդին իջաւ յերկնից :

Պ. Մեզ՝ մարդոցս՝ և մեր վրկութեանն համար, ինչպէս որ կը յայտնէ հաւատոյ Հանգաւնակն :

Լ. Ի՞նչ կը նշանակէ թէ որդին Աստուծոյ մեզ համար իջաւ յերկնից :

Պ. Կը նշանակէ թէ աշխարհ եկաւ ոչ միայն մէկ ազգի մը կամ մէկ քանի անհատներու համար՝ այլ ընդ հանրապէս մեզ՝ բոլոր մարդոցս համար :

Լ. Ո՞ր չարիքներէն զմարդս աղատելու համար աշխարհ եկաւ որդին Աստուծոյ :

Պ. Մեղքէ, անէծքէ և մահէ :

Լ. Ի՞նչ է մեղքը :

Պ. Զանցաւութիւն օրինաց : « Մեղքն անօրէնութիւն է . » Յովհ. Թղթ. Ա. Գլ. Գ. Հմր. 8 :

Լ. Աստուած անմեղանչական է, մարդս ալ ՚ի պատկեր Աստուծոյ ստեղծուեցաւ . ուրեմն մեղքը ուսկից եկաւ մարդուն :

Պ. Աստանայէն « Եւ որ առնէ զմեզս ՚ի սատանայէ է, զի ՚ի սկզբանէ սատանայ մեղանչէ » . Յովհ. Ա. Թուղթ. Կ. 8 :

Լ. Մեղքը սատանայէն ի՞նչպէ՞ս անցաւ մարդոց :

Պ. Աստանան խաբեց զԵւս և զԱդամ, և զստնք համաղեց՝ որպէս զի Աստուծոյ պատուէրը չպահէն :

Լ. Ո՞ր պատուէրը :

Պ. Աստուած Գրախոսին մէջ Ադամայ պատուիրեց որ բարւոյ և չարի գիտութեան ծառին պըտուցներէն չուտէ, և այն տատն ըսաւ անոր թէ

ճաշակելուն պէս՝ մահու պիտի մեռնի :

Լ. Ինչո՞ւ բարւոյ ու չարի գիտութեան պատուին ճաշակը մահաբեր էր մարդուս :

Պ. Քանզի միատեղ կը բերէր նոս անհնազանդութիւն ընդդէմ կամայն Աստուծոյ, և այս եղանակաւ մարդս Աստուծմէ ու անոր շնորհքէն կը հեռացնէր, և Աստուծոյ կենացն օտար կընէր զայն :

Լ. Ի՞նչ կերպով բարւոյ և չարի գիտութեան ծառայն անուը բուն իրին կը յարմարի :

Պ. Այսպէս կը յարմարի, մարդն այս ծառէն փորձառապէս պիտի ճանչնար թէ Աստուծոյ կամայն հնազանդելէն որչափ բարիք և չի հնազանդելէն որչափ չարիք կրնար յառաջ դալ :

Լ. Ադամ ու Եւս ի՞նչպէս կրնային սատանային համոզուիլ Աստուծոյ պատուէրը թողով մէկգի :

Պ. Աստուած ըստ իւր բարութեան ստեղծելով զմարդ՝ տուաւ անոր նախաջօժար միտումն սիրելոյ զԱստուած, և միանդամայն աղատ թաղուց զայն . սակայն մարդս այս աղատութիւնը չարաչար գործածեց :

Լ. Աստանան ի՞նչպէս խաբեց զԱդամ ու Եւս :

Պ. Եւս գրախոսին մէջ օձ մը տեսաւ, որ իրեն կը հաւատէր թէ՛ մարդիկ երբ գիտութեան ծառին պատուէն ուտեն՝ բարին ու չարը կը ճանչեն, և Աստուծոյ պէս կըլլան : Եւս այս հրապարանքէն ու պտոյղ գեղեցկութենէն թեւազրուեցաւ, և ճաշակեց . Ադամ ալ ճաշակեց անոր օրինակին հետեւելով :

Լ. Ադամայ մեղքը ի՞նչ հետեւանք ունեցան :

Պ. Անէծք ու մահ :

Լ. Ի՞նչ է անէծքը :



Պ. Անէժքն է դատապարտութիւն մեղաց՝ Աստուծոյ անաչառ դատաստանաւն, և այն չարիքքն որ մեղքէն յառաջ կուգան ՚ի պատուհաս մարդկան, ըսաւ Աստուած՝ Ագամայ. «Անիծեալ լիցի երկիր ՚ի գործս քո.» Ծննդ. Գլ. Գ. Հմբ. 17:

Լ. Ի՞նչպիսի մահ յառաջ եկաւ Ագամայ մեղքէն:

Պ. Կրկնակի մահ. մին՝ մարմնաւոր, երբ մարմինը կը թողու զինքը կենդանացնող հոգին, միւսը՝ հոգեւոր մահ, երբ հոգին կը զրկուի Աստուծոյ շնորհքէն, զորն որ կը կենդանացնէր շնչաւոր վերնագոյն հոգեւոր կենաց միջոցաւ:

Լ. Արդեօք հոգին ալ մարմնոյն պէս կը մեռնի:

Պ. Կը մեռնի՞ բայց ոչ մարմնոյն պէս, որն որ մեռնելով անդգայ կ'ըլլայ ու կը լուծուի. իսկ հոգին, մեղք մեռնելով՝ կը զրկուի միայն իմացական լոյսէ, շնորհքէ, երանութենէ, չոչնչանար, այլ անապական կը մնայ, լաւարի, կսկիծներու և տանջանաց մէջ:

Լ. Ինչո՞ւ Նախածնողաց հետ ամեն մարդիկ ալ մեռնելու են:

Պ. Քանզի բոլոր մարդիկ մեղք վիրաւորեալ Ագամէն ծնան, և ամէնքնիս ալ կը մեղանչեմք: Ինչպէս որ ապականեալ աղբերէն բնականաբար ապականեալ ջուր կը բղխի՝ այնպէս ալ մեղաւոր ու մահկանացու նախաձորէ մեղաւոր ու մահկանացու զաւակներ կը ծնինք:

Լ. Ասոր վրայօք ի՞նչ կ'ըսէ Սուրբ Գիրքը:

Պ. Ի միտջէ՛ մարդոյ մեղք յաշխարհ մտին, և ՚ի մեղաց անտի՛ մահ. և այնպէս յամենայն մարդիկ տարածեցաւ մահ, որով ամենեքին մեղան. Առ Հռովմ. Գլ. Ե. Հմբ. 12:

Լ. Արդեօք կենաց ծառին պտուղներն օգտաւար էին մարդուս՞ յետ մեղաց:

Պ. Մարդը չէր կրնար ճաշակել այդ պտուղներն՝ յետ մեղաց. ըստ սրում՝ Գրախաէն արտաքսուեցաւ:

Լ. Փրկութեան յոյս մնաց արդեօք մարդուն՞ այն ատեն:

Պ. Երբ Նախածնողք Աստուծոյ առջև իրենց մեղքը խոստովանեցան՝ այն ատեն Աստուած վերկութեան յոյս մը տուաւ անոնց՝ իւր անհուն զբթութեամբն:

Լ. Այս յոյսը ի՞նչ բանի վրայ կը կայանար:

Պ. Աստուած ծանոյց թէ կնոջ սերունդն օճին գլուխն պիտի ճգմէ: Ծննդ. Գլ. Գ. Հմբ. 15:

Լ. Ի՞նչ կը նշանակէ ասիկայ:

Պ. Կը նշանակէ թէ Յիսուս Քրիստոս պիտի յաղթահարէ զմարդիկ խաբող սատանան, և ըզմեզ պիտի փրկէ ՚ի մեղաց, յանիժից և ՚ի մահուանէ:

Լ. Ինչո՞ւ Յիսուս Քրիստոս սերունդ կնոջ կը կոչուի:

Պ. Քանզի երկրիս վրայ անտերմ ծնաւ՝ յամենաուրբ կուսէն Մարիամայ:

Լ. Այս խոստումէս ի՞նչ օգուտ առաջ կուգայ:

Պ. Այն թէ՛ մարդիկ անկէ՛ ՚ի վեր կրնային վերկապէս հաւատալ յաշխարհ գալիք Փրկչին, ինչպէս մեք կը հաւատամք յաշխարհ եկածին:

Լ. Արդեօք նախնիք կը հաւատային՞ գալիք Փրկչին:

Պ. Խիստ քիչերը կը հաւատային, իսկ մարդոց մեծագոյն մասը մոռցան՝ Աստուածային Փրկչին աւետումը:



Հ. Աստուած այս խոստումը կրկնեց :

Պ. Շատ անգամ՝ զոր օրինակ, Աբրահամու տուալ փրկչին խոստումը հետևեալ խօսքով . «Էլ օրհնեցեն 'ի զաւակի քում ամենայն ազգք երկրի» Ծնն . Գլ. ԻԲ. Հմբ. 18 : Այս աւետարտ Գաթի ալ կրկնեց՝ բերով . «Յարուցից զզաւակ քս յեա քս, և հանեցից զածու նորա մինչև յյախտեան . » Թագ . Գիրք Բ. Գլ. Է. Հմբ. 12-13 :

Հ. Ի՞նչ կը յայտնէ մարմնաուծիւն բառը :

Պ. Կը յայտնէ թէ Աստուծոյ որդին մարդկային մարմին առաւ՝ զերծ 'ի մարգ, և եղաւ մարդ՝ առանց Աստուած ըլլալէ զազրելու :

Հ. Ո՞ւսկից առնուեցաւ մարմնաուծիւն բառը :

Պ. Յովհաննէս Աւետարանչի խօսքերէն . «Բանն մարմին եղև» Յովհ. Գլ. Ա. Հմբ. 14 :

Հ. Ինչո՞ւ հաւատոյ հանգանակին մէջ Աստուածորդւոյն մարմնաուծիւնը յիշուելէն անմիջապէս ետքը մարդեղութիւնը կը յիշուի :

Պ. Որպէս զի չի կարծէ ոք թէ Որդին Աստուծոյ լոկ մարմին առաւ, այլ գիտնայ՝ թէ մարդ է կատարեալ բաղկացեալ 'ի հոգւոյ և 'ի մարմնոյ :

Հ. Այս մասին կայ վկայութիւն սուրբ Գրոց մէջ :

Պ. Պօղոս Առաքեալ կը գրէ . «Մի միջնորդ Աստուծոյ և մարդ կան՝ մարդ Յիսուս Քրիստոս» . Տիմոթ. Ա. Գլ. Բ. Հմբ. 5 :

Հ. Ուրեմն մէ՞կ բնութիւն կայ 'ի Յիսուս Քրիստոս :

Պ. Ո՛չ. անբաժանելի ու անխառն երկու բնութիւն ունի, Աստուածային՝ և մարդկային, և ըստ այս երկու բնութեանց՝ երկու կամք :

Հ. Արդեօք ասով երկու ա՞նձն ունեցած կ'ըլլայ :

Պ. Ո՛չ. այլ մի անձն, Աստուած ու մարդ մի անգամայն, և միով բանիւ՝ Աստուածամարդ :

Հ. Սուրբ Գիրքն ի՞նչ կ'ըսէ Յիսուսի՝ 'ի Հոգւոյն սրբոյ և 'ի կուսէն Մարիամոյ մարմին առնելուն վրայ .

Պ. Գուկաս Աւետարանիչ կը պատմէ թէ՛ Կոյն Մարիամ հարցուց այն Հրեշտակին՝ որ Յիսուսի յուծիւնը կ'աւետէր իրեն . «Չիարդ լինիցի ինձ այդ, քանզի զայր ոչ գիտեմ . » Հրեշտակն ալ պատասխանեց . «Հոգի սուրբ եկեացէ 'ի քեզ, և զօրութիւն բարձրելոյ հովանի լիցի 'ի վերայ քս . քանզի և որ ծնանեալոցն է 'ի քէն՝ սուրբ է, և Որդի Աստուծոյ կոչեցի . » Գուկ. Գլ. Ա. Հ. 34, 35 :

Հ. Ո՞վ էր Կոյն Մարիամ :

Պ. Աբրահամու եւ Գաթիից եղէն սուրբ Կոյս մ'էր, յորմէ պիտի ծնէր Փրկիչն՝ ըստ Աստուածային աւետման, եւ Յովսէփի, իւր յեղակցին նշանուած էր, որպէս զի իւր պահապանն ըլլայ, ըստ որում ինքզինքն Աստուծոյ նուիրած էր՝ միշտ կոյս մնալու խոստմամբ :

Հ. Ուրեմն միշտ կոյս մնաց :

Պ. Մնաց ու կը մնայ կոյս՝ Փրկիչը ծնանելէն առաջ, ծնած ատեն եւ ծնանելէն վերջը, որով կը կոչուի Մշտակոյս (Աειμαρθενοσ) :

Հ. Ուղղափառ եկեղեցին ուրիշ ի՞նչ մեծ անուանակոչութեամբ կը պատուէ զՄարիամ միշտ սուրբ Կոյս :

Պ. Աստուածածին կը կոչէ զայն :

Հ. Յոյց սուր ինձ սուրբ Գրոց մէջ այս անուանըս սկզբնաւորութիւնը :



Պ. Եսայի Մարգարէին հետեւեալ խօսքերէն առնուած է. «Սհա կոյս յղապի, եւ ծնցի որդի, եւ կոչեսցեն զանուն նորա Էմմանուէլ, որ թարգմանի ընդ մեզ Աստուած». Եսայիայ Գլ. Է. Հ. 14: Կոչնպէս եւ արգարն Եղիսաբէթ՝ մայր Տեառն կ'անուանէ զՍմեճասուրբ կոյսն, որն որ Աստուած ծածկն բառին հաւասարազօր է. «Էւ ուստի է ինձ այս, զի եկեսցէ մայր Տեառն իմոյ առ իս» . Գլ. Գլ. Ա. Հմբ. 43:

Լ. Ի՞նչ մտքով Աստուածածին կը կոչուի ամէն նասուրբ կոյսը:

Պ. Անոր համար թէ՛ իրմէ ծնաւ Յիսուս Քրիստոս, ո՛չ ըստ իւր աստուածութեանն, որով յաւիտեական է, այլ ըստ մարդկութեան. բայց սակայն արժանաւորապէս կոչուեցաւ Աստուածածին, ըստ որում իրմէ ծնեալը՝ թէ՛ յղութեան՝ եւ թէ՛ ծննդեան ատեն էր եւ է ճշմարիտ Աստուած:

Լ. Ի՞նչ պէտք է կարծել Սմեճասուրբ նուսին Մարիամայ բարձր արժէքին վրայօք:

Պ. Ըստ որում մայր Տեառն՝ շնորհօք եւ առ Աստուած ընտանութեամբ, հետեւաբար եւ արժանեօք՝ ամեն տեսակ արարած կը գերազանցէ. որով եւ Ուղղափառ եկեղեցին՝ Քերականներէն ու Սերովբէներէն աւելի կը պատուէ զայն:

Լ. Յիսուսի Քրիստոսի՝ ամենասուրբ Աստուածածնէն ծնանելուն վրայօք ուրիշ ի՞նչ նշանակութեան արժանի բան կայ:

Պ. Այն թէ՛ ծնունդն ըստ ամենայնի սուրբ՝ եւ ամեն մեղքէ ազատ էր, նաեւ անցաւ. քանզի՝ Աստուծոյ Եւայի մեղաց համար որոշած պատժօք մէջ էր նաեւ ցաւօք որդի ծնիլը. տեն Յովհ.

Գամասի. Աստուածաբանութիւն. Գլ. Գլ. Գլ. Ժ. Գլ. Հմբ. 6:

Լ. Աստուածային նախախնամութիւնն ի՞նչ նըշան նախապատրաստեց՝ որպէս զի ճանչնն մարգրիկ իրենց համար ծնած Փրկիչը:

Պ. Շատ մանրամասն նախավկայութիւններ պարզուեցն՝ իւր Շնորհեան զանազան պարագայիցն՝ եւ երկրի վրայ ունենալիք կենացը վրայօք, զոր օրինակ, Եսայի մարգարէն կանխասեց թէ կոյսէ պիտի ծնի Փրկիչը. Եսայիայ Գլ. Է. Հմբ. 14: Միքիա մարգարէն կանխասեց Փրկիչին՝ ՚ի Բեթղեհէմ ծնանիլն, եւ հրէայք այս խօսքն աղէկ ՚ի միտ կ'առնուին՝ ասոր կատարումը ճանչնալէ առաջ: Մատթ. Գլ. Բ. Հմբ. 4-5-6: Մաղաքիա մարգարէն՝ Երուսաղիմի Տաճարին երկրորդ շէնութեանէն յետոյ՝ նախատեսեց թէ Փրկիչն գալուստը կը մօտենայ, եւ թէ այն տաճարը պիտի դայ, եւ թէ՛ իւր առջեւէն պիտի խրկուի կալապետ ըստ նմանութեան Եղիա մարգարէին, որն որ բացայայտապէս կը յայտնէ զՅովհաննէս Մկրտիչ. Մաղաք. Գլ. Գ. Հմբ. 1, եւ Գլ. Գ. Հմբ. 5: Զաքարիա մարգարէն նախատեսեց Փրկիչին նշանաւոր մուտքն՝ յերուսաղէմ. Զաք. Գլ. Թ. Հմբ. 9: Եսայի մարգարէն հրաշալի պարզութեամբ կանխասեց Փրկիչին չարչարանքը. Եսա. Գլ. ԾԳ: Գաւթի՝ ԻՍ. Սաղմոսին մէջ՝ այնպէս մանրամասնաբար կը պարագրէ Փրկիչին խաչին վըրայ կրած չարչարանքը՝ որ կարծես խաչին ըստըտը կը գրուէր այդ սաղմոսը: Գանիել մարգարէն՝ դէպքէն 490 տարի առաջ գուշակեց Փրկիչին Գալուստը, խաչին վրայ մեռնիլը, եւ ասկէ վերջը՝ տաճարին ու Երուսաղիմի կործանումը, եւ



Վերջապէս հին օրինաց զոհերուն խափանումը՝  
Գանիէլ Գլ. Թ. 2 :

Ը. Ստուգիւ իրր Փրկիչ ճանչցուեցաւ Յիսուս  
Քրիստոս՝ երբ ծնաւ և ապրեցաւ երկրի վրայ :

Պ. Ծառեր զինքը ճանչցան զանազան կերպե-  
րով. արեւելից մողերը զինքը ճանչցան աստղի  
մը միջոցաւ, որ անոր ծննդեան ատալ երեւե-  
ցաւ յարեւել : Բեթղեհէմի հովիւներն՝ հրեշտակ-  
ներէն իմացան թէ Գալթի քաղքին մէջ Փրկիչը  
ծնաւ : Իսկ Սիմէոն և Աննա՝ Հոգւոյն սրբոյ մաս-  
նաւոր յայտնութեամբը ճանչցան զինքը՝ երբ ծը-  
նրնդեանէն քառասուն օր վերջը ասածարը նուիր-  
ուեցաւ : Յովհաննէս Մկրտիչ Յորդանան գետին  
մէջ Յիսուսը մկրտած ատեն՝ զինքը ճանչցաւ՝  
երբ Հոգին անորը ազանակերպ իւր վրան իջաւ,  
և երկինքէն հօր Աստուծմէ ձայն մ'եկաւ՝ որ  
կ'ըսէր. «Գաւ է որդի իմ սիրելի, ընդ որ հաճե-  
ցայ» : Մատթ. Գլ. Գ. Հմբ. 17 : Ասոր նման ձայն  
մ'ալ լսեցի՝ Պետրոս. Յակոբոս ու Յովհաննէս  
Առաքեալք՝ երբ լերան վրայ պլլակերպեցաւ.  
«Գաւ է որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ. դմա  
լուարուք» : Մարկ. Գլ. Գ. Հմբ. 7 : Ասանցմէ  
զատ խիստ շատեր զինքը ճանչցան՝ իւր  
վարդապետութեան գերազանցութենէն ու կա-  
տարելութենէն, եւ իր դորձած հրաշքներէն :

Ը. Յիսուս Քրիստոս ինչ հրաշք կը գործէր :

Պ. Սնբուժելի հիւանդութիւններ ունեցող ան-  
ձեր եւ այսահարներ մէկ ակնթարթի մէջ կը բը-  
ժըչկէր՝ միայն խօսքով. կամ ձեռքէն բռնելով,  
կամ պարզապէս իւր զգեստներուն հիւանդաց  
դպչելովը : Անդամ մը հինգ հացով, եւ ուրիշ  
անդամ մը եօթն հացով հողարտոր մարդիկ

կշտացուց անապատ տեղ մը : Զրոյ վրայ քաղեց,  
և իւր հրամանաւը փոթորիկը հանդարտեցուց,  
մեռեալները կենդանացուց, այսինքն ողջացուց  
Նային քաղաքին այրի կնոջ որդին, Զաէլի դուստ-  
րըն և Ղազարոսը, որ չորեքօրեայ մեռած էր :

Ը. Որդին Աստուծոյ մեր վրկաւթեան համար  
մարմին առնելէն յետոյ ինչ կերպով մեր վրկաւ-  
թիւնը կատարեց :

Պ. Իւր վարդապետութիւններովը, կենօքը,  
մահուամբն ու յարութեամբն ՚ի մեռելոց :

Ը. Ինչ էր Քրիստոսի վարդապետութիւնը :

Պ. Աստուծոյ թաղաւորութեան Աւետիսը կամ  
վրկաւթեան ու յաւիտենական երանութեան վար-  
դապետութիւնը, զոր պատճառով Բողոքա-  
վառ եկեղեցին : Տես Մարկ. Գլ. Ա. Հմբ. 14-15 :

Ը. Ինչ կերպով վրկարար կ'ըլլայ մեզ Քրիս-  
տոսի վարդապետութիւնը :

Պ. Երբոր զայն բոլորով սրտիւ ընդունիմք՝ և  
անոր համեմատ վարուիմք : Եւ ինչպէս որ աս-  
տանային խաբեցատիր խօսքը, զոր նախածնողք  
ընդունեցին, ասոնց մէջ սերմն եղաւ մեզայ ու  
մահու, նայնպէս, ընդհակառակն, Քրիստոսի  
ճշմարիտ խօսքը, երբ Քրիստոսնեցաւ յօժարմիտ  
կ'ընդունին, ասոնց մէջ կ'ըլլայ սերմն սրբութեան  
և անմահ կենաց : Ասոնք, ըստ բանից Պետրոս  
Առաքելոյ, են «Իջնեալք ՚ի վերտոին՝ ոչ յատա-  
կանութեան սերմանեն՝ այլ յանապականացուէն  
կենդանի և մշանջենական բանին Աստուծոյ»  
Պետրոսի թուղթ Ա. Գլ. Ա. 23 :

Ը. Ինչ կերպով Յիսուս Քրիստոսի կեանքը  
մեզ վրկարար կ'ըլլայ :

Պ. Երբոր անոր նմանիմք մտնուեցով : Ուստի



կ'րտէ ինքը . « Եթէ ոք զիս պաշտիցէ , զկնի իմ  
եկեացէ . և ոք եմն եմ , անգ և պաշտօնեայն իմ  
եղևցի » . Յովհ . Գլ . ԺԲ . Հմբ . 26 :

### ՅՕԴՈՒԱԾ Դ .

Լ . Ի՞նչպէս ֆրիստոսն 'ի խաչ հանեցին , քանի  
որ իւր վարդապետութիւնն ու գործքը պիտի  
չարժէին զամենքն 'ի բարեպաշտութիւն :

Պ . Հրէից ֆահանայապետներն ու դպիրները  
զինքը կ'ատէին . քանզի կը յանդիմանէր անոնց  
սուտ վարդապետութիւնն ու օրինազանց վարքը .  
և անօր կը նախանձէին , քանզի ժողովուրդը զին-  
քնն անոնցմէ աւելի կը յարգէր՝ վարդապետու-  
թեանն ու հրաշխն համար : Աւստի և զրպար-  
տեցին զինքն ու մահուան դատապարտեցին :

Լ . Ինչո՞ւ ըստեցաւ թէ Յիսուս ֆրիստոս « առ  
Պանտացի Պիղատոսի » խաչուեցաւ :

Պ . Խաչը երթժ ժամանակը իմացնելու համար :

Լ . Ո՞վ էր Պանտացին Պիղատոս :

Պ . Հռոմկայեցի իշխան մ'էր Հրէաստան , որ  
այն ատեն հռոմկայեցւոց իշխանութեան ներ-  
քեւ էր :

Լ . Ինչո՞ւ այս պարագայս նշանակելու արժա-  
նի է :

Պ . Քանզի Յակոբայ մարդաբէութեան կատա-  
րումը կը ցուցնէ . « Մի պակասեցէ իշխան 'ի  
Յուդայ , և ժի պետ յերանայ նորա , մինչև ե-  
կեացէ նա օրոյ իւրն է հանդերձեալքն . և նա է  
ակնկալութիւն հեթանոսայ » . Մնն . Գլ . ԽԹ .  
Հմբ . 40 :

Լ . Ինչո՞ւ հռուստոյ հանդանակին մէջ Յիսուս

Քրիստոսի համար « խաչեցաւ » վկայուելէն զատ  
« չարչարեցաւ » ալ կը յաւելցուի :

Պ . Յայանելու համար թէ՛ իւր խաչելութիւնը  
պարզապէս կրից ու մահուան երևակայութիւն  
չէր ինչպէս որ ըսին քանի մը մուշար վարդապետ-  
ներ , այլ ստուգիւ չարչարանք ու մահ :

Լ . Ինչո՞ւ կը յիշուի թէ « թաղուեցաւ » :

Պ . Այս ալ նոյնպէս կ'օգնէ հաստատելու թէ  
Յիսուս ֆրիստոս ստուգիւ մեռաւ , և թշնամեայ  
իւր գերեզմանին վրայ պահապաններ կարգելով  
զայն կնքեցին ետքն ալ յարութիւն առաւ :

Լ . Ի՞նչպէս Յիսուս ֆրիստոս , որ Աստուած էր ,  
կրնար չարչարիլ ու մեռնիլ :

Պ . Ոչ չարչարուեցաւ ու մեռաւ ըստ աստուա-  
ծութեանն՝ այլ ըստ մարդկութեանն . չէ թէ ան-  
կարող էր չարչարանքէ զերժանելու՝ այլ կամաւ  
կրից զայն . քանզի ինքն ըսաւ . « Ես գնեմ զան-  
ձրն իմ , զի միւսանգամ առից զնա : Ոչ ոք հա-  
նէ զնա յինէն , այլ ես գնեմ զնա անձամբ իմնիլ ,  
իշխանութիւն ունիմ գնել զնա , և իշխանութիւն  
ունիմ միւսանգամ առնուլ զնա » . Յովհ . Գլ . ԺԲ .  
Հմբ . 47-48 :

Լ . Ի՞նչ կը նշանակէ այն խօսքը՝ թէ Յիսուս  
ֆրիստոս մեղ համար խաչուեցաւ :

Պ . Կը յայանէ թէ՛ իւր խաչին վրայ մեռնելու  
վճար կրից զմեղ մեղքէ և մահէ :

Լ . Սուրբ Գիւրքն այս իրկութեան վրայօք ի՞նչ  
կ'ըսէ :

Պ . Մեղքէ ազատելուս համար կ'ըսէ . « Որով  
ունիմք զիրկութիւն 'ի ձեռն արեան նորա , ըզ  
թողութիւն մեզայ ըստ մեծութեան շնորհաց իւ-  
րոց » . Առ եկես . Գլ . Ա . Հմբ . 7 : Մեծքէ ազատ



ուելնու համար կ'ընէ. « Բրիստոս գնեաց զմեզ յանիծից օրինացն, երեւոյ վասն մեր անէծք » . Առ Գարա . Գլ. Գ. Հմբ. 13 : Մահուանէ աղատելնու համար կ'ընէ . « Այդ որովհետեւ մանկունք հաղորդեցին արեան և մարմնոյ, և ինքն իսկ մեր ձառորութեամբ կցորդ եղև նոցունց, զի մահուն իբրով խափանեացէ զայն որ զիշխանութիւն մահուն ունէր, այսինքն է՝ զսատանայ . և ապրեցուցէ զայնսով՝ որ մահուն երկիւղիւ հանապաղ չէին վաարանդեալք 'ի ծառայութիւն » . Առ երբ . Գլ. Բ. Հմբ. 14-15 :

Ը. Յիսուս ֆրիստոսի խաչի վրայ մեռնիլը ինչ կերպով կը վերկէ զմեզ 'ի մեզաց, յանիծից և 'ի մահուանէ :

Պ. Որպէս զի դիւրաւ կարենանք հաւատալ այս խորհուրդին՝ Աստուծոյ խօսքը զմեզ այս բանիս վրայօք խելամուտ կ'ընէ սրչափ կարելի ըլլաց ըմբռնել Յիսուսի ֆրիստոսի Աղամայ հետ բաղդատուիլը : Աղամ բնականաբար գլուխ է բոլոր մարդկային ազգին, մարդկային ազգը՝ Աղամէն սերած ըլլալով իր սկզբնահօրը հետ մէկ մարմին մը կը կազմէ : իսկ Յիսուս ֆրիստոս, յորում աստուածութիւնը մարդկութեան հետ միայած է՝ շնորհօք եղաւ նոր ու ամենազօր զըլուխ մարդոց, զորս հաւատաքով իրեն հետ կը կապէ . ինչպէս որ Աղամով ծառայ եղանք մեզայ, անիծից ու մահուան, նոյնպէս ֆրիստոսով ազատեցանք 'ի մեզայ, յանիծից և 'ի մահուանէ : Անոր կամաւոր չարչարանքն ու մեզ համար խաչին վրայ մեռնիլն, ունենալով անհուն գին ու արժանիք, քանի որ անմեղին ու աստուածամարդուն մահը բաւական հատուցում մ'է՝

յարդարադատութեանն Աստուծոյ, որ զմեզ մեզայ համար 'ի մահ դատապարտեց . նաև անչափ փոխարինութիւն մ'է, որով ֆրիստոս ունեցաւ իբաւունք՝ առանց արդարութիւնը թողլոյ՝ մեզ մեղատաքացս, շնորհելու զշնորհումն մեզայ, և զշնորհս՝ որով մեզքն ու մահը կը յաղթահարեմք . « Սրբոց իւրոց կամեցաւ Աստուած յուրանել, թէ զի՛նչ է մեծութիւն փառաց խորհրդոյն նորա 'ի հեթանոսս, որ է ֆրիստոս 'ի ձեռք, յոյժն փառայ » . Առ կորոս . Գլ. Ս. Հմբ. 26-27 : « Զի եթէ 'ի միոյն յանցանաց մահ թաղաւորեաց միսին, սրչափ ևս առաւել՝ որք զառաւելութիւն շնորհաց և զգարդեաց արդարութեանն առնուցուն, կենօք թաղաւորեացին ի ձեռն միայն Յիսուսի ֆրիստոսի » . Առ Հռովմ . Գլ. Ե. Հմբ. 17 : « Ոչինչ դատապարտութիւն է այնոցիկ որ 'ի ֆրիստոս Յիսուս, որ ոչ գան ըստ մարմնոյ . զի օրէնք հոգւոյն կենաց 'ի ֆրիստոս Յիսուս ազատեցին զիս յօրինաց մեզայն և մահու : Զի որ անհրնարինն էր օրինացն՝ որով ակարանայրն մարմնով, Աստուած զմրդին իւր առաքեաց 'ի նմանութիւն մարմնոյ մեզայց և փան մեզայ . և դատապարտեաց զմեզս 'ի մարմնի անդ : Զի արդարութիւն օրինացն կատարեցին 'ի մեզ, որք ոչ ըստ մարմնոյ գնայցեմք՝ այլ ըստ հոգւոյն » . Առ Հռովմ . Գլ. Բ. Հմբ. 1-2-3-4 :

Ը. Առ հասարակ ամենու համար չարչարուեցաւ Յիսուս ֆրիստոս :

Պ. Այն փան զի կամու ինքզինքը զո՞հ մատոյց ամենուն համար, և ամենուն համար շնորհք ու փրկութիւն ստացաւ : Այլ սակայն անկէ միայն անանք օգուտ կը քաղեն՝ որոնք կամովին իւր



չարչարանաց կը մասնակցին, իւր մահուան նըմանութիւնը յանձին բերելով: Առ փիլիպպեցիս Գլ. Գ. Հմբ. 10:

Լ. Ի՞նչպէս կրնամք մասնակից ըլլալ Յիսուսի ֆրիստոսի չարչարանացն ու մահուանն:

Պ. Մասնակից կըլլամք Յիսուսի ֆրիստոսի չարչարանացն ու մահուանը՝ նախ կենդանի ու սրբատեւանդն հաւատքով. երկրորդ՝ խորհրդօք, յորքս Տեառն մերոյ վրկարար չարչարանացն ու մահուան զորութիւնը ծածկուած ու կնքուած է. և երրորդ՝ խաչմամբ՝ մեր մարմնոյն կրից և ցանկութեանց: «Զի ես, կըսէ առաքեալն, օրինօք օրինաց մեռայ, զի Աստուծոյ կեցից, և ընդ ֆրիստոսի՛ ՚ի խաչ ելից. և կենդանի եմ այսուհետև, ոչ ես՝ այլ կենդանի է յիս ֆրիստոս. այլ որ այժմս կեամ՝ մարմնով, հաւատովք որդւոյն Աստուծոյ կեամ, որ սիրեացն զիս, և մատնեաց զանձն վասն իմ» . Առ Գաղ. Գլ. Բ. Հմբ. 19, 20. «Եթէ ոչ զիսէք, զի որ միանգամ մկրտեցայք ՚ի ֆրիստոս Յիսուս, ՚ի մահ անդր նորա մը կըրտեցայք» . Առ Հռովմ. Գլ. Զ. Հմբ. 3: «Քանիցս անգամ թէ ուսոյցէք զհացս զայս և զբաժակս ըմպիցէք, զմահն Տեառն պատմեցէք, մինչև եկեցէ նա» . Առ Կորն. Ա. Գլ. ԺԱ. Հմբ. 26: «Իսկ որ քրիստոնեայքն են՝ զմարմնս իւրեանց ՚ի խաչ հանին կարեօքն և ցանկութեամբ հանգերձ» : Առ Գաղ. Գլ. Ե. Հմբ. 24:

Լ. Ի՞նչպէս կարելի է մարմնը խաչել կրից ու ցանկութեանց հետ:

Պ. Ժուժկալութեամբ ու զսպմամբ կրից ու ցանկութեանց և ասոնց հակառակ բարի գործելով, զոր օրինակ՝ երբ զայրոյթը դրդէ զմեզ

մեր թշնամւոյն դէմ, անոր վրայ չարախօսութիւն ընելու, և անոր վնաս տալու, մեք կրից այս միտմանը հակառակելով՝ յիշեմք մեր Տէր Յիսուս ֆրիստոսը, որ խաչին վրայ իւր թշնամեացն համար աղօթեց, այն ատեն ֆրիստոսի իր թշնամեաց նկատմամբ բրածին պէս դործած՝ և մեր բարկութեան կերբը լաւած կ'ըլլանք:

### ՅՕԴՈՒՍԵ Ե.

Լ. Յիսուս ֆրիստոս ի՞նչ յայտնի ապացոյց տուաւ որ իւր չարչարանքն ու մահը մեզ, մարդոցս համար փրկութիւն են:

Պ. Իւր ՚ի մեռելոց յարութիւնը, որ սկզբնաւորութիւն և հիմն է մեր երանական յարութեան. «Այլ արդ ֆրիստոս յարուցեալ է՛ ՚ի մեռելոց, առաջին պատու ննջեցելոց» . Առ Կորնթ. Ա. Գլ. ԺԵ. Հմբ. 20:

Լ. Ի՞նչ պէտք է կարծել այն փիճակին վրայօք՝ յորում կը գտնուէր Յիսուս ֆրիստոս՝ իւր մահուանէն յետոյ և յարութեանէն առաջ:

Պ. Եկեղեցւոյ հետևեալ երդք կը բացատրէ զայս, «Ի գերեզմանն մարմնապէս, ՚ի դժոխս հոգւոյն՝ իբր Աստուած, ՚ի դրախտին՝ ընդ աւաղակին, և ՚ի դահոյս ես, ս' ֆրիստոս, ընդ Հօբ և Հոգւոյ, լցող ամենայնի, սլ անպարագրելի»:

Լ. Ի՞նչ է դժոխք:

Պ. Դժոխք (*ἄδης*) բառն ըստ հելլենական ըստուգաբանութեան՝ կը նշանակէ լցյաէ զուրկ տեղի: Ըստ ֆրիստոնէական վարդապետութեան՝ այս բառով կ'իմանամք հոգեւոր բանս մը, այլ



սինքն մեղաց հանար Աստուածային տեսութենէս  
և այս աւոր տեսութեանը վերաբերեալ Աստուա-  
ծային լոյսէն և երանութենէն օտար և զուրկ  
մնացած փեճակն հողոց : Տես Յուդա թուղթ .  
Գլ. Ա. Հմբ. 6. և «Օքդօփիու իխօն» Ե. Հմբ.  
2, 4 :

Լ. Ինչո՞ւ Յիսուս Գրիստոս իջաւ 'ի Գժոխս :

Պ. Արդէս զի հոն ալ քարոզէ մահուան դէմ  
աարած յաղթանակն ու փրկէ այն հոգիներն՝ որք  
հաւատով կ'ակնկալէին իւր դալատեանը :

Լ. Սուրբ Գիրքն ասոր փրոյ բան մը կ'ըսէ՞ :

Պ. Սուր կը վերաբերի հետևեալ վկայութիւնը .  
«Չի և Գրիստոս միանգամ վասն մեղաց 'ի վերայ  
մեր մեռաւ , արդարն 'ի վերայ անարդարոյ . զի  
զմեզ մերձեցուցէ առ Աստուած . զի թէպէտ  
և մեռաւ մարմնով , այլ կենդանի է հողւով . ու  
բով և որդւոյն որ էին 'ի բանաին , երթեալ քա-  
րոջեաց» . Պետրոս Ա. Գլ. Գ. Հմբ. 18-19 :

Լ. Ի՞նչ կը նշանակէ հաւատոյ հանգանակին  
սա խօսքերը «Յարուցեալ յերրորդ աւուր՝ ըստ  
գրոյ» :

Պ. Հաւատոյ հանգանակին մէջ գրուեցան ա-  
սոնք՝ առ կորնթացիս գրուած թղթոյն հետեւե-  
ալ վկայութենէն տանուելով . «Չի ես ձեզ զայն  
նախ աւանդ եցի , զոր և եսն ընկալայ , թէ և Քր-  
իստոս մեռաւ վասն մեղաց մերոյ ըստ գրոյ .  
և զի թաղեցաւ , թէ և յարեաւ յաւուր երրորդի՝  
ըստ գրոյ» . Առ կորնթ . Ա. Գլ. ԺԵ. Հմբ. 3-4 :

Լ. Ի՞նչ բնել է «ըստ գրոյ» :

Պ. Այդ խօսքը կը յայտնէ թէ Յիսուս Գրիս-  
տոս մեռաւ և յարեաւ ճիշդ այնպէս , ինչպէս որ  
վկայուած էր Հին կտակարանի գրոյ մէջ :

Լ. Ա՛ւր բուած է այս :

Պ. Եսայեայ մարգարէի ԾԳ. Գլխոյն մէջ Յիսու-  
սի Գրիստոսի չարչարանքն ու մահը խիստ ման-  
րանանաբար նկարագրուած են . «Բայց նա վի-  
րաւորեցաւ վասն մեղաց մերոյ և պատժեցաւ  
վասն մերոյ անօրինութեանց խրատ խաղալու-  
թեան մերոյ 'ի նմա , և նորա վիրօքն բժշկեցաւք» .  
Հմբ. 5 : Գրիստոսի յարութեանը վրայօք Պետ-  
րոս Առաքեալ՝ ժԵ. Սաղմոսին խօսքերը մէջ կը  
բերէ . «Չի ոչ թողցես դանձն իմ 'ի դժոխս , և  
սչ տացես սրբոյ քուժ տեսանել զապականու թիւն» .  
Գործ. Գլ. Բ. Հմբ. 27 :

Լ. Արդեօք Հին կտակարանը կ'ըսէ՞ թէ Գրիս-  
տոս երեք օրէն յարութիւն պիտի առնէ :

Պ. Յովնան մարգարէին փրոյ երեց ու այս դէպ-  
քին նկարագիրը : «Եւ էր Յովնան 'ի փոր կիտին  
զերիս տիւս և զերիս դիշերս» . Յովն. Գլ. Բ. Հ. 1 :

Լ. Ի՞նչպէս գիտացան թէ Յիսուս Գրիստոս յարեաւ :

Պ. Նորա գերեզմանին պահապան զինուորներն  
այս եզելու թիւնը հարեկելով իմացան . քանզի  
Տիրով հրեշտակը թաւալեց գերեզմանին կափա-  
րիչ վէճիք , և միանգամայն մեծ շարժ մ'եղաւ :  
Նոյնպէս հրեշտակը Տիրով յարութիւնը քարո-  
ղեցին Մարիամ Մաղթաղեանացիին , և ուրիշ կա-  
նանց : Նոյն իսկ Յիսուս Գրիստոս իւր յարութեան  
օրը շատերուն երեցաւ , այսինքն իզաբեր կա-  
նանց , Պետրոսի , Եմմաւոս գացող երկու աշա-  
կերաց , և վերջապէս բոլոր Առաքելոց՝ 'ի վեր-  
նատանն , որուն դռները փակուած էին : Յետոյ  
չատ անգամ երեցաւ անոնց՝ քառասուն աւուր  
միջոցին մէջ , և այն օրերէն մին՝ երեցաւ շատե-  
րու , այսինքն իրեն համար ժողվուած հինգ հա-



ըրբ անձանց : Առ կորնթ. Գլ. ԺԵ. Հմբ. 6 :

Լ. Ինչո՞ւ Յիսուս ֆրիստոս իւր յարութեանէն վերջը Առաքելոց հետ տեսնուելով քառասուն օր ժամանակ կ'անցունէր :

Պ. Այդ միջոցին Աստուծոյ արքայութեան խոր հուրդները կ'ուսուցանէր անոնց : Գործ. Գլ. Ա. Հ. 3 :

### ՅՕԴՈՒԱԾ Զ.

Լ. Սուրբ Գրքէ՛ն առնուած է հաւատոյ Հանդանակին Զ. յօդուածին մէջ յիշուած Տիրոջ համբարձումը :

Պ. Սուրբ Գրոց հետեւեալ խօսքերէն առնուած է. « Ար էջն, նոյն է և որ ելն 'ի վերայ քան զամենայն երկինս, զի լցցէ՛ զամենայն » . Առ Եփես. Գլ. Գ. Հմբ. 10 : « Այնպիսի ունիմք քահանայապետ, որ նստաւ ընդ աջմէ՛ մեծութեան ակնունդն յերկինս » : Առ Եբր. Գլ. Բ. Հմբ. 1 :

Լ. Արդեօք աստուածութեանք թէ մարդկութեամբ ելաւ յերկինս Յիսուս ֆրիստոս :

Պ. Մարդկութեամբ ելաւ . իսկ աստուածութեամբ՝ միշտ յերկինս կը մնար ու կը մնայ :

Լ. Ի՞նչպէս կ'ըլլայ որ Յիսուս ֆրիստոս Հօր Աստուծոյ աջ կողմը կը նստի, քանի որ Աստուած ամէն տեղ է :

Պ. Ասի հողեորապէս հասկնալու է, այսինքն թէ՛ Յիսուս ֆրիստոս Հօր Աստուծոյ հետ մի եւ նոյն ամենակարողութիւնն ու փառքն ունի :

### ՅՕԴՈՒԱԾ Է.

Լ. Սուրբ Գիրքը ֆրիստոսի հանդերձեալները

կայութեան վրայօք ի՞նչ կ'ըսէ :

Պ. « Այս Յիսուս որ վերացաւ 'ի ձէնջլ յերկինս, սոյնպէս եկեացէ՛ զոր օրինակ տեսէք զնա երթալ յերկինս » . Գործ. Գլ. Ա. Հմբ. 11 : Ատիկայ լսին հրեշտակները Առաքելոց այն վայրկենին՝ յորում՝ ֆրիստոս յերկինս համբարձաւ :

Լ. Ի՞նչպէս կը յիշուի անոր հանդերձեալ գաւաստանը :

Պ. « Եկեացէ՛ ժամանակ՝ յորում ամենեքին որ 'ի գերեզմանս կայցեն՝ լուիցեն ձայնի նորա և եկեացեն արտաքս, որոց բարիս դորձեալ իցէ՛ 'ի յարութիւն կենաց, և որոց զչար արարեալ 'ի յարութիւն գատատանաց » : Յովհ. Ե. Գլ. 28, 29 Հմբ. : Աստեք նոյն իսկ ֆրիստոսի խօսքերն են :

Լ. Ի՞նչպէս կը խօսի Սուրբ Գիրքը ֆրիստոսի անվախձան թագաւորութեանը վրայօք :

Պ. « Նա եղիցի մեծ և որդի բարձրելոյ կոչեացի, և տացէ նմա Տէր Աստուած զթոռն Դաւթի Հօրն նորա, և թագաւորեացէ 'ի վերայ տանն Յակոբայ 'ի յաւիտեանս, և թագաւորութեան նորա վախձան մի լիցի » . Գուկ. Ա. Գլ. 32, 33 Հ. : Խօսք հրեշտակին առ Աստուածամայրն :

Լ. Ֆրիստոսի երկրորդ ներկայութիւնը առաջնոյն նման պիտի ըլլայ :

Պ. Խիստ տարբեր պիտի ըլլայ, զի եկաւ նա չարչարուելու վասն մեր . բայց պիտի գայ իւր փառօքն հանդերձ՝ զմեզ դատելու և ամենայն հրեշտակք ընդ նմա : Մատթ. ԻԵ. Գլ. 31 Հմբ. :

Լ. Ամենքն ալ ի՞նչքը պիտի դատէ :

Պ. Այո՛, և առանց բացառութեան :

Լ. Ի՞նչպէս պիտի ըլլայ այս գատատանը :

Պ. Իւրաքանչիւր մարդու խղճմանքը պիտի



յայանուի ամենուն առջևը , չէ թէ միայն երկրի վրայ դ որժած բոլոր դ որժ. քերը երևան պիտի ելլայ՝ այլ նաև խօսքերը և գաղտնի բաղձանքն ու խորհուրդները . « Մինչև եկեացէ Տէր , որ լուսաւոր առնիցէ զգաղանին խաւարիս , և յայանիցէ զխորհուրդս սրտից , և ասպա իւրաքանչիւր գոլութիւն եղիցի յԱստուծոյ » . կորնթ. թուղթ Ա. Գլ. Գ. Հմբ. 5 :

Լ. Արդեօք պիտի դատապարտէ՞ զմեզ այս չար խօսքերուն և խորհուրդներուն համար :

Պ. Անտարակոյս , եթէ զաննք չի ջնջենք ապաշխարութեամբ և հաւատքով և կենաց ուղղութեամբ . « Բայց ասեմ՝ ձեզ . ընդ դատարի բանի զօր խօսիցին մարդիկ՝ տացեն համար յաւուրն դատաստանի . Մատթ. Գլ. ԺԲ. Հմբ. 36 :

Լ. Երբ է Գրիստոսի դալուստը :

Պ. Ասի մեզ անձանօթ է . ուստի պէտք է միշտ պատրաստ ըլլալ . « Ոչ յամեցուցէ Տէր զաւետիսն՝ որպէս ոմանք համր համարին . այլ երկայնամիտ լինի առ ձեզ , քանզի ոչ կամի՝ եթէ ոք կորիցէ , այլ զամենեցուն հասանել յապաշխարութիւն : Այլ եկեացէ օր Տեառն իբրև զգող » . Պետ. Բ. թուղթ. Գ. Գլ. 9, 10 Հմբ. : Տես նաև Մատթ. Գլ. Իե. Հմբ. 13 :

Լ. Յայանուած են գոնէ մէկ քանի նշաններ Գրիստոսի մերձակայ գալստեան վրայ :

Պ. Աստուծոյ խօսքին մէջ մէկ քանի յայտնի նշաններ կը գտնուին՝ զոր օրինակ նուազումն հաւատոյ , սիրոյ , չարեաց աճումն Աւետարանին քարոզութիւն առ ամենայն ազգս , Նեռին գալուստը . և այլն . տես Մատթ. ԻԳ. Գլ

Լ. Ի՞նչ է Նեռը (Αντίχριστος) :

Պ. Նեռն է հակառակորդ Գրիստոսի , որ պիտի աշխատի քրիստոնէութեան կործանմանը համար . բայց ընդ հակառակն ինքը պիտի կործանի : Տես թեա. Բ. Գլ. Բ. Հմբ. 19 :

Լ. Ի՞նչ է Գրիստոսի թագաւորութիւնը :

Պ. Գրիստոսի թագաւորութիւնը կը կազմեն նախ բոլոր տիեզերք , երկրորդ երկրի վրայ բոլոր հաւատացեալք . երրորդ , երկնից մէջ երանութիւն վայելողք , առաջինը կըսուի թագաւորութիւն բնութեան . երկրորդը՝ թագաւորութիւն չնորհաց . երրորդը՝ թագաւորութիւն վառաց :

Լ. Հաւատոյ հանդանակին մէջ այս երեք տեսակէն որուն կը վերաբերի « Ոչ դոյ վախճան » խօսքը :

Պ. Փառաց թագաւորութեան :

### ՅՕԴՈՒՍԾ Ը.

Լ. Ինչո՞ւ Հոգին սուրբ Տէր կը կոչուի :

Պ. Իբր ճշմարիտ Աստուած , ինչպէս կը կոչուի նաև Որդին աստուծոյ :

Լ. Այս բանս Ս. Գրքք կը վկայէ :

Պ. Ասի յայտնի կ'ըլլայ ի յանդիմանութիւն Անանիայի Պետրոս առաքելոյն ըսած խօսքերէն , « Ընդէր՝ ելից սատանայ զսիրտ քո՝ ստեղ քեզ Հոգւոյն սրբոյ . . . ոչ ստեցեր մարդկան այլ Աստուծոյ » . Գործ. Ե. Գլ. 3—4 Հմբ. :

Լ. Ի՞նչ կը հասկընանք սուրբ Հոգին « կենդանարար » կոչելով :

Պ. Ասի կը յայտնէ որ Հոգին սուրբ ընդ Հօր և ընդ Որդւոյ կը բաշխէ արարածոյ կեանքը և



ի մասնաւորի՝ մարդկանց հոգեւոր կեանքը . « Ե-  
թէ ոչ ոք ծնցի ի ջրոյ և ի՞նչ հոգւոյ ոչ կարէ մը-  
տանել յարքայութիւն Աստուծոյ » . Յով. Գ. Գլ. 3 Զ :

Լ. Ո՛ւսկից յայտնի է Հոգւոյն սրբոյ ի Հօրէ  
բղխելը .

Պ. Յիսուսի հեռեեալ խօսքերէն . « Բայց յոր-  
ժամ եկեացէ մտիթարիչն զոր ես առաքեցից ձեզ  
ի Հօրէ զՀոգին ճմարտութեան սր ի Հօրէ ելանէ ,  
նա վկայեացէ վասն իս » . Յով. Գլ. Ժե. 26 Հմր :

Լ. Հոգւոյն սրբոյ ի Հօրէ բղխման վարդապե-  
տութիւնը փոփոխութիւն մը կրնայ ընդունիլ :

Պ. Ո՛չ երբէք , քանզի Ս. Ուղղափառ եկեղե-  
ցին այսպէս վարդապետելով կը կրնէ ֆրիստոսի  
խօսքերը . որոնք կարող են ճմարտութիւնը կա-  
տարեալպէս յայտնելու : Բ. Զի երկարող տիեզե-  
րական ժողովը գլխաւոր նպատակ ունենալով  
Հոգւոյն սրբոյ վրայ եղած ուղիղ վարդապետու-  
թիւնը հաստատելու՝ հաւատոյ Հանգանակին մէջ  
բաւական բացատրեց դայն և տիեզերական եկե-  
ղեցին անոր ճմարտութիւնը խօստովանեցաւ , ո-  
րով և երրորդ տիեզերական ժողովն իւր եօթ-  
ներորդ կանոնովը արգիլեց նոր հաւատոյ հան-  
գանակի մը յօրինումը : Վասն որոյ Ս. Յովհան-  
նէս Գամակապին կը գրէ . « Հոգին սուրբը հօր  
մէ ալ կրանք , և Հոգի Հօր կ'անուանենք . և  
յորդուոյ Հոգին ոչ կ'ըսենք . իսկ Որդւով Հոգին  
կ'անուանենք » : Աստուածաբանութիւն Գերբ Ս.  
Գլ. 11 :

Լ. Ինչո՞ւ Հօր և Որդւոյ հաւատար երկրպա-  
գութիւն մատուցանելու է սուրբ Հոգւոյն ալ :

Պ. Վասն զի ֆրիստոս կը հրամայէ մկրտուիլ  
յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ : Մաս .

ԻՐ. Գլ. 19 Հմր :

Լ. Ինչո՞ւ հանդանակին մէջ կրտուի թէ Հոգին  
սուրբ խօսեցաւ ի ձեռն մարդարէից :

Պ. Ասի ըսուեցաւ ի յանդիմանութիւն ոմանց  
մարդ վարդապետաց , որոնք կրսէին թէ հին կը-  
տակարանը սուրբ Հոգւոյն ներշնչութեամբը գըր-  
ուած չէ :

Լ. Սուրբ գիրքը կը վկայէ՞ որ ի ձեռն մար-  
դարէից խօսած է Հոգին սուրբ :

Պ. Պետրոս առաքեալ կը գրէ . « Քանզի ոչ  
եթէ ըստ կամաց մարդկան տուաւ մարդարէու-  
թիւն երբէք . այլ ՚ի Հոգւոյ սրբոյ կրեալք խօ-  
սեցան մարդիկ յԱստուծոյ » . Պետր. Բ. Թուղթ .  
Ս. Գլ. 21 Հմր :

Լ. Խօսած է ևս Ս. Հոգին ի ձեռն Առաքելոց :

Պ. Այո՛ , Պետրոս առաքեալը կ'ըսէ . « Որոյ  
և յայտնեցաւ իսկ , զի ոչ եթէ անձանց , այլ մեզ  
մատակարարք լինէին նոցին . որք այժմ պատմե-  
ցան , այնոքիւք որք աւետարանեցինն ձեզ հոգ-  
ւովն սրբով , որ առաքիւրն յերկնից » : Պետր . Ս.  
Թուղթ . Ս. Գլ. 12 Հմր :

Լ. Ինչո՞ւ առաքելոց վրայ չի խօսիր հանդանակը :

Պ. Քանզի հանդանակին յօրինած ասե՛նք՝ ոչ  
ոք կը տարակուսէր առաքելոց Աստուծոմէ ներ-  
շնչեալ բնական վրայ :

Լ. Հոգին Ս. մասնաւորապէս մարդոյ աւան-  
դուեցա՞ն :

Պ. Առաքելոց վրայ իջաւ հրեղէն լեզուաց նը-  
ման Տերոջը յարութեան յիաներորդ օրը :

Լ. Հիմնայ ալ Հոգին սուրբ մարդոց կ'աւանդուի :

Պ. Այո՛ , բոլոր ճմարտաբխատանէից . « Ո՛չ  
գիտէք՝ եթէ տաճար էք Աստուծոյ , և Հոգի Աս-



տուծոյ բնակեալ է ձեզ» . Կորնթ. Ս. Գ. Գլ. 16 Հ :  
Լ. Մենք ալ կրնանք սուրբ Հոգւոյն հաղոր-  
դակից ըլլալ :

Պ. Բոլոր ճշմարիտ քրիստոնեայք կրնան ջեր-  
մեռանդն աղօթիւք և խորհրդօք . « Իսկ եթէ  
դուք որ չարքդ էք՝ գիտէք պարզեա բարին  
տալ որդւոյ ձերոց , որչափ ևս առաւել հայրն  
ձեր յերկնից տայէ բարին այնոցիկ՝ որ խնդրեն  
'ի նմանէ » . Գուկ. ԺՍ. Գլ. 13 Հմբ : Տխոս Գ.  
Գլ. 4, 5, 6, Հմբ = « Իսկ յորժամ՝ քաղցրութիւն և  
մարդասիրութիւն փրկչին մերոյ Աստուծոյ յայտ-  
նեցաւ , ոչ ի գործոց արդարութեան զոր արա-  
բաք մեք , այլ ըստ իւրում որորմութեան ապրե-  
ցոյց զմեզ 'ի ձեռն աւազանին միսսանդամ՝ ծը-  
նդեանն , և նորոգութեամբ Հոգւոյն սրբոյ .  
զոր եհեզ 'ի մեզ առատութեամբ 'ի ձեռն Յի-  
սուսի ֆրիստոսի փրկչին մերոյ » . Տխոս Գլ. Գ.  
Հմբ. 4, 5, 6 :

Լ. Քանի՞ են Հոգւոյն սրբոյ դիխաւոր շնորհքն :  
Պ. Ըստ Եսայեա մարգարէի՝ եօթն են . « Հո-  
գի երկիւզի Աստուծոյ , հոգի գիտութեան , հո-  
գի դորութեան , հոգի խորհրդոյ , հոգի իմաս-  
տութեան , հոգի հանճարոյ և հոգի Տխառն ,  
այսինքն շնորհք բարեպաշտութեան , և Աստու-  
ծային ներշնչութեան 'ի գերագոյն աստիճանի :  
Եսայ. ԺՍ. Գլ. 1, 2, 3 Հմբ :

**ՅՕԴՈՒԱԾ Թ.**

Լ. Ի՞նչ է եկեղեցին :  
Պ. Եկեղեցին աստուծմէ սահմանուած մար-  
դոց ժողով մ'է որք միացեալ են ուղղափառ հա-

ւատօք , աստուածային օրինօք . քահանայապե-  
տութեամբ և խորհրդօք :

Լ. Ի՞նչ կը նշանակէ եկեղեցւոյ հաւատալը :  
Պ. Կը նշանակէ ֆրիստոսի ճշմարիտ եկեղեցին  
բարեպաշտութեամբ պատուել՝ անոր վարդապե-  
տութեանցը հնազանդիլ՝ ինչպէս նաև պատուի-  
րանացը , և հաւատալ որ՝ կը յարատեէ 'ի նմա ,  
իրապէս կը ներգործէ , կ'ուսանի և հաւատալ  
որ զայն կը կառավարէ Տէրն մեր Յիսուս ֆրիս-  
տոս , որոյ շնորհօքը միշտ լի է եկեղեցին :

Լ. Ի՞նչպէս հաւատոյ աւարկայ կ'ըլլայ տես-  
նելի եկեղեցին , քանի որ Պօղոս առաքեալ կ'ը-  
սէ որ հաւաածքն է անտեսանելի իրաց յանդի-  
մանութիւնը :

Պ. Թէև եկեղեցին տեսանելի է , սակայն անոր  
մէջը բնակող Աստուծոյ շնորհքը անտեսանելի կը  
մնայ , ուստի այս շնորհքն է դիխաւոր աւարկայ  
եկեղեցւոյ հաւատալը : Եսև երկրիս վրայ զուղ-  
ղափառ քրիստոնեայս պարունակող եկեղեցին  
տեսանելի է , և անտեսանելի է այն՝ որ երկնից  
մէջ կը պարունակէ զանոնք որք՝ ճշմարիտ հա-  
ւատով ու սրբութեամբ վախճանած են :

Լ. Ինչով կը հաստատուի եկեղեցւոյ թէ՛ յեր-  
կնս և թէ՛ յերկրի ըլլալը :

Պ. Պօղոսի հետեւեալ խօսքովը . « ՍՄ մատու-  
ցեալ էք ի Սիւղն լեռան , և ի քաղաք Աստու-  
ծոյ կենդանւոյ , յերուսաղէմ՝ յերկինս , և ի բիւ-  
բաւոր բանակի հրեշտակաց , և յեկեղեցիս անդ-  
բանկաց գրեւոյ յերկինս , և առ դատաւորն ա-  
մենեցուն՝ Աստուած , և յողիս արդարոյ կատա-  
րելոյ . և 'ի նորոյ կտակարանաց միջնորդն Յի-  
սուս » : Առ եբր. Գլ. ԺՍ. Հմբ. 22—24 :



Լ. Ինչէ՞ն յայտնի է որ ճշմարիտ եկեղեցւոյ մէջ Աստուծոյ շնորհքը կը յարատեւէ :

Պ. Նախ որ անոր գլուխն է Յիսուս Քրիստոս, որն որ լի է շնորհօք և ճշմարտութեամբ և եկեղեցին կը լեցունէ շնորհօքն և ճշմարտութեամբ, Տես Յով. Ա. Գլ. Գ. 17 Հմբ : Երկրորդ՝ կը խոստանայ իւր աշակերտաց սուրբ Հոգին, որ մինչև ի կատարած աշխարհի անոնց հետ ըլլայ . Տես Յով. ԺԳ. 16 Հմբ : Պօղոս կ'ըսէ « Եւ զնա եղ ի վերայ ամենայն իրիք եկեղեցւոյ, որ է մարմին նորա » . Առ Եփես. Գլ. Ա. Հմբ. 22—23 : Նոյնը կ'ըսէ եկեղեցւոյ հովիւներուն « Զգոյշ կացէք անձանց և ամենայն հօտիդ, յորում եղ զձեզ Հոգին սուրբ տեսուչ, հովուել զժողովուրդ տեսաբն, զոր ազդեցոյց արեամբ իւրով » : Գործ. Առաք. Գլ. Ի. Հմբ. 28 :

Լ. Ինչով հաւաստի ենք որ Աստուծոյ շնորհքը այժմ՝ եկեղեցւոյ վրայ է, և պիտի մնայ ցվերջ աշխարհի :

Պ. Նոյն իսկ Յիսուսի Քրիստոսի և իր Առաքելոյն հետեւեալ խօսքերովը : « Ենեցից զեկեղեցի իմ և գրունք դժոխոց մի յաղթահարեսցին զնա » . Մատ. Գլ. ԺԶ. Հմբ. 18 : « Եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև ի կատարած աշխարհի » . Մատթ. Գլ. ԻԲ. Հմբ. 20 : « Եմա փառք յեկեղեցւոյն և ի Քրիստոս Յիսուս, յամենայն ազգս յախտեցի . ամէն » . Առ Եփես. Գլ. Գ. Հմբ. 21 :

Լ. Ինչու համար եկեղեցին մի է :

Պ. Վասն զի իբրև հոգևոր մարմին իրեն միակ գլուխ ունի Քրիստոսը, և կը կենդանանայ Աստուծոյ միակ Հոգւովը : « Մի մարմին և մի հոգի :

որպէս և կօչեցարուք ՚ի մի յոյս կօչման ձերոյ : Մի է Տէր, մի է հաւատք, մի մկրտութիւն : Մի Աստուած և հայր ամենեցուն » . Առ Եփես. Գլ. Գ. Հմբ. 4-5-6 :

Լ. Ի՞նչպէս աւելի որոշ կերպով կրնանք գիտնալ թէ Քրիստոս միակ եկեղեցւոյ միակ գլուխն է :

Պ. Պօղոս առաքեալ կ'ըսէ թէ, եկեղեցին, ըստ որում չէնքն է Աստուծոյ, այլ հիմն չի կրնար ունենալ, քան զեղեայն որ է Յիսուս Քրիստոս » . Առ Կորնթ. Գլ. Գ. Հմբ. 10-11 : Ռուսի, եկեղեցին, իբր մարմին Քրիստոսի, չի կրնար ուրիշ գլուխ ունենալ եթէ ոչ Յիսուս Քրիստոս : Յազգաց յազգս աւելոյ յախտենալիսն եկեղեցին, յախտենալիսն զվսոյ մը պէտք ունի, որ է միայն Քրիստոս : Անոր համար առաքեալք ուրիշ կերպով չէին կոչուեր, բայց միայն եկեղեցւոյ սպասաւոր բաւով : Տես. առ Կօղոս. Գլ. Ա. Հմբ. 22, 23 : Վասն որոյ առաքեալքն ալ սարկաւադ եկեղեցւոյ կը կոչուին :

Լ. Եկեղեցւոյ միութիւնը ի՞նչ պարտուց կենթարկէ զմեզ :

Պ. Փութալ պահելու զմիութիւն հոգւոյն՝ յօգիւ խաղաղութեան . Առ Եփես. Գլ. Գ. Հմբ. 3 :

Լ. Ի՞նչպէս կրնանք համաձայնեցնել եկեղեցւոյ միութիւնը ուրիշ շատ մը սուանձին և ինքնագլուխ եկեղեցիներու հետ . զոր օրինակ, Երուսաղէմայ, Մնախքի, Ալեքսանդրիոյ, Կոստանդնուպօլսոյ և Ռուսիոյ :

Պ. Ասոնք Տիեզերական եկեղեցին կաղմոջ մասնաւոր եկեղեցիներ են, զի ասոնց առ երևոյթ բաժանուով չարգելուր զանոնք Տիեզերական եկեղեցւոյ միակ մարմնայն մեծ անդամներն ըլլալէ,



իրենց միակ գլուխ ունենալով Գրիստոս, և հաւատոյ ու հնորհաց մի և նոյն հոգին = Այս միութիւնը կ'երևոյ հաւատոյ միասնայն խոստովանութեան, աղօթից և խորհրդոյ մէջ :

Լ. Արդեօք կայ մօտակայ միութիւն մը 'ի մէջ երկրային և երկնային եկեղեցւոյ :

Պ. Կայ, քանզի այս երկու եկեղեցիք փոխադարձ հաղորդակցութիւն ունին առ միմեանս և որոց գլուխն է Տէրն մեր Յիսուս Քրիստոս :

Լ. Հաղորդակցութեան ի՞նչ միջոց կայ ստորին և վերին եկեղեցեաց մէջ :

Պ. Հաւատոյ և սիրոյ մաղթանքը = Որովհետև ստորին զինուորեալ եկեղեցւոյ վերաբերող հաւատացեալք իրենց աղօթքները առ Աստուած վերառաքելով վերին եկեղեցւոյ մէջ գանուող սրբոց օգնութիւնը կը հայցեն : Անոնք ալ, որ աստիճանաբար մօտ են Աստուծոյ, իրենց բարեխօսութեամբ կը զօրացունեն ու Աստուծոյ կրօնաւորացանն երկրի վրայ գանուող հաւատացեալոց աղօթքները, և ըստ կամաց Աստուծոյ՝ բարեպէս կրննործեն անոնց, կամ անտեսանելի զօրութեամբ, կամ յայտնութեամբ իւրեանց, կամ ուրիշ միջոցներով :

Լ. Ի՞նչ բանի վրայ հիմնուած է ստորին եկեղեցւոյ այն կանոնը՝ որով իր աղօթից մէջ օգնութիւն կը կոչէ վերին եկեղեցւոյ սուրբերը :

Պ. Այն սրբազան աւանդութեան վրայ որոյ սկզբունքը կը գտնուին Ս. Գրոց մէջ. օրինակի համար հոն՝ ուր մարգարէն Դաւիթ աղօթելով կ'աղաղակէ « Տէր Աստուած Աբրահամու, Իսահակայ և Իսրայելի հարցն մերոց » . ասով սուրբերը կը յիշատակէ որպէս զի զօրացնեն իւր մաղ-

թանքը, ինչպէս որ հիմայ ալ ուզղափառ եկեղեցին յօգնութիւն կը կոչէ զՔրիստոս մեր Տրչմարիա Աստուածը անոր Ամենամաքուր մօրը և բոլոր սրբոց բարեխօսութեամբը . Տես Մնայ . Ա. Գիրք . Գ. Գլ. ԻԹ. Հմբ . 18 = Կիւրեղ երուսաղեմացին իր Ս. Պատարագի մեկնութեան մէջ կ'ըսէ « կը յիշատակենք և 'ի Տէր հանգուցեալ Պատրիարքները, մարգարէները, առաքեալները և մարտիրոսները, որպէս զի Աստուած նոյա աղօթիւքն ու բարեխօսութեամբ մեր աղօթքն ընդունի » վրդպետ . Ե. Գլ. 6 Հմբ : Մեծն Բարսեղ կ'ըսէ քառասուն մարտիրոսաց ճառին մէջ = « Ըլլաւ ասցեալն այդ քառասնից կ'ապաւինի, զուարթն առ նոյնս կը դիմէ, մին թշուառութենէ աղատելու միտը զուարդութեան մէջ յարատեւելու համար = Հոս բարեպաշտ կիսն իւր զուակացն համար կը մաղթէ, բացակայ ամուսնոյն վերադարձը կը խնդրէ, և հիւանդին բժշկութիւնը կը հայցէ = Ընդ մարտիրոս ըլլան ձեր սահանջմունք » :

Լ. Ս. Գրքէն ստոր վրայօք վկայութիւն մը կայ :

Պ. Յովհաննէս աւետարանիչ իր Յայտնութեան մէջ հրեշտակ մը տեսաւ յերկինս « Եւ տուաւ նրմա խունկ ըսողում, զի մատուցէ զաղօթս ամենայն սրբոց 'ի վերայ ոսկեղէն սեղանոյ և առաջի աթոռոցն, և ել ծուխ խնկոցն աղօթք սրբոցն 'ի ձեռաց հրեշտակացն առաջի Աստուծոյ » Յայտ . Գլ. Բ. Հմբ . 3, 4 :

Լ. Երկնից սրբոց բարերար յաճախմանց վրայ Ս. Գրքէն վկայութիւն մը կայ :

Պ. Սուրբն Աւետարանիչ Մատթէոս Յիսուսի



Քրիստոսի խաչելութենէ յետոյ կը պատահէ « Գերեզման բացան, և բազում մարմինք ննջեցեալոց սրբոց յարեան : Եւ երեալ 'ի գերեզմանաց յետ յարութեան նորա, մտին 'ի քաղաքն սուրբ և երեսեցան բազմաց » : Գլ. ԻԷ. Հմբ. 32-33 : Եւ որովհետև այսպիսի մեծ հրաշք մը չէր կրնար առանց նպատակի մ'ըլլալ, վասն որոյ հնթադրելու թէ անոնք յարեան և երեսեցան Յիսուսի 'ի դժոխս իջումն և փառաւոր յարութիւնն աւետելու համար և այսպիսի քարոզով հին օրինաց եկեղեցւոյն մէջ ծնողներն ստիպուին մտնելու նուրայ կտակարանին նորակազմ եկեղեցւոյն մէջ :

Լ. Այլ վկայութիւնները կը հաստատեն թէ երկրէս չուող սուրբերը երկնային միջոցներով կը հրաշագործեն :

Պ. Թագաւորութեանց չորրորդ գիրքը կը վերկայէ որ մեռեալ մը յարութիւն առաւ միայն գալչելով Եղիսէ մարգարէին ոսկերաց . Գլ. ԺԳ. Հմբ. 21 : Պօղոս առաքեալն չէ թէ միայն ինքնին հրաշքներ և բժշկութիւններ կը գործէր, այլ մինչև 'ի հիւանդս տանել 'ի քրտանէ նորա թաշկինակս կամ վարժամակս, և մերժել 'ի նոցանէ ակտիցն . Գործք Առաք. Գլ. ԺԹ. 12 : Այս օրինակներէն կ'երեւայ որ' սուրբերը մահուանէն յետոյ կրնան բարեգործել երկրային միջոցներով որոնք' անոնցմով կը սրբանան :

Գրիգորիոս Աստուածաբանը իր Յուլիանոսի Ա պարսաւանաց մէջ կ'ըսէ . « Չը պատկառեցա՞ր յանուն Քրիստոսի եղամ զոհերէն, չը փախցար այն մեծ շահատակներէն այսինքն Յովհաննէսէն, Պետրոսէն, Պօղոսէն, Թեկղայէն, Յակոբոսէն, Ստեփանոսէն, Դուկասէն, Անդրէասէն, Թեքլաս

և միւս անոնցմէ առաջ կամ ետքը, վասն ճշմարտութեան շահատակոսներէն, որք յօժարարար հուրի և սուրի, դազանայ և բռնաւորաց, ներկայ ու ապագայ արկածից դէմ կեցան իբրև օտար մարմին ունեցող կամ իբրև անմարմին և ինչո՞ւ համար . — Արպէս զի խօսքով անգամ չը մատնեն զճշմարտութիւնը : Քանի՞ պատիւներ և սօներ սահմանուեցան անոնց, որոնցմով դեւերը կը հալածուին, հիւանդութիւնները կը դարմանուին, որոնց լոկ մարմինները սուրբ Հոգիներու զօրութիւնն ունին երբ անոնց ձեռք դպցնենք, և որոց արեան կաթիլները մարմնոց կը ներգործեն և ախտերը կը բժշկեն » :

Դամասկացին կը գրէ . « Տէրն մեր Յիսուս Քրիստոս սրբոց մասունքը պարզեց մեզ՝ յազբիւր փրկութեան . յորմէ բղխին զանազան բարեգործութիւնք » : Կաև կը յաւելու . « Եւ անոնց միտացն ու մարմնոցը մէջ բնակեցաւ Աստուած » . կրօնագիտութիւն Գիւր. Գլ. ԺԵ. Հմբ. 3-4 :

Լ. Ինչո՞ւ եկեղեցին սուրբ է :

Պ. Արովհետև Յիսուս Քրիստոս սրբեց զայն իր չարչարանօքը, վարդապետութեամբ, աղօթիւքն ու խորհրդօքը : « Քրիստոս սիրեաց զեկեղեցի, և զանձն իւր մասնեաց վասն նորա : Զի զնա սրբեցէ սրբութեամբ աւազանին բանիւ : Զի կաղուսէ ինքն իւր յանդիման փառաւոր գեկեղեցի, զի մի ունիցի ինչ արատ, կամ աղտելութիւն, կամ այլ ինչ յայնպիսեաց, այլ զի իցէ սուրբ և անարատ » . Եփեսո. Գլ. Ե. Հմբ. 23-26-27 : Յիսուս իւր Հօրն Աստուծոյ հաւատացեալոց համար ըրած աղօթքին մէջ կ'ըսէ « Սուրբ արա ըզնոսս ճշմարտութեամբ քով, զի քո բանդ ճշմար



տութիւն է = Եւ 'ի վերայ նոցա եւ սուրբ առնեմ գանձն իմ, զի եղիցին և նոքա սրբեայք ճշմարտութեամբ» Յովհ. Գլ. ԺԷ. Հմբ. 17, 18:

Լ. Ինչպէս եկեղեցին սուրբ կըլլայ, քանի որ իր մէջ մեղաւորներ ալ կը պարունակէ:

Պ. Այն մեղաւորներն որք ճշմարիտ ապաշխարութեամբ ինչոյնքնին կը սրբեն՝ եկեղեցւոյ սուրբ ըլլալուն արգելք չեն ըլլար. իսկ անդիջ մեղաւորները երբեմն եկեղեցական իշխանութեան յայանի դործով, երբեմն ալ Աստուծոյ գաւաստանին անբռնելի ներգործութեամբը իրբեմնեալ անգամք կը կտրուին եկեղեցւոյ մարմինէն: Ուստի և այսպէս սուրբ կը մնայ. «Բարձէք զչարն 'ի միջոյ ձերմէ» . Ա. Կորնթ. Գլ. Ե. Հմբ. 13: «Այս հաստատուն հիմն Աստուծոյ կոյ և ունի զկնի քո զայս թէ ծանեաւ Տէր զայնտիկ որ իւրն են և 'ի բաց լիցի յանիրաւութենէ՝ ամենայն որ անուանէ զանուն Տեառն» առ Տիմ. Գլ. Բ. Հմբ. 19:

Լ. Ինչո՞ւ եկեղեցին ակեղերական կամ ընդհանրական կը կոչուի:

Պ. Քանզի չը սահմանուիր ոչ տեղւոյ մը, ոչ ժամանակի և ոչ ազգի մը մէջ, այլ կը պարունակէ իր մէջ ամեն տեղւոյ, ամեն ժամանակի և ամեն ազգի ճշմարիտ հաւատացեալք: Պօղոս առաքեալ կ'ըսէ թէ, Աւետարանը ընդ ամենայն աշխարհ կ'աճի և կը պաղարեւի. Ա. Կորոս. Գլ. Ա. Հմբ. 5-6: Եւ եթէ Քրիստոսն եկեղեցւոյն մէջ ոչ է հրէայ և ոչ հեթանոս, թրիստութիւն և անթրիստութիւն, խուժ, դուժ, սկիւթացի, ծառայ, աղատ, այլ ամենայն և յամենայնի Քրիստոս, Առ Կորոս. Գլ. Գ. Հմբ. 11: «Այսուհետեւ

որք 'ի հաւատոց անտի են, օրհնեն ընդ հաւատացելոյն Արարհամու» Առ Գաղա. Գլ. Գ. Համար 9:

Լ. Որո՞նք են ընդհանրական եկեղեցւոյ մասնաւոր արտօնութիւնքը:

Պ. Գլխաւորապէս ասոնց կը վերաբերին այն բարձր աւետիսները՝ որ կ'ըսեն թէ «Գրունք դըժոխոց մի յաղթահարեցին զնա: Թէ տէրը անոր հետ պիտի ըլլայ ցկատարած աշխարհիս, թէ անոր մէջը կը մնայ Աստուծոյ փառքը 'ի Յիսուս Քրիստոս յաւիտեանս. հետեալբար երբէք հաւատքէ չի կրնար ի յնուլ և ոչ ալ մեղանչել հաւատոյ ճշմարտութեանց դէմ՝ և ոչ ալ խտորիլ 'ի մոլորութիւնս: «Անտարակոյս կը խոստովանինք իրբեւ անդիմադրելի ճշմարտութիւն թէ ընդհանրական եկեղեցին չկրնար մեղանչել, ոչ ալ մոլորիլ ստութիւնը ճշմարտութեան տեղ ընդունելով: Քանզի սուրբ Հոգին անդադար եկեղեցւոյ հաւատարմաբար ծառայող հարց ու վարդապետաց ներգործելով յամենայն մոլորութեանց զերծ կը պահէ զայն»: Թուղթ առ Ս. Սինոդ Արևել. Պատր. յաղագս Ռու. Հաւատոյ. յօդ. 12:

Լ. Եթէ ընդհանրական եկեղեցին կը պարունակէ բոլոր աշխարհի մէջ գանուող ճշմարիտ հաւատացեալները, ուրեմն ասկէ կը հետևի որ ամեն հաւատացեալ անառժառ պէտք է անոր վերաբերի՝ փրկուելու համար:

Պ. Ճշմարիտ է ըսածդ. որովհետև Յիսուս Քրիստոս ըստ բանից Առաքելոյն «Է զլուխ եկեղեցւոյ և նա է Փրկիչ մարմնոյն» Առ Եփես. Գլ. Ե. Հմբ. 23: Արդ՝ անոր փրկութեան մաս ունենալու համար՝ պէտք է անդամ ըլլալ այն մարմն



նոյն, այսինքն՝ ընդհանրական եկեղեցւոյ : Պետ-  
րոս առաքեալն ալ կը գրէ, թէ մկրտութիւնը կը  
փրկէ զմեզ, ըստ նմանութեան Նոյի տապանին :  
Քանզի ինչպէս որ համաշխարհական ջրհեղեղէն  
ազատուողք Նոյի տապանաւն ազատուեցան՝ նոյն-  
պէս բոլոր յաւիտենական փրկութեան արժանա-  
ցողք միայն ընդհանրական եկեղեցւոյ մէջ կը  
զանեն զայն :

Լ. Ի՞նչ յիշատակ կ'արթնցնէ մեր մտայ մէջ  
եկեղեցւոյ արուած Արևելեան (Ανατολική) մակա-  
նունը :

Պ. Թէ՛ արքայութեան մէջ՝ որ յարեւել էր,  
կաղմուեցաւ մեր անմեղ նախահարց եկեղեցին՝  
և դարձեալ հոն անոնց մեղանշմանէն յետոյ փրկ-  
չին խոստմամբք փրկուողներուն եկեղեցւոյն նոր  
հիմը դրուեցաւ : Յարեւել՝ ՚ի Հրէաստան մեր  
Տէրը Յիսուս Քրիստոս մեր փրկութեան դործը  
կատարելով գրաւ իւր քրիստոնէական եկեղեցւոյ  
հիմը : Անկէ տարածուեցաւ բոլոր աշխարհ և  
մինչև ցայսօր ուղղափառ ընդհանրական և տիե-  
զերական հաւատքը, որ հաստատուած է եօթը  
ընդհանրական Սինոդներէ և անփոփոխ կը պահ-  
ուի իր նախնական մաքրութեամբը՝ Արևելեան  
հին եկեղեցեաց մէջ, ինչպէս նաև անոնց համա-  
փառ եղողներուն մէջ ալ որոնցմէ մէկն ալ է շը-  
նորհիւն Աստուծոյ բովանդակ Ռուսաց եկեղեցին :

Լ. Ինչո՞ւ համար եկեղեցին Առաքելական կը  
կոչուի :

Պ. Որովհետև նա միշտ անփոփոխ կը պահէ Ա-  
ռաքեալներէն ընդունած վարդապետութիւննե-  
րը • այսինքն՝ աւանդելով Ս. Հոգւոյն Հնորհքնե-  
րը սրբազան ձեռնադրութեամբ : Այս մաքրով ե-

պաշտցին կը կոչուի Ուղղափառ (Ὀρθόδοξος), այ-  
սինքն՝ ուղիղ հաւատացող : « Ապա այսուհետև  
ոչ էք օտարք և պանդուխտ, այլ քաղաքակիցք  
սրբոց և ընտանիք Աստուծոյ : Շինեալք ՚ի վերայ  
հիման առաքելոց և մարգարէից, որոյ է զլուխ  
անկեանն Յիսուս Քրիստոս » առ Եփես. Գլ. Բ.  
Հմբ. 19-20 :

Լ. Ի՞նչ կը սորվեցնէ մեզ հաւատոյ հանգանա-  
կը՝ եկեղեցին առաքելական կոչելով :

Պ. Կը սորվեցնէ առաքելոց աւանդութիւննե-  
րն ու վարդապետութիւնները հաստատուն պա-  
հել, ինչպէս նաև զգուշանալ այն վարդապետնե-  
րն ու վարդապետութիւններէն որք չեն հիմ-  
նուիր առաքելոց քարոզութեան վրայ : Պօղոս  
առաքեալ կ'ըսէ « Այսուհետև եղբարք հաստա-  
տուն կացէք և պինտ կալարուք զաւանդութիւն-  
սրն, զոր ուսարուք եթէ բանիւ և եթէ թղթով  
մերով » Բ. Թեոսաղ. Գլ. Բ. Հմբ. 14 : « Յաւնէ  
հերձուածէ՛ յետ միանգամ և երկիցս խրատելոց՝  
հրոժարեալիք » Առ Տիտ. Գլ. Գ. Հմբ. 10 : « Քան-  
զի բազումք են անհնազանդք, զբախօսք և մը-  
տախարք, մանաւանդ որ ՚ի թղթատութենէ ան-  
տի են, զոքս պարտ է ըմբերանել, որք զամե-  
նայն տունս կործանեն, և ուսուցանեն՝ զոր չէ  
արժան վասն զօջաքաղութեան » առ Տիտ. Գլ. Ա.  
Հմբ. 10-11 : « Ապա թէ և եկեղեցւոյն ոչ լուիցէ,  
եղեցի քեզ կրթե զհեթմանոսն և զմաքսաւոր »  
Մատթ. Գլ. ԺԷ. Հմբ. 17 :

Լ. Ի՞նչպէս կը պահուի առաքելական յաջոր-  
դութիւնը եկեղեցւոյ մէջ :

Պ. Եկեղեցական քահանայապետութեամբ :

Լ. Ո՞ւրկէ կ'սկսի Ուղղափառ եկեղեցւոյ քա-



հանայապետութիւնը :

Պ. Նոյն ինքն Յիսուս Գրիստոսէն . և Ս. Հոգւոյն առաքելոց վրայ իջնալէն : Այն ատենէն 'ի վեր կը շարունակուի անդադար՝ քահանայութեան խորհրդովն եղած յաջորդական ձեռնադրութեամբ . « Եւ նա եղ զմանս առաքելաւ , զմանս մարդարէս , զմանս աւետարանիչս , զմանս հովիւս և վարդապետս 'ի հաստատութիւն սրբոց , և 'ի դորժ պաշտաման , 'ի շինուած մարմնոյն Գրիստոսի » առ Եփես . Գլ . Գ . Հմբ . 11—12 :

Հ. Որն է այն քահանայապետական իշխանութիւնը որ կրնայ ներդրո՞ծել ընդհանրական եկեղեցւոյ մէջ :

Պ. Տիեզերական Երկրորդ (Օւխոսւմενիկի Տնօճօճ) .

Հ. Ո՞ր քահանայապետներու կը հնազանդին տիեզերական եկեղեցւոյ գլխաւորագոյն մասերը :


Պ. Ուղղափառ Պատրիարքաց և Ս. Սինոդոսի :

Հ. Ո՞ր քահանայապետներուն կը հնազանդին ուղղափառ փոքրագոյն դաւառները և քաղաքները :

Պ. Մետրապօլիտայ , արքեպիսկոպոսայ և եպիսկոպոսայ :

Հ. Ո՞ւսկից կրնանք ստրկիլ եկեղեցւոյ հնազանդիլ և անոր պահանջած պարտաւորութիւնքը կատարել :

Պ. Ի սուրբ և յԱստուածաշունչ դրոց . Ս. Առաքելոց կանոններէն , սուրբ , ընդհանրական և տեղական Սինոդներէն , սուրբ հայրերէն և վերջապէս եկեղեցւոյ աւանդութիւններէն :



### ՅՕԴՈՒԱԾ Ժ.

Հ. Ի՞նչու համար հաւատոյ հանդանակին մէջ մկրտութիւնը կը յիշուի :

Պ. Որովհետեւ հաւատքը կը կնքուի մկրտութեամբ և միւս խորհուրդներով :

Հ. Ի՞նչ է խորհուրդը (Μυστήριον) .

Պ. Խորհուրդն է սրբադորժութիւն , որով դազանի կերպով շնորհքը այսինքն Աստուծոյ փրկարար զօրութիւնը՝ կը ներդրո՞ծէ մարդուս :

Հ. Բանի՞ են խորհուրդք :

Պ. Եօթը . Ս. Մկրտութիւն (Βάπτισμα) . Բ. Ս. Միւսոն (άγιον Μυσρον) . Գ. Հաղորդութիւնը (Μετάληψις) . Դ. Ապաշխարութիւնը (Μετάνοια) . Ե. Բահանայութիւն (Իερասնոյ) . Զ. Հարսանիք (Γάμος) . և Է. Օծումն հիւանդաց (Ευχέλαιον) :

Հ. Ի՞նչ է այս եօթը խորհրդոց իւրաքանչիւրին զօրութիւնը :

Պ. Ս. Մկրտութեամբ մարդս խորհրդապէս կը ծնի 'ի հոգեւոր կեանս :

Բ. Ս. Միւսոնիւ կ'ընդունի այն շնորհքը որ կ'աճի և զօրանայ հոգեւորապէս :

Գ. Հաղորդութեամբ հոգեւորապէս կը սնանի :

Դ. Ապաշխարութեամբ ապաշխարողին հոգեւոր հիւանդութիւնքը կը դարմանուի , որ են մեղք :

Ե. Բահանայութեան խորհրդով մարդս կ'ընդունի այն շնորհքը , որով հոգեւորապէս կը վերածնի և կը սնուցանէ զուրիշները վարդապետութեան և խորհրդոց միջոցաւ :

Զ. Հարսանեաց խորհրդով կ'ընդունի այն շնորհքը , որով կը սրբուի հարսանեական հաղորդ :



դուժիւնը : Եւ բնական ծնունդն ու դաստիարակութիւնն զաւակաց : Մարտի Գլ. Ժ. Զ. Հմբ. 17 :

Ի, Իսկ օժմամբ կ'ընդունի մարմնոյ հիւանդութեանց բժշկութիւնը հողեւոր հիւանդութեանց դարմանովը :

Լ. Ինչո՞ւ հաւատոյ հանդանակին մէջ միւս խորհուրդները չեն յիշուած հապս միայն Մկրտտութիւն :

Պ. Արովհեան մկրտութեան վրայ վէճ կար թէ արդեօք պէ՞տք է զմանս կրկնամկրտել . զոր օրինակ հերեպսիկոսները , և այս խնդիրը լուծման կարօտ էր , որն որ արուեցաւ հաւատոյ հանդանակով :

### ՅԱՂԱՅՍ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ

Լ. Ի՞նչ է մկրտութիւնը :

Պ. Մկրտութիւնը խորհուրդ մ'է , որով հաւատացեալը իր մարմնոյն ջրի մէջ երրակի ընկըմամբ և Հօր Աստուծոյ և Արդւոյն և Ս. Հոգւոյն կոչմամբ , կը մեռնի մեղաւոր և մարմնական կենաց նկատմամբ՝ վերածնելով Ս. Հոգիէն 'ի սուրբ և 'ի հողեւոր կեանս . « Եթէ ոչ ոք ծնցի 'ի ջրոյ և 'ի հրոյ ոչ կարէ մտանել յարքայութիւնն Աստուծոյ » Յովհ. Գլ. Գ. Հմբ. 5 :

Լ. Ե՞րբ և ի՞նչպէս սկիզբն առաւ Մկրտութիւնը :

Պ. « Յովհաննէս քարոզեաց մկրտութիւն ապաշխարութեան ամենայն ժողովրդեանն , և աւեր զի որ դաւոցն է յեա նորա՝ 'ի նա հաւատացնէն այսինքն 'ի Յիսուս Քրիստոս » . Գործ . Գլ. Ժ. Ժ. Հմբ. 4 : Յետոյ Յիսուս Քրիստոս սրբեց մորտա :

թիւնը ընդունելով զայն Յովհաննէսէն : Ի վերջոյ իր յարութեանէն ետքը առաքեալներուն բացալայտ պատուէր տուաւ ըսելով « Գնացէք այստե՛հեան աշակերտեցէ՛ք զամենայն հեթանոսս , մըկըրտեցէ՛ք զոսա յանուն Հօր և Արդւոյ և Հոգւոյն սրբոյ » Մատթ. Գլ. Իվ. Հմբ. 19 :

Լ. Մկրտութեան սրբագործութեան մէջ ի՞նչ գլխաւոր բան կայ :

Պ. Զրին մէջ երրակի ընկըմամբ յանուն Հօր և Արդւոյ և Հոգւոյն սրբոյ :

Լ. Ի՞նչ կը պահանջուի մկրտութիւն ընդունելի փափաքողներէն :

Պ. Ապաշխարութիւն և հաւատք : Անոր համար մկրտութիւնը դեռ չկատարուած հաւատոյ հանդանակը կը կարգացուի . « Ապաշաւեցէ՛ք և մկրտեցի իւրաքանչիւր ոք 'ի ձէնջ , յանուն Տեառնն Յիսուսի և Քրիստոսի 'ի թողութիւն մեղաց , և ընկալի՛ք զաւետիս Հոգւոյն սրբոյ » Գործ . Գլ. Բ. Հմբ. 38 :

Լ. Աւրեմն ի՞նչպէս կը մկրտուի մանուկը :

Պ. Ծնողաց և կնքահօր հաւատքով . որանք կը պարտաւորին հաւատք ստրվեցնել անոր երբ չափահատութեան հասնի :

Լ. Ս. Գրքէն կայ վկայութիւն մը թէ երախան պէտք է մկրտել :

Պ. Ըստ հին օրինաց թրիաքտութիւնը կը կատարուէր ութնօրեայ երախային վրայ , և քանզի մկրտութիւնը նոր կտակարանին մէջ թրիաքտութեան տեղ կը բռնէ՝ ուստի պէտք է երախան մկրտել :

Լ. Ինչէ՞ն յայտնի է որ մկրտութիւնը թրիաքտութեան տեղ կը բռնէ :



Պ. Առաքելոյն առ հաւատացեալս ուղղած հե-  
տեւեալ խօսքերէն . « Որով թրխատեցայք հա-  
ւատովք զանձեռագործ թրխատութիւնն , 'ի  
մերկանալ զանդամս մարմնոյ թրխատութեամբն  
Քրիստոսի . Թաղեալք ընդ նմին 'ի մկրտութեա-  
նրն » Առ կող. Գլ. Բ. Հմբ. 11—12 :

Ը. Մկրտութեան ատեն ինչո՞ւ համար կնքա-  
հայր մը պէտք է :

Պ. Որպէս զի եկեղեցւոյ առջև երաշխաւորէ  
մկրտելոյն հաւատքին համար , և մկրտութենէ  
վերջը զայն հաւատոյ մէջ հաստատելու փոյթն  
յանձն առնու : Տես Դիոն . Արիս . Եկեղ . Քահա .  
Գլ. Բ :

Ը. Ինչո՞ւ համար մկրտութեան ատեն հրաժար-  
ման ուխտը (Ἐξομωσμός) կ'ըլլայ :

Պ. Սատանան վանելու համար , որն որ Ագա-  
մայ սեղանչելովք անգի ունեցաւ մարդոց մէջ .  
և տեսակ մ'իշխանութիւն անոնց վրայ ստացաւ  
որք իբրև գերի էին իրեն : Ուստի Պողոս առա-  
քեալ կ'ըսէ . « Յորս երբեմն գնայիք ըստ յաւի-  
տենի աշխարհիս այսորիկ , ըստ իշխանին իշխա-  
նութեան օգոյս այսոյ , որ այժմն ընդ մտեալ է  
յորդինն ապստամբութեան » : Եփես . Գլ. Բ .  
Հմբ . 2 :

Ը. Ի՞նչ բանի վրայ կը կայանայ հրաժարման  
զօրութիւնը :

Պ. Յիսուսի Քրիստոսի անուան վրայ , զորն  
որ օգնութեան կը կոչեմք աղօթիւք և հաւա-  
տով . վասն զի Յիսուս Քրիստոս հետեւեալ խոս-  
տումք տուաւ հաւատացելոց . « Եւ հանցեն զեւս  
յանուն իմ » . Մարկ . Գլ. Ժ. 9 . Հմբ . 17 :

Ը. Ի՞նչ զօրութիւն ունի խաչին նշանք սոյ և

ուրիշ պարագաներու մէջ :

Պ. Այն զօրութիւնը ունի . ինչ որ հաւատքով  
բերենն արտադրուած Յիսուսի Քրիստոսի ա-  
նունը : Նոյնն խաչի նշանը՝ ձեռ. օք կամ ս և է  
կերպով դրոշմեալ . « Արդ , ոչ կ'ամանելմք խոս-  
տովանիկ զխաչեալն . այլ պարձանօք խաչակնքեմք  
և եղիցի այն ի կնիք ամենեցուն , ուտելն և յրմ-  
պել , յելս և ի մուսս , ի քուն թէ յարթնի ,  
յընթանալ և ի հանգչիլ : Մեծ պահապան իրի  
աղքատաց , իրին հիւանդաց . զի յաստուածուսս  
է շնորհս , ի նշան հաւատացելոց և յերկիւղ դի-  
ւաց » : Կիւրղի Քրիստ . Գլ. Ժ. Գ . 36 :

Ը. Ե՞րբ սկիզբն առաւ խաչակնքելու դորձա-  
ծութիւնը :

Պ. Առաքելոց ժամանակներէն . տես Դիոն .  
Արիս . վասն եկեղ . Քահ . Գլ. Բ . և Ե . Տերտիղ .  
Յաղ . Ստեփ . Գլ. Գ . և վասն Յարու . Գլ. Ը :

Ը. Ի՞նչ կը նշանակէ այն ճերմակ հագուստը  
զոր կը հագնին մկրտեալք մկրտութենէն վերջը :

Պ. Հողւոյ մաքրութիւնը և քրիստոնէական  
կեանքը :

Ը. Ինչո՞ւ մկրտելոյն վրայ խաչ մը կը դրուի :

Պ. Ի մշտատեւ յիշատակ Տիրոջ այն պատուի-  
բանին՝ որ կ'ըսէ . « Եթէ ոք կամիցի զինի իմ՝ զայլ  
ուրացի զանձն , և առցէ զխաչ իւր » Մատթ .  
Գլ. Ժ. 9 . Հմբ . 24 :

Ը. Ի՞նչ կը նշանակէ մկրտեալը կանթեղով ա-  
ւագանին շուրջը դարձունելը :

Պ. Այն հոգեւոր լուսաւորութեան :

Ը. Ի՞նչպէս պէտք է հասկնալ հաւատոյ հան-  
դանակին « 'ի մի մկրտութիւն » բառը :



Պ. Ասի կը ցուցնէ որ մկրտութիւնը չկրնար կրկնուիլ :

Հ. Ինչո՞ւ համար մկրտութիւնը չկրնար կրկնուիլ :

Պ. Մկրտութիւնը հողեւոր ծնունդ է, և մարդը անգամ մը միայն կը ծնի : Ասոր համար և մէկ անգամ մը միայն կը մկրտուի :

Հ. Ի՞նչ պէտք է կարծել անոնց համար որ մը կըրտութենէ վերջն ալ կը մեղանչեն :

Պ. Ասոնք աւելի յանցաւոր են իրենց մեղաց համար քան թէ անոնք որ չը մկրտուած մեղաց մէջ կ'իյնան . ըստ որում առաջինք Աստուծոյ մասնաւոր շնորհաց օգնութիւնն ունէին զբարիս գործելոյ, ու մերժեցին զայն : « Զի եթէ փախտցեալք 'ի պղծութեանց աշխարհի, զիտութեամբ Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի քրիստոսի, և դարձեալ ընդ նոյնս շարեալք պատիցին, եղիցին նոցա վախճանն չար քան զառաջինն » : Պետ. թուղթ Բ. Գլ. Բ. Հմբ. 20 :

Հ. Մկրտութենէ ետքը մեղանչողներուն համար ներողութեան միջոց մը չկրնար ըլլալ :

Պ. Կրնայ ըլլալ և այս ալ ապաշխարութիւնն է :

ՅԱՂԱԳՍ Ս. ՄԻԻՌՈՆԻ

Հ. Ի՞նչ է սուրբ Միւռոնը :  
Պ. Սուրբ Միւռոնը խորհուրդ մ'է, որով մարմնոյն մէկ բանի տեղերը յանուն Հոգւոյն սրբոյ օծուելով անոր շնորհքները կ'ընդունի հաւատացեալն . այն շնորհքներն որոնցմով կ'աճի և կը զօրանայ հոգեւոր կեանքը :  
Հ. Սուրբ Գիրքն այս խորհուրդոյն համար բան

մը կը յիշէ :

Պ. Այս խորհուրդոյն ներքին աղեւցութեանը վրայօք հետեւեալները կ'ըսէ Առաքեալն Յովհաննէս . « Եւ դուք օծութիւն ունիք առ 'ի սրբոյն, և դիտէք ամենքին : Եւ օծութիւնն զոր դուք ընկալարուք 'ի նմանէ, բնակեցէ 'ի ձեզ, և չէ ինչ պիտոյ՝ եթէ ոք զձեզ ուսուցէ, այլ որպէս զի նորա օծութիւնն ուսուցանիցէ զձեզ վասն ամենայնի . և ճշմարիտ է՝ և չէ սուտ . և որպէս ուսոյն զձեզ, կայք 'ի նմա : » (Յովհ. թուղթ Ա. Գլ. Բ. 20, 27) : Նոյնպէս Պօղոս Առաքեալն ալ կ'ըսէ . « Այլ որ հաստատեայն զմեզ ձեօք հանգերձ 'ի քրիստոս՝ և օծ զմեզ . Ասուած է . որ և կնքեայն զմեզ, և ետ զառհաւատչեայ Հոգւոյն : » Բ. Կոր. Գլ. Ա. 24, 22 : Ասկից առնուեցան օծման նուիրազործութեան ժամանակ ըսուած այս խօսքերն . « Կնիք պարգեւի Հոգւոյն Սրբոյ » :

Հ. Ս. Միւռոնի արտաքին ներդործութեան համար ալ Սուրբ Գիրքը տեղ մը բան մը կ'ըսէ :

Պ. Կարելի է որ Յովհաննէս Առաքելոյն խօսքերը այս կատարումն օժման ալ վերաբերին, բայց աւելի ստոյգն այս է որ Առաքեալք, Հոգւոյն Սրբոյ շնորհքները ձեռաց զօրութեամբ կը բայխէին մկրտելոց : Տես Գործք Առ. Գլ. Բ. 14, 16 : Իսկ յաջորդք Առաքելոց ձեռաց գրութեան տեղ սահմանեցին Ս. Միւռոնի օծումը, որուն օրինակ կրնային առնուլ Հին օրինաց ժամանակներուն մէջ օժման գործածութիւնը : Տես Ելեց. Գլ. Լ. 25 . Թաղաւորաց Գ. Կրք. Գլ. Ա. 39 . Գիտնեօիոս Արիստաղացի . Յաղաղս Եկեղեցական նուիրապետութեան . (Դասակարգու



Թեան) Գլ. Դ :

Լ. Ի՞նչ գիտելիք կայ Ս. Միւռնի վրայ :

Պ. Անոր նուիրագործութիւնը միայն ծայրագոյն Հայրապետաց կը վերաբերի, իբրև յաջորդք Առաքելոց, որոնք ձեռք կը դնէին Սուրբ Հոգւոյն շնորհքները բաշխելու համար :

Լ. Ի՞նչ կը նշանակէ Դ մասնաւորի ճակատի օժումը :

Պ. Սրբացումն մտաց և բանին :

Լ. Կուրծքի՞ օժումը :

Պ. Սրտի և ցանկութեանց սրբացումն :

Լ. Ականջի, աչաց և բերանի՞նը :

Պ. կը նշանակէ սրբացումն զգայարանաց :

Լ. Զեռաց և ոտիցն ինչ կը նշանակէ :

Պ. Սրբացումն գործոց, և ամենայն ընթացից քրիստոնէի :

### ՅԵՂԱԳՍ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

Լ. Ի՞նչ է հաղորդութիւնը :

Պ. Հաղորդութիւնը խորհուրդ մ'է, որով հաւատացեալն ընդ տեսակաւ հացին և գինւոյն ինքրն մարմին և արիւնն Քրիստոսի կը ճաշակէ վաւրն յաւիտենական կենաց :

Լ. Ի՞նչպէս հաստատուեցաւ այս խորհուրդը :

Պ. Յիսուս Քրիստոս իւր չարչարանքէն առաջ կատարեց այս խորհուրդն ներկայացունելով կանխաւ իւր չարչարանաց կենդանի պատկերն և հաղորդակից ընելով խորհրդոյն զԱռաքեալս. նոյն ատեն տուաւ նաև անոնց պատուէր կատարելու միշտ այս խորհուրդը :

Լ. Հաղորդութեան խորհրդոյն կատարման հա-

մար Ֆրիստոնէից ընելիք արարողութեան նըկատմամբ Ի՞նչ գիտելիք կայ :

Պ. Թէ այս խորհուրդն է ամենէ վսեմ և գլխաւորագոյն մասն քրիստոնէական արարողութեանց (Τελετουργία) :

Լ. Ի՞նչպէս կ'անուանէ այն նուիրագործութիւնն որով կը կատարի Հաղորդութեան խորհուրդը :

Պ. Պատարագ (Λειτουργία) կ'անուանուի :

Լ. Ի՞նչ կը յայտնէ Պատարագ բառը :

Պ. կը նշանակէ նուիրագործութիւն մարմնոյ և արեան Տեառն վասն ամենեցուն :

Լ. Ի՞նչ գիտելիք կան Պատարագը կատարուելիք տեղոյն վրայ :

Պ. Թէ անպատճառ պէտք է կատարուի տաճարի մէջ, որոյ խորանը և վէմը (Αναμνησιον) որու վրայ կը սրբագործուի խորհուրդը, Գահաւայացապետէն օժուած ըլլալու է :

Լ. Ի՞նչ պատճառաւ եկեղեցի կը կոչուի տաճար :

Պ. Արովհետև հոն կը ժողվուին հաւատացեալք աղօթից և խորհրդոց կատարմանը համար, և այն հաւատացեալները եկեղեցին կը կազմեն :

Լ. Ինչո՞ւ համար սուրբ վէմ՝ կ'անուանուի այն սեղանը որոյ վերայ Հաղորդութեան խորհուրդը կը կատարի :

Պ. Արովհետև Յիսուս Քրիստոս, իբրև Թաղաւոր, աներևութապէս հոն ներկայ է :

Լ. Ի՞նչ կարգաւ կը կատարուի Աստուածային Պատարագը :

Պ. Նախ՝ Հաղորդութեան նիւթը կը պատրաստուի : Բ. հաւատացեալք կը պատրաստուին Հա-



զորդութեան և ապա՝ բուն խորհուրդը կը կատարի :

Լ. Ի՞նչպէս կ'անուանուի խորհրդոյն նիւթը պատրաստուելիք տեղը :

Պ. Կ'անուանուի խորհրդարան (Προσκουμένη) կամ մատուցարան :

Լ. Ի՞նչ պատճառաւ այսպէս կ'անուանուի Պատարագին առաջին տեղը :

Պ. Այսպէս կ'անուանուի ըստ սոխորութեան ֆրիստոնէից որ հաց և գինի կը տանէին եկեղեցին Ստաուածային խորհրդոյն համար : Ուստի այս հացն ալ այն խօսքէն առնելով ընծայ (Προσφορά) կամ օխրանա կը կոչուի :

Լ. Ի՞նչ նպատակ ունի խորհրդարանն ըստ սրբութեան Պատարագին :

Պ. Յիշատակ ըլլալով մարդարէութեանց և նախանկարից . ևս նոյն իսկ Յիսուս ֆրիստոսի ծննդեան և չարչարանաց վերաբերեալ գիպաց , նուիրագործիչը խորհրդոյն կատարմանը պէտք եղածին չափ մասնը ընծայէն կ'առնու , մաս մ'ալ ջրով խառնեալ գինիին , որ սուրբ Սիլիհին մէջ կը գրուի , և նոյն ատեն կը յիշատակէ նուիրագործիչը բոլոր եկեղեցին , կը փառաւորէ զփառաւորներս սուրբս , կ'աղօթէ կենդանեաց և ննջեցեաց , մասնաւորապէս իյխանութեան մէջ զբանուողներու և ընծաները հաւատով և ջերմեան զութեամբ մատուցանողներուն համար :

Լ. Ո՞րպիսի է խորհրդոյն հարկաւոր հացը :

Պ. Այնպէս ինչպէս որ կը հասկցուի նոյն իսկ հաց (Άρτος) անուանակոչութենէն և խորհրդոյն սրբութենէն և ըստ Յիսուս ֆրիստոսի և Առաջեկող օրինակէն , այսինքն է հաց խմորեալ , մա-

քուր և ցորենէ :

Լ. Ի՞նչ կը նշանակէ՝ Հաղորդութեան մէջ սահմանուած հացին մէկ ըլլալը :

Պ. կը նշանակէ ըստ բացատրութեան առաքելոյն թէ՛ « Մի հաց՝ մի մարմին եւ մը բազումքս գի ամենեքին ՚ի միոյն հացէ անտի վայելմը » : Կորնթ. Ա. Գլ. Ժ. Հմբ. 17 :

Լ. Ի՞նչ պատճառաւ Հաղորդութեան հացը գառն Ստաուծոյ կը կոչուի :

Պ. Որովհետեւ Յիսուս ֆրիստոսի չարչարանաց պատկերը կը ներկայացունէ , ինչպէս որ հին կը տակարանի մէջ ալ նորա չարչարանքը կը ներկայէր Պասեքին գառնը :

Լ. Ի՞նչ է Պասեքին գառնը :

Պ. Գառն , զոր իսրայէլացիք կը մորթէին հըրամանաւն Ստաուծոյ և կուտէին ՚ի յիշատակ իրենց՝ եղիպտոսի ներդրութիւններէն ազատուելուն :

Լ. Ի՞նչ պատճառաւ Հաղորդութեան խորհրդոյն գինին ջրոյ հետ կը խառնուի :

Պ. Որովհետեւ բոլոր այս նուիրագործութիւնը կարգադրուած է Տիրով չարչարանացը համեմատ , որ ատեն իւր տիգամուխ կողէն արիւն և ջուր ըզխեցաւ :

Լ. Ի՞նչպէս կը կոչուի Պատարագին այն մասը որով հաւատացեալք խորհուրդն ընդունելու կը պատրաստուին :

Պ. Նախնիք Պատարագ երախայից անուանեցին զայն , վասն զի այն ունիկորութեան համար մը կըրտեալներուն և հաղորդուողներուն հետ մէկ տեղ կ'առնուին երախայք ալ , այսինքն անոնք , որոնք մկրտութեան կը նախապատրաստուին , նոյնպէս նաև առաջ Հաղորդութիւն առնուլ չը



կրցող գղջացեալք :

Լ. Ի՞նչ բանով կ'սկսի Պատարագին առաջին մասը :

Պ. Ամենասուրբ Երրորդութեան արքայութիւնն օրհնարանելով կամ փառաբանելով :

Լ. Ի՞նչ կը պարունակէ Պատարագին այս մասը :

Պ. Մաղթանք, օրհներգութիւններ և առաքելական գրոց և աւետարանի ընթերցուածներ :

Լ. Այն մասին վերջն ի՞նչ բան կայ :

Պ. Երախայից՝ եկեղեցիէն դուրս ելլելու հրաման կը արուի .

Լ. Ի՞նչպէս կ'անուանի Պատարագին այն մասը, որում հաղորդութեան խորհուրդը կը կատարուի :

Պ. Պատարագ հաւատացեաց կ'անուանուի . որովհետեւ միայն հաւատացեալք այսինքն մկրտեալք հրաման ունին այն ատեն Սրբագործութեան ներկայ դանուելու :

Լ. Ո՞րն է Պատարագին այս մասին գլխաւորագոյն կէտը :

Պ. Այն խօսքերուն արտասանութիւնն, զորս օրինադրողն խորհրդին՝ Յիսուս Քրիստոս ըսաւ . « Առէք, կերէք, այս է մարմին իմ : Արբէք ՚ի դմանէ ամենեքեան . զի այդ է արիւն իմ՝ նորոյ ուխտի » : Մատթ. Գլ. ԻԶ. Հմբ. 26, 27, 28 և հետեւարար ամենասուրբ Հոգւոյն ւռաքումն և պարզեներն օրհները, այսինքն մատուցեալ հացին և գինոյ :

Լ. Ի՞նչ պատճառաւ գլխաւորագոյն կէտն այդ է :

Պ. Որովհետեւ այն վայրկենին այն պարզեւնեւրն, այն է մատուցուած հացն և գինին, կը փոխուին և կամ կը գոյափոխին ՚ի ճշմարիտ մար-

մին և արիւն Քրիստոսի :

Լ. Ի՞նչ կ'իմացուի գոյափոխութիւն բառով :

Պ. Արեւելեան Պատրիարքաց հաւատոյ հանդանակն կ'ուսուցանէ որ գոյափոխութիւն (Με-τουσθεωσις) բառով՝ հացին և գինոյն ՚ի ճշմարիտ մարմին և արիւն Քրիստոսի գոյափոխուիլը կատարելապէս չբացատրուի . ըստ որում այդ բանն ամեն մտաց անխմանալի է, բաց յԱստուծոյ միայն սա կրնայ հաստատուիլ թէ, ճշմարտապէս, իրապէս և բոլորովին . հացը կ'ըլլայ նոյն ինքն ճշմարիտ մարմինն, և գինին ճշմարիտ արիւն Տեառն : Վասն որոյ Յովհաննէս Դամասկացի այսպէս կը գրէ Տիրոջ սուրբ խորհրդոյ վրայօք . « Սուրբ կուսին մարմինէն ճշմարտապէս Աստուածութեան հետ միացեալ մարմինն է . բայց ոչ թէ երկինք համբարձեալ մարմինն երկինքէն վար կ'իջնայ, այլ հացն ու գինին ինքնին կը գոյափոխին ՚ի մարմին և յարիւն Աստուծոյ . իսկ եթէ հասկնալ կ'ուզեմք թէ ի՞նչպէս կ'ըլլայ այս գոյափոխութիւնը, բաւ է որ գիտնանք թէ Սուրբ Հոգւոյ ձեռամբ կ'ըլլայ, ինչպէս որ Հոգւոյն Սրբոյ միջոցաւ Սուրբ Աստուածածնէն մարմին առաւ . ուրիշ բան չեմք գիտեր, այլ միայն թէ Աստուծոյ խօսքը ճշմարիտ է, բացայայտ և ամենազօր . իսկ կերպն անքննելի : » Գիրք Դ. Գլ. ԺԳ :

Լ. Հաղորդութեան խորհուրդն ընդունիլ փափաքող ամեն մէկ անհատէ իսկ ի՞նչ բան կը պահանջուի :

Պ. Պէտք է որ այդ անհատներն՝ առաջի Աստուծոյ փորձեն իրենց խղճմտանքը, և զըլմամբ մաքրեն զայն ՚ի մեղաց ու ծոմ պահէն և աղօթք ընեն . « փորձեսցէ մարդ զանձն իւր, և ապա ՚ի



հայէ անախ կերիցէ, և 'ի բաժակէն արբցէ. զի որ ուտէ և ըմպէ անարժանութեամբ՝ դատաստան անձին իւրում ուտէ և ըմպէ, զի ոչ խորէ զմարմինն Տեսան» = Կորնթ. Ա. Գլ. ԺԱ. 28, 29 =

Լ. Քրիստոսի մարմնոյն և արեանն հաղորդուողն ի՞նչ օգուտ կը քաղէ =

Պ. Սերաիւ կը կապուի նոյն ինքն Յիսուս Քրիստոսի, և անով յաւիտենական կենաց մասնակից կ'ըլլայ. «Որ ուտէ զմարմին իմ, և ըմպէ զարիւն իմ. նա յիս բնակեացէ և ես 'ի նմա» = Յովհ. Գլ. 9. Հմբ. 37. «Որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, ունի զկեանս յաւիտենականս = Հմբ. 38 =

Լ. Պէ՛տք է յաճախակի հաղորդուիլ այս ամենասուրբ խորհրդոյն =

Պ. Նախնի քրիստոնեացք ամեն կիւրակէ կը հաղորդուէին, բայց արդի քրիստոնեաներէն քիչեր այնպիսի մաքրաւէտ կեանք մ'ունին, որ այս խորհուրդը միշտ ընդունելու պատրաստ վիճակի մէջ գտնուին = Ուստի Մայրն մեր Ս. եկեղեցի կը պատուիրէ մեզ որ հոգեւոր հօր մեր մեզքերը խոստովանինք և տարին չորս անգամ, կամ ամեն ամսու իսկ հաղորդութիւն առնու՞ք = Բայց անհրաժեշտ հրաման է ամեն մէկ քրիստոնէի ալ տարին մէկ անգամ հաղորդուիլն. Տես Ուղղափառ Դան. Մասն Ա. Հրց. 90 =

Լ. Ունկնդիրք որք Հաղորդութեան խորհրդոյն չեն կրնար մերձենայ, ի՞նչպէս կրնան հաղորդակից ըլլալ Աստուածային Պատարագին =

Պ. Կրնան և պարտին մասնակցիլ Պատարագին՝ աղօթիւք, հաւատովք և յարասե յիշատակութեամբ Տեսան մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ որ

պատուիրած է զայս ընել իւր յիշատակին համար = Դուկ. Գլ. ԻԲ. Հմբ. 49 =

Լ. Ի՞նչ յիշել պէտք է Պատարագի համար սրբազան պարգեւաց պատրաստութեան ատեն =

Պ. Պէ՛տք է յիշել զԳալուստ Քրիստոսի՝ 'ի կամաւոր չարչարանս, որ ինքզինքը զսէնց մարդկային ազգը վերկելու համար, մինչդեռ տասնեակու դեղերէ աւելի հրեշտակներ պատրաստ էին զինքը պահպանելու՝ իբր թագաւոր իւրեանց = Թագաւորն թագաւորաց և Տէրն տերանց կուգայ զոհուելու, եւն. (Պատարագ Աւագաբթութու) =

Լ. Սուրբ Վէճիկն մէջ հաղորդութիւն նուիրագործողներուն ի՞նչպիսի յիշատակութիւն կը պատշաճի խորհուրդը կատարած ժամանակինն =

Պ. Յիշատակութիւն խորհրդաւոր ընթերցաց Յիսուսի Քրիստոսի՝ Առաքելոց հետ, նոյնպէս իւր չարչարանացը, մահուանն ու թաղմանը =

Լ. Վարագոյրին քաշուելէն և գեղեցիկ գրան բացուելէն ետքը՝ սուրբ Պարգեւաց 'ի տես բերուիլը ի՞նչ բանի նշանակ է =

Պ. Նշանակ է երևմանն Յիսուսի Քրիստոսի, նորա յարութենէն ետք =

Լ. Այս վերջին անգամ Աստուածային Պարգեւաց ժողովուրդին ցուցուիլն ու այնուհետև պահուիլն ինչ բանի նշանակ է =

Պ. Յիսուսի Քրիստոսի երկինք համբառնալուն =

Լ. Աստուածային Հաղորդութեան խորհուրդն միշտ պիտի մատակարարի՝ Քրիստոսի ճշմարիտ եկեղեցւոյն մէջ =

Պ. Անտարակցոյս, անոր գործածութիւնը պիտի մնայ մինչև Քրիստոսի երկրորդ գալուստն ինչպէս որ Առաքելաբ կ'ըսէ. «Բանիցս անգամ



Թէ ուտիցէք զճացս զայս և զբաժակս ըմպիցէք,  
զմահն ճեառն պատմեցէք, մինչև եկեացէ նա» :  
Ա. կորնթ. Գլ. ԺԱ. 26 :

ՅԱՂԱՅՄ ԶԼԶՄԱՆ

Հ. Զղջումն Ի՞նչ է :

Պ. Զղջումը խորհուրդ մ'է, որով իւր մեղքերը խոստովանող մը քահանային ներմամբն, անիմանայի կերպով կ'արձակուի մեղաց չըլթայնեքէն շնորհիւ Յիսուսի Բրիստոսի :

Հ. Ա՞ստի սկիզբն առաւ այս խորհուրդն :

Պ. Այն ատենէն յորում 'ի թողութիւն մեղաց Մկրտութիւն զըջման քարոզող Յովնանէս Մկրտչի գիմովներն, անոր իրենց մեղքերը կը խոստովանէին . Մարկ. Գլ. Ա. Հմբ. 4—5 : Իսկ առաքելց՝ մեղաց ներելու իշխանութիւն տուաւ Բրիստոս, երբ ըսաւ անոնց . « Ամէն ասեմ ձեզ, զի զոր կապիցէք 'ի յերկրի՝ եզիցի կապեալ 'ի յերկինս, և զոր արձակիցէք յերկրի՝ եզիցի արձակեալ յերկինս » : Մատթ. Գլ. ԺԷ. Հմբ. 18 : Վերջապէս իւր յարութենէն ետքն իրապէս տուաւ անոնց այս իշխանութիւնն՝ ըսելով . « Առէք Հոգի սուրբ եթէ ումեք թողուցուք զմեզս, թողեալ լիցի նոցա . եթէ գուրուք ունիցիք, կալեալ լիցի » : Յովն. Գլ. Ի. Հմբ. 22—23 :

Հ. Ի՞նչ կը պահանջուի զըջացողէն :

Պ. Բնդհարումն սրտի գործուած մեղաց համար, իր կենցաղն ուղղելու հաստատ առաջադրութիւն, հաւատք 'ի Բրիստոս, և յոյս իւր բարեգթութեանը վրայ . « Ձի որ ըստ Աստուծոյն արտմութիւն է, ապաշխարութիւն 'ի փրկութիւն

առանց զըջանալոյ գործէ . իսկ աշխարհի ալբա մութիւն մահ գործէ » : Բ. կորնթ. Գլ. Է. Հմբ. 10 : « Եւ 'ի դառնալ մեղաւորին յանօրէնութենէն իւրմէ և առնիցէ իրաւունս և արդարութիւն, նոքմբք կեցցէ » : Եղէկ. Գլ. ԼԳ. Հմբ. 19 : Նմա (Բրիստոսի) ամենայն մարգարէքն վկայեն, թողութիւն մեղաց առնուլ անուամբ նորա ամենայն հաւատացելոց 'ի նա » . Գործք Առա. Գլ. Ժ. Համար 43 :

Հ. Զղջման ուրիշ պատրաստիչ և օգնող միջոցներ կան :

Պ. Կան և են ծով և աղօթք :

Հ. Սուրբ Եկեղեցին խոստովանող զըջացեալին խղճմտանաց մաքրագործութեանն ու խաղաղութեանն ուրիշ մանաւոր միջոց մ'ունի :

Պ. Այո, և այդ միջոցն է պատիժը (Եπαιξιμωσ) :

Հ. Պատիժն (Եπαιξιμωσ) ի՞նչ է :

Պ. Այո բառը կը նշանակէ արգիլումն . Տես կորնթ. Գլ. Բ. Հմբ. 6 : Ասով զըջացողին անօրինութեանց ջնջմանն և իւր չար ունակութեանց զսզման օժանդակող ճգնութիւններ և զրկումներ կը սահմանուին . զոր օրինակ ծոմապահութիւն սահմանեալէն աւելի . իսկ ծանրագոյն մեղաց համար՝ սահմանեալ ժամանակի մը մէջ Աստուածային Հաղորդութեան չմերձենալ :

ՅԱՂԱՅՄ ՔԱՀԱՆԱԿՈՒԹԵԱՆ

Հ. Ի՞նչ է Քահանայական կարգը :

Պ. Քահանայապետաց ձեռնադրութեամբը խորհուրդ մ'է, որով սուրբ Հոգին՝ օրինաւորապէս ընտրեալ անձին իրաւունք կուտայ Եկեղեցւոյ



խորհուրդները կատարելու և ֆրիստոսի հօան հովուելու . « Այսպէս համարեսցեն զմեզ մարդիկ իբրև զպաշտօնեայս ֆրիստոսի և հաղարապետա խորհրդոյն Աստուծոյ » : Ա. Կորնթ. Գլ. Գ. Հմբ. 1 :  
 « Զբոյճ կացէք անձանց և ամենայն հօտիդ , յուրում եզ զձեզ Հոգին սուրբ տեսուչս , հովուել զժողովուրդ Տեառն , զոր ապրեցոյց արեամբ իւրով » : Գործք Առա. Գլ. Ի. Հմբ. 28 :

Հ. Ինչ կը նշանակէ հովուել զեկեղեցի :

Պ. Կը նշանակէ առաջնորդ ըլլալ մարդոց ՚ի հաւատս , ՚ի բարեպաշտութիւն և ՚ի գործս բարիս :

Հ. Ինչ աստիճաններ սահմանուած են կարգի մէջ

Պ. Երեք աստիճաններ սահմանուած են Եպիսկոպոսինը Քահանայինն և Սարկաւագինն :

Հ. Այս երեք աստիճանաց տարբերութիւնն ինչ է :

Պ. Սարկաւագը խորհուրդներուն ծառայութիւն կ'ընէ , քահանայն զաննք կը կատարէ ընդ տեսութեամբ Եպիսկոպոսին , իսկ սա՛ ինք կարենալ կատարելն զառ՝ իշխանութիւն ունի նաև այլոց ալ այդ շնորհքը պարգեւելու՝ ձեռնադրութեամբ . այսպէս կը գրէ Տիտոսի Գլ. Ա. Հ. 5 . Պօղոս առաքեալ Եպիսկոպոսին իրաւանց վրայ . « վասն այսորիկ իսկ թողի զքեզ ՚ի կրեաէ , զի որ ինչ միանգամ պակաս իցէ ուղղեսցես , և կայուսցես ըստ քաղաքաց երիցունս , որպէս և ես քեզ պատուիրեցի » : Տիմոթէոսի ալ կը գրէ . « Զեռս վարվաղակի յուրուք վերայ մի դնիցէք » : Ա. Տիմոթ. Գլ. Ե. Հմբ. 22 :



ՅԱՂԱԳՍ ՀԱՐԱՆԵՍՅ

Հ. Ի՞նչ է հարսանիք :

Պ. Խորհուրդ մ'է , յորում քահանային և եկեղեցւոյ առջև՝ հարսին և փեսային կողմանէ՛ ա՛մուսնութիւննին հաստատուն պահելու փոխազարձաներաբար խոստամամբ՝ ամուսնութեան կապը կ'որհնուի , ըստ օրինակի հոգեւոր միութեանն ֆրիստոսի ընդ Եկեղեցւոյ , և կը խընդրուի Աստուծա՛ն անոնց անարատ միաբանութեան շնորհն՝ յօրհնեալ որդեծնութիւն և ՚ի քրիստոնէական դաստիարակութիւն զուսկաց :

Հ. Ո՞ւսկից յայտ է թէ հարսանիքը խորհուրդ է :

Պ. Պօղոս առաքելոյն յետագայ խօսքերէն . « Թողցէ այր զհայր իւր և զմայր իւր , և երթիցէ զհետ կնոջ իւրոյ , և եղիցին երկուքին ՚ի մարմին մի » : Խորհուրդս այս մեծ է , բայց ես ասեմ իսկ ՚ի ֆրիստոս և յեկեղեցի » : Առ Եփես. Գլ. Ե. Հմբ. 31, 32 :

Հ. Ամեն մարդ ալ ամուսնանալու պարտակա՞ն է :

Պ. Ոչ . Անարատ ֆնալու կարող մէկու մը համար կուսութիւնը նախամեծարելի է : Ատոր համար ըսաւ ֆրիստոս յայտնապէս . « Ոչ ամենքեան բաւական են այդմ բանի , այլ որոց տուեալ է : Որ կարողն է տանել , տարցի » : Մատ. Գլ. ԺԹ. Հմբ. 11, 12 . Եւ առաքեալը կ'ըսէ . « Բայց ամուրեանց և այրեաց ասեմ , լաւ է նոցա թէ կայցեն իրբև զիս . ապա թէ ոչ ունիցին ժոյժ , ամուսնացին . զի որ անկինն է հոգայ ըզ՝ Տեառն , թէ որպէս հաճոյ լիցի Տեառն . . . . և եւ որ ամուսնացուցանէ զկոյնն իւր , բարուք



առնէ , և որ ոչն տմուսնացուցանէ լաւ ևս առնէ » : Ա. Կորնթ. Գլ. Է. Հմբ. 8, 9, 32, 33, 38 :

ՅԱՂԱՌՍ ՕԾԽԱՆ ՀԻՒԱՆԳԱՅ

Հ. Հիւանդաց օծումն ի՛նչ է :

Պ. Խորհուրդ մ'է որ, հիւանդի մը մարմինը իւզով օծելով՝ անոր համար Աստուծոյ շնորհքը կը խնդրենք, յապաքնութիւն հոգեւոր ու մարմնաւոր հիւանդութեանց :

Հ. Ե՛րբ սկսաւ այս խորհուրդն :

Պ. Այն ատեն որ Առաքեալք Գրիստոսի հըրամանաւն « օծանէին իւզով զբաղում հիւանդս, և բժշկէին գնոսա » : Առաքեալք այս խորհրդին կատարումն եկեղեցւոյ քահանայից աւանդեցին, ինչպէս որ յայտ է Յակոբ առաքելոյն հետեւեալ խօսքերէն . « Հիւանդանայցէ որ 'ի ձէնջ՝ կոչեսցեն զերիցունս եկեղեցւոյն , և ասացեն 'ի վերայ նորա աղօթս , օծցին իւզով յանուն Տեառն : Եւ աղօթքն հաւատով փրկեացէ զաշխատեալն . և յարուացէ գնա Տէր . և եթէ մեզս ինչ գործեալ իցէ թողցին նմա » : Յակ. Գլ. Ե. Հմբ. 14—15 :

ՅՕԴՈՒԱԾ ԺԱ.

Հ. Ի՛նչ է յարութիւն մեռելոց , զոր կ'ակընկալեն ըստ հաւատոյ հանդանակին :

Պ. Աստուծոյ ամենակարողութեան ներգործութիւնն՝ որով մեռած մարդոց մարմինն իրենց կենդանի հոգւոց հետ պիտի միանան վերադառնալու հոգևոր և անմահ պիտի ըլլան . « Մերմանի մարմին չնչաւոր և յառնէ մարմին հոգևոր » : Ա.

Կորնթ. Գլ. ԺԵ. Հմբ. 44 : « Պարտ է ապականութեանս այսմիկ զդեմուլ զանապականութիւն , և մահկանացուիս այսմիկ զդեմուլ զանմահութիւն : Ա. Կորնթ. Գլ. ԺԵ. Հմբ. 33 :

Հ. Բայց ի՛նչպէս ապականեալ և լուծեալ մարմին մը կրնայ յարութիւն առնուլ :

Պ. Այն Աստուածն որ 'ի սկզբանէ անտի ըրաւ մարմինն յերկրէն , կրնայ նաև վերանորոգել զայն իւր նեխեալ և հող դարձած վիճակէն : Այս բանը Պողոս առաքեալ կը բացատրէ սերմնաւած հատիկ մը նմանեցնելով՝ որ թէ և երկրի մէջ լուծուի , իբժէ խոտ կամ՝ ծառ . կը բուսի . « Չոր սերմանենն , ոչ կենդանանայ՝ եթէ ոչ մեռանիցի » : Ա. Կորնթ. Գլ. ԺԵ. Հմբ. 36 :

Հ. Ամեն մարդ ալ յարութիւն պիտի առնէ՞ :

Պ. Մեռնողներն ամենն ալ յարութիւն պիտի առնեն , իսկ մինչև այն ընդհանրական յարութեան ատեն կենդանի մնացողք ալ 'ի քթթեղական իրենց ապականացու մարմինը ձգելով միայն հոգեկան և անմահ պիտի ըլլան . « Ամենքեան ննջեացուք , այլ ոչ եթէ ամենքեան նորոգեացուք յանկարծակի յակն թօթափել 'ի փող յետին , քանզի փող հարկանի , և մեռեալք յարկցեն առանց ապականութեան , և մեք նորոգեսցուք » : Ա. Կորնթ. Գլ. ԺԵ. Հմբ. 51, 52 :

Հ. Յարութիւն մեռելոց երբ պիտի ըլլայ :

Պ. Տեսանելի աշխարհիս կատարածոցն ատեն :

Հ. Աշխարհք վե՛րջ պիտի ունենայ ուրեմն :

Պ. Այո , այն ալ վերջ պիտի ունենայ իւր ապականացու վիճակէն յանապականութիւն փոխակերպուելով . « Զի և ինքեանք իսկ արարածքն ազատեցին 'ի ծառայութենէ ապականութիւն »



յազատութիւն փառաց Որդւոյն Աստուծոյ : Առ  
Հռովմ: Գլ: Բ: Հմբ. 21 : « Նորոյ երկնից և նորոյ  
երկրի ըստ աւետեայն հայեցեալ սպասեմք, յորս  
արդարութիւնն բնակէ » : Պետր. Բ. Գլ. Գ. Հ: 13 :

Հ. Ի՞նչ կերպիւ աշխարհս պիտի փոխակերպուի :

Պ. Հրոյ միջոցաւ . « Եւ այժմ երկինք և երկիր  
նովին բաւիւ դանձեալ են հրոյ սլահեալք յօրն  
դատաստանի, և կորստեան ամալարիչո մարդկան » :  
Պետր. Բ. Գլ. Գ. Հմբ. 7 :

Հ. Մինչև ընդհանուր յարութեան ժամանակ  
մեռելոց հոգիքն ի՞նչ վիճակի մէջ կը գտնուին :

Պ. Արդարոց հոգիները լուսոյ և հանդատու  
թեան մէջ, իր սկիզբն յաւանանակն երանու  
թեան . իսկ մեղաւորացն՝ հակառակ վիճակի մէջ :

Հ. Արդարեւերն ինչո՞ւ համար իրենց մահուը  
նէն անմիջապէս ետքը կատարեալ երջանկութիւն  
չեն վայելեր :

Պ. Որովհետև ըստ գործոց կատարեալ փոխա  
րինութիւնը կատարեալ մարդուն իւր մարմինէն  
յարութիւն առնելէն և Աստուծոյ դատաստանն  
ըլլալէն ետքին պահուած է : Պօղոս առաքեալ  
այսպէս կը գրէ . « Այստեհետև կայ մնայ ինձ ար  
դարութիւն պսակ, զոր հատուցէ ինձ Տէր, յա  
ւուր, յայնմիկ արդարն դատաւորն ոչ միայն ինձ,  
այլ և ամենեցուն որ սիրեցին զյոյանութիւն նո  
րա » : Բ. Տիմ. Գլ. Գ. Հմբ. 8. Ուրիշ տեղ մ'ալ  
այսպէս « Քանզի ամենեցուն մեզ յանդիման լի  
նել կայ առաջի ատենին Քրիստոսի, զի ընկալցի  
իւրբանչիւր իւրով մարմնով զոր ինչ զսրծեաց  
յառաջ, եթէ բարի և եթէ չար » : Կորն. Բ. Ե. 10 :

Հ. Ի՞նչ պատճառաւ երանութեան միայն նա  
խակարկամ օրինակը (Προβλεπον) կը տրուի անոնց

վերջին դատաստանէն առաջ :

Պ. Քանզի Քրիստոս ինքն յայտնեց մեզ ասիկայ  
Ղազարոսի Առակին մէջ, որն որ իւր մահուանէն  
ետքն ուղղակի Արրահամա դերկը դնաց . Տես  
Ղուկ. Գլ. Ժ. Զ. Հմբ. 22 :

Հ. Այս երանութեան սկիզբն արդեօք Քրիս  
տոս տեսնենքն է :

Պ. Քրիստոսը տեսնելու աւելի Սուրբերը ար  
ժանի կ'ըլլան, և այսպէս կը հասկցուի Պօղոս ա  
ռաքելոյն այն խօսքը թէ « Զցանկալն երանել և  
ընդ Քրիստոսի լինել առաւել լաւ համարիմ » .  
Առ Փիլիպ. Գլ. Զ. Հմբ. 23 :

Հ. Հաւատով մեռնելով՝ զըման արժանի պը  
տուղ յուցընող հոգւոյ համար ի՞նչ զիտելիք կայ :

Պ. Եկեղեցւոյ բարեմաղթութիւնք՝ ասոնց ե  
րանաւէտ յարութեան մը վիճակներուն կրնան օ  
ժանդակ ըլլալ, մանաւանդ երբոր այդ բարեմաղ  
թութիւնները միացեալ ըլլան Քրիստոսի մարմ  
նոյն և արեան անարիւն զոհին հետ նոյնպէս օ  
ժանդակիչ են՝ ՚ի յիշատակ այնպիսի վախճան  
մ'ունեցողներուն եղած բարեգործութիւններ :

Հ. Ի՞նչ բանի վրայ հիմնուած է այս վարդա  
պետութիւնը :

Պ. Կաթողիկէ եկեղեցւոյ ունեցած անխախտ  
աւանդութեան վրայ, որ սկեալ է նոյն իսկ հին  
օրինաց Եկեղեցիէն . Քանզի Յուդա Մակարայե  
ցի մեռնող զինուորաց համար զոհ մատոյց . Տես  
Մկր. Գիբք Բ. Գլ. Ժ. Բ. Հմբ. 43 : Պատարալ ին  
մէկ մասն, Յակոբ առաքելոյն մատուցած Պատա  
բազէն մնացած սովորութեան համեմատ, անհը  
բաժեշտ ՚ի նպատ անջեցելոց բարեմաղթութեան  
յասակացուած է . Կիւրեղ Երուսաղիմացին այս



պէս կը գրէ. « Ի ներկայութեան սուրբ և անդ՝  
ծին վասն հողւոյ ննջեցեաց բարեմաղթութիւնք  
նոցա յերկութեան օժանդակ են ». Քրիստոնէա-  
կան Գիտ. Ե. Գլ. Թ : Սուրբն Բարսեղ՝ Պետէ-  
կոսակի աղօթից մէջ կ'ըսէ. « Տէրը կը բարեհա-  
ճի ընդունիլ 'ի մէնջ՝ քաւիչ մաղթանքներ և զո-  
հեր՝ մեռելոց համար, 'ի խաղաղութիւն և 'ի վերջ-  
կութիւն նոցա :

**ՅՕԴՈՒԱԾ ԺԲ.**

Հ. Ի՞նչ է կեանքն հանդերձեալ յաւիտենին =  
Պ. Մեռելոց յարութենէն և Քրիստոսի համաշ-  
խարհական դատաստանէն յետոյ մարդոց վիճա-  
կելիք կեանքն է :

Հ. Ինչպիսի պիտի ըլլայ այս կեանքն :

Պ. Աստուծոյ հաւատացող ու զայն սիրող և  
բարի անձանց համար այն աստիճան երանաւէտ՝  
զոր մեք՝ մարդիկ չեմք կարող երեւակայել.  
« Չեւ ևս է յայտ ելթէ զինչ լինելոց իցեմք » =  
Թուղթ Յովհ. Ա. Գլ. Գ. Հմբ. 2 : Գիտեմ այր մի  
'ի Քրիստոս, կ'ըսէ Պողոս առաքեալն, յափը-  
տակեալ մինչև յերրորդ երկնից, որ լուաւ բանս  
անճառս զոր ոչ է պարտ մարդոց խօսիլ » : Բ. առ  
կորնթ. Գլ. ԺԲ. Հմբ. 2, 4 :

Հ. Եւ ո՞ւտի յառաջ պիտի դայ այս երանու-  
թիւնն :

Պ. Աստուծոյ լուսոյն և փառաց հանդիսատես  
ըլլալէն և անոր հետ միացուելէն. « Այժմ տե-  
անեմք իբրև ընդ հայելի օրինակաւ, այլ յայն-  
ժամ դէմ յաղնիման : Այժմ խեղամուտ եմ փոքր  
'ի շատէ, այլ յայնժամ դիտացից որպէս և նոյն

ծանեաւ զիս » : Ա. առ կորնթ. Գլ. ԺԳ. Հմբ. 12 :  
« Յայնժամ արդարքն ծագեցին իբրև զարեգա-  
կըն յարքայութեան երկնից » : Մատթ. Գլ. ԺԳ. Հ.  
43. « Եղբի Սասուած ամենայն յամենայնի » : Ա.  
առ կորն. Գլ. ԺԵ. Հմբ. 28 :

Հ. Մարմինն ալ արդեօք հաղորդակից պիտի  
ըլլայ հողւոյ երջանկութեանն :

Պ. Մարմինն ալ Աստուծոյ լուսովը պիտի փա-  
ռաւորուի, ինչպէս Քրիստոսի մարմինը փառա-  
ւորեցաւ այլակերպութեամբն 'ի թափոք լերին.  
« Սերմանի անարդութեամբ, և յառնէ փառօք » :  
Ա. առ կորնթ. Գլ. ԺԵ. Հմբ. 43. « Եւ որպէս ըզ-  
գեցաք զպատկեր հողեղինին, զդեցցուք և ըզ-  
պատկեր երկնաւորին (այսինքն Տեառն մերոյ Յի-  
սուսի Քրիստոսի) : Ա. առ կորնթ. Գլ. ԺԵ. Հա-  
մար 4 :

Հ. Ամենքն ալ անխախտ մի և նոյն աստիճանաւ  
երջանիկ պիտի ըլլան :

Պ. Ո՛չ. ըստ որում իւրաքանչիւր մարդու հա-  
ւատոյ, սիրոյ և բարեգործութեանց նկատմամբ  
ունեցած ջանիցն համեմատ տարբեր պիտի ըլլան.  
« Այլ փառք արեգական և այլ փառք լուսնի,  
այլ փառք աստեղաց, և ասաղ քան զաստղ ա-  
ռաւել է փառօք : Նոյնպէս և յարութիւն մեռե-  
լոց » : Ա. առ կորնթ. Ա. Գլ. ԺԵ. Հմբ. 41—42 :

Հ. Իսկ ի՞նչ սահմանուած է անհաւատից և ա-  
նօրէններու համար :

Պ. Անոնք դեերուն հետ մէկ տեղ, յաւիտենա-  
կան մեռելութեան կամ լաւ ևս ըսելով, յաւի-  
տենական հրոյ և յաւիտենական տանջանաց պի-  
տի մասնուիլն. « Որ ոչ ոք գտաւ 'ի գիրն կենաց  
զրեալ արկաւ 'ի լիճ հրոյն » : Յայտն. Գլ. Ի. Հմբ.



13. « Այս է երկրորդ մասն » : « Երթայք յինէն ,  
անիծեալք , ՚ի հօւրն յաւիտեանական , որ պատ-  
րաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա » :  
Մատթ. Գլ. Իե. Հմր. 41 . « Եւ երթիցեն նորա ՚ի  
տանջանան յաւիտեանական , և արդարքն ՚ի կեանս  
յաւիտեանական » : Մեդ. Հմր. 46 : « Եւ եթէ ան-  
քս դայթակղեցուցէ գրեզ , հան գնա ՚ի բաց-  
լաւ իցէ քեզ միով ակամբ մտանել յարքայութիւն  
Աստուծոյ , քան երկուս աչս մեռանի և հօւրն ոչ  
զիջանի » . Մարկ. Գլ. Թ. Հմր. 46—47 :

Լ. Ինչո՞ւ համար մեղաւորք այնչափ խստիւ  
պիտի պատժուին :

Պ. Թէ և Աստուած բնաւ անոնց կորուստը չը  
կամիր , այլ իրենք իրենց ձեռքովը պիտի կորու-  
սին . « Փոխանակ զի գտէրն ճշմարտութեան ոչ ըն-  
կալան՝ զի ապրեացին » : Բ. առ Թեսաղ. Գլ. Բ.  
Հմր. 10 :

Լ. Ի՞նչ օգուտ կ'ստանանք երբ մահուան , յա-  
րութեան , վերջին դատաստանի , յաւիտեանական  
երջանկութեան և յաւիտեանական տանջանաց վը-  
րայ մտածենք :

Պ. Այսպիսի խոկում մը մեր՝ ՚ի մեզաց հեռա-  
նայուն և երկրաքարչ խորհուրդներէ հրաժարե-  
լուն կ'օգնէ . և կը մխիթարէ և կը թեթեցունէ  
երկրային բարիքներէ մեր զրկուածութիւնը . վեր-  
ջապէս անիկայ կը գրդէ մեզ հոգ ինիս և մարմին-  
նիս սուրբ պահելու , Աստուծոյ կամաց համեմատ  
և յաւիտեանականութեան համար ապրելու , որով  
արժանի ըլլանք յաւիտեանական փրկութեան :



ՅԱՂԱԳՍ ՅՈՒՍՈՅ

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՅՈՒՍՈՅ

ՀԻՄՆ ՆՈՐԻՆ ԵՒ ՄԻՋՈՑՔՆ

Լ. Ի՞նչ է Քրիստոնէական յոյս :  
Պ. Վստահութիւն սրտի առ Աստուած՝ այն  
համարմամբ թէ նա առաջուց միշտ հոգ կը տանի  
մեր փրկութեանն և ըստ խոստանան իւրոյ մեզ  
երջանկութիւն կը պարգեւէ :

Լ. Ի՞նչ բանի վրայ հիմնուած է Քրիստոնէա-  
կան յոյսն :

Պ. Յիսուս Քրիստոսն է մեր յոյսը , կամ լաւ ևս  
ըսելով , մեր յուսոյն հիմն . Ա. առ կորնթ. Գլ. Ա.  
Հմր. 1 : « Բովանդակ սպասեցէք հասելոց ձեզ  
չնորհացելոց ձեզ շնորհացն ՚ի յայտնութեանն Յի-  
սուսի Քրիստոսի » : Պետ. Ա. Գլ. Ա. Հմր. 13 :

Լ. Փրկաւէտ յոյս ունենալու միջոց որո՞նք են :  
Պ. Այս բանին օժանդակ են Ա. ազօթք , Բ.  
ճշմարիտ վարդապետութիւն երանութեան և այս  
վարդապետութեան գործնական պահպանու-  
թիւնը :

ՅԱՂԱԳՍ ԱՂՕԹԻՅ

Լ. Աղօթից՝ փրկաւէտ յուսոյ օժանդակ ըլլա-



լուն Ս. Գրքէն վկայութիւն մը կա՛յ :

Պ. Նոյն ինքն Գրիստոս կը մկայէ՝ բսելով . « Եւ զոր ինչ խնդրիցէք յանուն իմ, աբարկց զայն . գի փառաւորեսցի Հոյր յորդի » : Յովհ. Գլ. ԺԳ. Հմբ. 13 : Գրիստոսի աղօթից հետ նաև մեր ըլձից կատարման յոյսը :

Հ. Ի՞նչ է աղօթքը :

Պ. Վերացումն մտաց և սրտի առ Աստուած, անոր ուղղեալ բարեպաշտական բանիւք :

Հ. Իւր միտքն ու սիրան առ Աստուած բարձրացունող Գրիստոնեայն ի՞նչ կը պարտի ընել :

Պ. Նախ պէ՛տք է փառաւորէ զՍ. իւր Աստուածային կատարելութեանցն համար . երկրորդ՝ շնորհակալ ըլլալ Անոր՝ իւր բարեբարութեանցն համար . երրորդ՝ իւր պիտոյից համար աղաչէ : Ուստի երեք անսակ են աղօթագիրք այսինքն փառաբանութեան, Շնորհակալութեան և Մաղթանայ :

Հ. Կրնա՞նք առանց խօսելոյ ալ աղօթել :

Պ. Կրնանք, այսինքն մտօք և սրտիւ . այսպիսի աղօթից օրինակ մը տուաւ Մովսէս Կարմիր ծովէն անցնելէն յառաջ . Տես Ելից Գլ. ԺԳ. Հաւմար 15 :

Հ. Այս աղօթքը մ. սնաւոր անուն մը ունի՞ :

Պ. Այո՛, և կը կոչուի (Εσωτερική) ներքին աղօթք, ինչպէս որ կենդանի բարբառով և բարեպաշտական նշաններով եղած աղօթքն ալ արտաքին (Εξωτερική) .

Հ. Առանց ներքին աղօթից միայն արտաքին կերպով աղօթք կ'ըլլայ :

Պ. Կրնայ ըլլալ երբ աղօթքին խօսքերն առանց մտադրութեան և շերմեռանդութեան արտա-

սանուին :

Հ. Միայն արտաքին աղօթքը կարող է մեղ Աստուծոյ շնորհքը վայելել տալու :

Պ. Այ միայն չէ կարող՝ այլ և կը զայրացունէ զԱստուած որ ինքնին յայտնած է առ այնպիսի աղօթքն ունեցած սրտմտութիւնը . « Եղովլուրդս այս շրթամբք պատուէ զիս, և սիրաք իւրեանց հեռացեալ մեկուսի է յինէն, զուր պաշտեն զիս » : Մատթ. Գլ. ԺԵ. Հմբ. 8—9 :

Հ. Ներքին աղօթքն առանց արտաքնոյն բաւական է :

Պ. Այս հարցումը կը նմանի այն հարցման թէ մարդուս՝ առանց մարմնոց հողին միայն հերքէք է : Բայց քանի որ Աստուած հողով և մարմնով կաղմեր է զմարդ . ի՞նչ հարկ այդ հարցումն ընելու . սոյնպէս աւերորդ է առանց արտաքնոյն ներքին աղօթքը միայն բաւական է հարցունելը : Թէ հողի և թէ մարմին ունի՞մք, իբր հողի ու մարմին ունեցող՝ պարտիմք երկուքովն ալ փառաւորել զԱստուած : Ինչպէս որ Գրիստոս ալ բանիւք և մարմնական բարեպաշտոյին ձևերով . երբեմն ալ՝ զոր օրինակ՝ աչքերն յերկինս ամբառնալով, իսկ երբեմն ծնրադրութեամբ, և դէմքն յերկիր՝ ՚ի վայր խնարհեցունելով կը կատարէր իւր հողևոր աղօթքը : Տես Ս. առ Կորնթ. Գլ. 9. Հմբ. 20 : Մատթ. Գլ. ԺԲ. Հմբ. 34 : Յովհ. Գլ. ԺԷ. Հմբ. 1 : Դուկ. Գլ. ԻԲ. Հմբ. 41 : Մատթ. Գլ. ԺԶ. Հմբ. 39 :

ՅԱՂԱԳՍ ՏԷՐՈՒՆԱԿՆ ԱՂՕԹԻՑ

Հ. Այն այնպիսի աղօթք մը որ համօրէն Գրիս-



տանէից յատուկ, և ամեն այլ աղօթից ծրագիրն եղած ըլլայ :

Պ. Կայ և այս է Տէրունական աղօթքը :

Լ. Ի՞նչ է Տէրունական աղօթքն (Κυριακή προσευχή) .

Պ. Ասիկայ՝ նոյն ինքն Յիսուս Քրիստոսէ իւր առաքելաց և անոնցմէ ալ հաւատացելոց պատուիրած աղօթքն է :

Լ. Ի՞նչպէս է այս աղօթքն :

Պ. Հայր մեր որ յերկինս ես .

(1) Սուրբ եղիցի անուն քո .

(2) Եկեացէ արքայութիւն քո .

(3) Եղիցի կամք քո, որպէս յերկինս և յերկրի .

(4) Զհաց մեր հանապազորդ տուր մեզ սոսոր :

(5) Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեր թողումք մերոց պարտապանաց :

(6) Եւ մի տանիր զմեզ ՚ի փորձութիւն :

(7) Այլ փրկեա զմեզ ՚ի չարէ .

Զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս, ամէն . Մատթ. Գլ. Զ. Հմբ. 9, 13 :

Լ. Այս Տէրունական աղօթքը մանրամասն քրննելու համար քանի՞ բաժնել պէտք է :

Պ. Աստուածային անուանակոչութեան եօթը ինդրոց և փառաբանութեանց :

ΑΥΣΘΗΑΨΑΨΙΝ ΑΝΘΗΑΝΑΚΗΘΑΨΙΝ (ΕΠΙΚΛΗΣΙΣ)

Լ. Ի՞նչպէս կը համարձակիմք զԱստուած Հայր կոչել :

Պ. Յիսուս Քրիստոսի վրայ ունեցած հաւատքնուս զօրութեամբ և վերածնութեան շնորհօքք «Որք ընկալանն զնա՝ ետնոցա իշխանութիւն որ»

դիս Աստուծոյ լինիլ, որոց հաւատացեն յանուն նորա, ոյք ոչ յարենէ և ոչ ՚ի կամաց մարմնոյ, և ոչ ՚ի կամաց առն, այլ յԱստուծոյ ծնան» . Յովհ. Գլ. Ա. Հմբ. 12—13 :

Լ. Առանձին փառաբանութեանց մէջ պէ՞տք է արդեօք «Հայր մերն» ըսել :

Պ. Անտարակոյս :

Լ. Ի՞նչու համար :

Պ. Քրիստոնէական եղբայրասիրութեան պատճառաւ կը պարտաւորիմք կոչել զԱստուած . և խնդրել իրմէ բարիք, ոչ միայն մեզի համար, այլ նաև բոլոր մարդոց համար :

Լ. Ի՞նչ պատճառաւ մեր փառաբանութեանց մէջ կ'ըսեմք «որ յերկինս ես» :

Պ. Որպէս զի՛ մեր փառաբանութեանը մէջ թուումք բոլոր երկրային և ապականացու բաները, և բարձրացնեմք մեր միտքն ու սիրտն դէպ ՚ի երկնային յաւիտեանական և Աստուածային իրս :

ԽՆԴԻՐ Ա. (ΑΙΘΜΑ)

Լ. Արդեօք Աստուծոյ անունը ըստ ինքեան սուրբ չէ՞ :

Պ. Անտարակոյս սուրբ է . և ասոր համար ըսուեցաւ «Սուրբ անուն նորա» Դուկ. Գլ. Ա. Համար 49 :

Լ. Ի՞նչ կերպով աւելի ևս կը սրբանայ :

Պ. Կրնայ սրբանալ մարդոց մէջ, երբ իւր մըջ տրնջենաւոր սրբութիւնը կը յայտնի անոնց :

Լ. Ի՞նչ կերպով :

Պ. Նախ՝ երբ մեք ունենալով մեր խորհրդին և մեր սրտին մէջ Աստուծոյ անունը, ապրիմք



իւր սրբութեան պահանջածին համեմատ . և այս կեանքով փառաւորեմք զՍտուած : Երկրորդ երբ ուրիշներն ալ տեսնեն մեր բարի գարձումք՝ կը փառաւորեն զՍտուած . « Այնպէս լուսաւորեցէ լոյս ձեր առաջի մարդկան , որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս և փառաւորեացեն զհայր ձեր սր յերկինս է » . Մատթ. Գլ. Ե. Հմբ. 16 :

ԽՆԴԻՐ Բ.

Լ. Տէրունական աղօթից երկրորդ խնդիրը Աստուածային ո՞ր թագաւորութիւնը կը յիշէ մեզի :

Պ. Ծնորհաց թագաւորութիւնը , որն որ՝ ըստ Առաքելոյն է արդարութիւն , խաղաղութիւն և խնդութիւն ՚ի հողին սուրբ : Հռովմ. Գլ. Ժ. Գ. Հմբ. 17 :

Լ. Դեռ չեկամ նոյն թագաւորութիւնը :

Պ. Մարդոցմէ ոմանց համար դեռ չեկա՞ իւր բոլոր զօրութեամբք . իսկ այլոց համար բնաւ չեկա . քանզի տակաւին կը թագաւորէ մեզքը ա՛նոնց մահկանացու մարմնոյն մէջ հնազանդելով ա՛նոր յանկութեանցը . Հռովմ. Գլ. Զ. Հմբ. 12 :

Լ. Ի՞նչ կերպով կուգայ :

Պ. Թաժուկ և ներքուստ . « Ոչ դայ արքայութիւն Աստուծոյ խարանք . . . զի ահա արքայութիւն Աստուծոյ ՚ի ներքս ՚ի ձեզ է » . Ղուկ. Գլ. Ժ. Ե. Հմբ. 20—21 :

Լ. Արդեօք կրնայ քրիստոնէայ մը Աստուծոյ արքայութեան անուամբը ուրիշ բան մ՞ալ պահանջել :

Պ. Կրնայ պահանջել փառաց թագաւորութիւն

նք . այսինքն՝ հաւատացելոյ կատարեալ երանութիւնը « Զցանկայն երանել և ընդ ֆրիատասի լինել » . Փիլիպ. Գլ. Ա. Հմբ. 23 :

ԽՆԴԻՐ Գ.

Լ. Ինչո՞ւ « Եղիցին կամք քո » կ'ըսենք :

Պ. Այս աղօթքով կ'աղայեմք զՍտուած , որպէս զի ինչ բան որ ընեմք , և ինչ բան որ կը պատահի մեզի , ըլլայ՝ ոչ ըստ մեր կամաց՝ այլ ըստ իւր հաճութեան :

Լ. Ի՞նչ հարկ կայ այսոյիս ինդոյն :

Պ. Որովհետև յաճախակի կը մեղանչեմք մեր փախաքանացը մէջ . իսկ Ստուած անվրէպ և անբաղդատելի կերպով , առաւել քան զմեզ կը հսկէ մեր օգտին վրայ . պատրաստ ըլլալով հայթայթել առատաբար մեր այն խնդիրքը՝ որ հա՛կառակ չեն իւր կամացը և մարտեալ հաճոյքէ և յամառութենէ յառաջ եկած չեն « Այլ այնմ որ կարողն է առաւել քան զամենայն ինչ առնել յաճախութեամբ » քան զոր խնդրեմքն և իմանամք , ըստ զօրութեանն որ յաջողեալն է ՚ի մեզ , նմա փառք յեկեղեցւոյն » . Եփես. Գլ. Գ. Հմբ. 20, 21 :

Լ. Ինչո՞ւ համար Աստուծոյ կամաց լրումը կը հայցեմք երկրի վրայ , ինչպէս որ յերկինս :

Պ. Որովհետև երկնքի մէջ սուրբ հրեշտակները և երանելի մարդիկ , ամէնքը առանց խնդրութեան միշտ Աստուծոյ կամքը կը կատարեն :

ԽՆԴԻՐ Դ.

Լ. Ի՞նչ է հանապազօրեայ հացը :



Պ. Մեր աննդեան համար խիստ կարևոր բան  
մ'է :

Լ. Ի՞նչպէս պէտք է աղաչել զԱստուած՝ հա-  
նապաղօրեայ հացին համար :

Պ. Ըստ վարդապետութեան Տեառն մերոյ Յի-  
սուսի՝ Բրիստոսի պէտք չէ մեր հանապաղօրեայ  
հացէն աւելի բան մը պահանջել, այսինքն՝ պէտք  
եղածէն աւելի անուղե, հանգերձ և բնակարան .  
ասոնցմէ աւելին՝ որք անհրաժեշտ պէտք չեն,  
պէտք է Աստուծոյ կամոյ յանձնել. և եթէ մե-  
զի պարզեւէ առատարար զանոնք, պէտք է շը-  
նորհակալ ըլլամք Աստուծոյ, իսկ եթէ մեզ զըր-  
կէ ալ անոնցմէ, պէտք չէ արանջալ :

Լ. Ինչո՞ւ համար պէտք է խնդրել միայն հա-  
նապաղօրեայ հացը այսօրուան համար :

Պ. Որպէս զի չարիէն աւելի չի հոգամք ապա-  
գային վրայ, այլ դնեմք միայն մեր յոյսը Աստու-  
ծոյ վրայ. «Մի այսուհետև հոգայցէք վասն վաղ-  
ուսի՝ զի վաղիւն վասն իւր հոգացի. շատ է ա-  
ւուրն չար իւր զի դիտէ Հայրն ձեր երկնաւոր որ  
ինչ պիտոյ է ձեզ». Մատթ. Զ. 34 :

Լ. Հանապաղօրեայ հացին հետ ուրիշ ի՞նչ կըր-  
նանք խնդրել :

Պ. Որովհետև մարդս կը բաղկանայ ՚ի հոգւոյ  
և ՚ի մարմնոյ. և ըստ որում՝ հոգւոյ գոյութիւնը  
խիստ պատուականագոյն է, արդ կրնամք և կը  
պարտաւորիմք խնդրել հոգւոյն համար հանա-  
պաղօրեայ հաց. առանց որոյ ներքին մարդը կը  
նուազի. Տես կիւրեղ երու. Բրիս. վարդ. Գ. 15  
և ՚ի վերայ ուղղ. խոստ. մասն Բ. հարցում 19 :

Լ. Ի՞նչ է հոգւոյն այս հանապաղօրեայ հացը :

Պ. Աստուծոյ խօսքը և Յիսուսի մարմինն ու

արիւնն է. «Թէ ոչ հացիւ միայն կեցցէ մարդ՝  
այլ ամենայն բանիւ որ ելանէ ՚ի բերանոյ Աստու-  
ծոյ». Մատթ. Գ. 4 : «Զի մարմին իմ՝ ճշմարիտ  
կերակուր է, և արիւն իմ՝ ճշմարիտ ըմպելի է».   
Յովհ. Զ. 56 :

## ԽՆԴԻՐ Ե.

Լ. Ի՞նչ կը նշանակէ Տէրունական աղօթքին  
այս խօսքը «Թող մեզ զպարտիս մեր» :

Պ. Այս կը նշանակէ մեր մեղքերը :

Լ. Ինչո՞ւ համար մեղքը պարտք կըսուի :

Պ. Որովհետև մեք, ինչպէս որ առինք ամեն  
բան Աստուծմէն, նոյնպէս կը պարտաւորիմք ա-  
մեն բան հատուցանել Աստուծոյ, այսինքն հնա-  
զանդեւ իւր կամոց և իւր օրինաց, որոց դեմ՝  
կենալով՝ պարտական կը մնամք աստուածային  
արդար դատաստանին :

Լ. Եւ ո՞ք են մեր պարտապանները :

Պ. Այն մարդիկները՝ որք չի հատուցին մեզի  
պարտաւորութիւննին ըստ օրինաց Աստուծոյ .  
զորօրինակ անոնք որ չի ցուցըցին մեզի համար  
սէր, այլ ատելութիւն :

Լ. Քանի որ Աստուծոյ ուղիղ դատաստանը կայ  
ի՞նչպէս մեք կրնամք յուսալ մեր պարտուց թո-  
ղութիւնը :

Պ. Յիսուսի Բրիստոսի միջնորդութեամբը,  
«Զի մի է Աստուած, և մի միջնորդ Աստուծոյ և  
մարդկան, մարդ Յիսուս Բրիստոս. որ ետ զան-  
ձըն վրկանս ընդ ամենեցուն». Ա. Տիմ. Բ. 5-6 :

Լ. Ի՞նչ պիտի ըլլայ ուրեմն, եթէ խնդրեմք  
Աստուծմէ մեր մեղաց թողութիւնը, առանց այ-



լոյ թողութիւն տարու :

Պ. Ձի պիտի վայելեմք՝ մեք խի թողութիւն .  
«Ձի եկէ թողուցուք մարդկան զյանցանս, թող  
ցէ և ձեզ Հայրն ձեր երկնաւոր : Ապա թէ ոչ  
թողուցուք մարդկան զյանցանս նոցա, և ոչ  
Հայրն ձեր թողցէ ձեզ զյանցանս ձեր» . Մատթ.  
Զ. 14—15 :

Լ. Ինչո՞ւ համար Աստուած չի ներեր մեզի,  
եթէ մեք այլոց չի ներեմք :


Պ. Որովհետեւ այս բնելով կը յանդիմանեմք  
իրբն չար, և այնպէս կը հեռացնեմք մեզմէս .  
առւծոյ բարութիւնը և իւր ողորմութիւնը :

Լ. Ուրեմն ի՞նչ կը պահանջէ մենէ տէրունական  
ազօթիդ այս խօսքը «Որպէս և մեք թողումք մե-  
լոց պարտապանաց» :

Պ. կը պահանջէ ազօթողէն՝ հեռանալ թշնա-  
մանքէ և բարկութենէ և ունենալ խաղաղութիւն  
և սէր ամենուն հետ . «Եթէ մատուցանիցես ըզ-  
պատարագ քո՝ ՚ի վերայ սեզանոյ, և անդ յիշեա-  
ցես՝ եթէ եղբայր քո ունիցի ինչ խէթ դքէն,  
թո՛ղ զպատարագն առաջի սեզանոյն, և երթ նախ  
հաշտեաց ընդ եղբոր քում, և ապա եկեալ մա-  
տուսչիւր զպատարագն քո .» Մատթ. Ե. 23—24 :

Լ. Ի՞նչ պէտք է ընել, երբ մէկը մեզի դէմ  
բան մ'ունենայ և բացակայ գտնուի կամ անտղ-  
քելի ըլլայ :

Պ. Այս մասին բառական է մեր որտից մէջ  
հաշտութիւն և սէր առաջի սրտագէտին Աստու-  
ծոյ . «Եթէ հնար ինչ խցէ ձեզ, ընդ ամենայն  
մարդկան զխաղաղութիւն կալլիք» : Հոսով. Ժ. 18 :



### ԻՆԴԻՐ Զ.

Լ. Ի՞նչ հատկնալու է տէրունական ազօթից  
մէջ «փորձու թիւն» ըսելով :

Պ. կը հասկնամք պարադայից այն կէտը՝ յո-  
րում իրտ մտա կը գտնուի հաւատքը կորսն-  
ցնելու՝ կամ ծանր մեղաց մէջ իյնալու փտանդը :

Լ. Այս տեսակ փորձու թիւններ մտկից յառաջ՝  
կուզան :

Պ. Մեր մարմինէն, աշխարհէն կամ ուրիշ մար-  
դիկներէն և Սատանայէն :

Լ. Ի՞նչ կը խնդրեմք ազօթելով և ըսելով «Մի  
տանիր զմեզ ՚ի փորձու թիւն» :

Պ. Եթէ՛ սրպէս զի Աստուած չի թողու զմեզ  
փորձութեան մէջ : Երկրորդ՝ թէ և պէտք է մեզ  
փորձուիլ և մաքրուիլ փորձութեանի, սակայն  
Աստուած՝ իրբն զթամ չի յանձնէ զմեզ բոլորս-  
վին անոր՝ և մեր անկմանն առաջըն առնել :

### ԻՆԴԻՐ Է.

Լ. Ի՞նչ բանի կը փախուքիմք տակաւին մեր  
ազօթից ժամանակ ըսելով «Փրկեա զմեզ ՚ի չարէ» :

Պ. կը խնդրեմք փրկութիւն բոլոր որ և իցէ  
չար գործէ, որ կարող է մեզի տիրել այս աշխար-  
հիս մէջ . քանզի սկզբնական մեղքէն յետոյ աշ-  
խարհքս փորձութեան մէջ ինկած է . Ա. Յովհ .  
Ե. 19 : Մասնաւորաբար մեղաց զեշտ թմենէն և  
չարեաց ողւոյն սասանային որոգայթէն :

### ՅԱՂԱԳՍ ՓԱՌԱՐԱՆՈՒԹԵԱՆ (ΔΟΞΟΛΟΓΙΑ)

Լ. Ինչու համար տէրունական ազօթքին մէջ  
փառաբանութիւնը միատեղ կատնուի :



Պ. Նախ՝ որպէս զի՝ խնդրելով երկնային Հօր ողորմութիւնը, նուիրեմք միանգամայն Անոր իրեն յատկացեալ պատիւը. իսկ երկրորդ՝ որպէս զի՝ մտածելով Անոր յախտենական թաղաւորութեան, զօրութեան և փառաց վրայ, ալ աւելի հաստատեմք զմեզ մեր խնդրոց վայելման յոյսին վրայ. ըստ որում՝ անոնք իւր իշխանութեան և փառաց կը վերաբերին:

Հ. Ի՞նչ կը նշանակէ «Սմէն» բառը:

Պ. Կը նշանակէ «Ճշմարտապէս» կամ «Եղիցի»:

Հ. Ինչու համար այս բառը կը յաւելումք փառաբանութեան մէջ:

Պ. Ասիկայ կը ցուցնէ՝ որ այս մաղթանքը կը մատուցուի հաւատքով և առանց երկմտութեան, ինչպէս որ կուսուցանէ Յակոբոս Առաքեալը. Յակ. Ա. 6:

### ՅԱՂԱՅՍ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԵՐԱՆՈՒԹԵԱՆՑ

Հ. Ի՞նչ կը սրահանջուի աղօթքէն զատ, փըրկութեան և երանութեան հաստատուն յոյս ունենալու համար:

Պ. Աղօթողին ջանքը երանութիւն ստանալու համար, որուն համար մեր Տէրը կ'ըսէ «Զի՛ կուչէք զիս Տէր, Տէր և զոր ասեմն ոչ առնէք» Դուգ. 9. 46. «Ոչ ամենայն որ ասէ յիս Տէր, Տէր, մտցէ յարքայութիւն երկնից, այլ որ առնէ բղկամա Հօր խնց որ յերկնսն է»: Մատթ. է. 21:

Հ. Ի՞նչ վարդապետութիւն կրնայ առաջնորդել մեզ դէպ ՚ի այս ջանքը:

Պ. Մեր Տիրոջ՝ Յիսուսի Քրիստոսի Աստուածախին երանութեանց մէջ պարունակուած վարդա-

պետութիւնը:

Հ. Քանի՞ են այս երանութիւնները:

Պ. Ինն որք են հետևեալները:

Ա. երանի՛ աղքատաց հողւով, զի նոցա է արքայութիւն երկնից:

Բ. երանի՛ սպասարաց զի նոքա մխիթարեցին:

Գ. երանի՛ հեղոյ զի նոքա ժառանգեցին զերկիր:

Դ. երանի՛ որ քաղցեալ և ծարախ իցեն արդարութեան, զի նոքա յագեցին:

Ե. երանի՛ ողորմածաց զի նոքա ողորմութիւն դուցեն:

Զ. երանի՛ այնոցիկ որ սուրբ են սրտիւք զի նոքա զկատուած անոցեն:

Է. երանի՛ խաղաղարարաց՝ զի նոքա որդիք Աստուծոյ կոչեցին:

Ը. երանի՛ որ հալածեալ իցեն վասն արդարութեան, զի նոցա է արքայութիւն երկնից:

Թ. երանի՛ է ձեզ. յորժամ՝ նստատիցեն զձեզ և հալածեցեն և ափցեն զամենայն բան չար ըզձէնջ սուտ՝ վասն իմ. զի մտցէք և ուրախ լըրուք, զի վարձք ձեր բազում են յերկինս: Մատթ. Ե. 3-12:

Հ. Ի՞նչ պէտք է ըմբռնել լու հասկնալու համար վերալիշեալները:

Պ. Այս խօսքով առանդ եց մեզ Տէրն մեր՝ ևրանութիւն ստանալու եղանակը, ինչպէս որ բացայայտ կերպով կ'ըսէ Աւետարան. «Իւ բացեալ զբերան իւր՝ ուտուցանէք»: Սակայն հեղահամբայր ու խոնարհ ըլլալով՝ իւր վարդապետութիւնն իշխանաբար չէր բացատրեր՝ այլ երանի կարգալով անոնց՝ որք ինքնայորդ որ կ'ընդունին զայն և



կը գործադրեն : վասն որոյ խրատքանչիւր հա-  
մարին մէջ պէտք է նաև վարդապետութիւնը  
քննել, կամ լաւ ևս, պատուէրը . երկրորդ՝ ե-  
րանութիւնն, այսինքն վարձատրութեան խոս-  
տումը :

ՅԱՂԱԳՍ Ա. ԵՐԱՆՈՒԹԵԱՆ

Հ. Երանութիւն ստանալու համար Ա. պատ-  
ուիրանը սրն է :

Պ. Հոգւով աղքատ ըլլալ :

Հ. Ատիկայ ի՞նչ կը նշանակէ :

Պ. Կը ցուցնէ հոգւոյ համազումը թէ մենք  
մասնաւոր բան մը չունինք, այլ միայն այն բանե-  
րը զորս Աստուած մեզ կը շնորհէ և առանց Աս-  
տուածային օգնութեան և շնորհաց բարի գործ մը  
չենք կրնար ընել այնպէս որ ոչինչ համարելու ենք  
ինքզինքնիս և ամեն բանի մէջ Աստուածային  
գթութեան ապաւինելու : Ըստ մեկնութեան Յով-  
հաննու Ռսկերեքանի՝ հոգևոր աղքատութիւնը,  
խնարհութիւնն է . Տես Ճառ. Ի ժե : Գլ. Մաս :

Հ. Արեմն հարուստներն ալ հոգւով աղքատ  
կրնան ըլլալ :

Պ. Անշուշա կրնան, եթէ մաքով ըմբռնեն թէ  
տեսանելի հարստութիւնը եղծանելի և վաղան-  
ցուկ է, և թէ չի լեցնելու երբէք հոգևոր բար-  
եաց պակասութիւնը . « Զի՞նչ օգտիցի մարդ և-  
թէ դաշխարհս ամենայն շահեացի, և զանձն իւր  
տուժեացի : կամ զի՞նչ տացէ մարդ վրկանս ընդ-  
անձին իւրու՞մ » . Մատթ. ԺԶ. 26 :

Հ. Արդեօք մարմնոյ աղքատութիւնը հոգևու-  
րականին չօգնելու :

Պ. Կողնէ . երբ քրիստոնեայն յօժարի անոր,  
Աստուծոյ համար, այսպէս Յիսուս ֆրիստոս պա-  
տախանեց հարուստներուն ըսելով . « Եթէ կա-  
միս կատարեալ լինել երթ վաճառեա զինչս քս և  
տուր աղքատաց և ունիցիս դանձս յերկինս և եկ  
զկնի իմ » . Մատթ. ԺԹ. 21 :

Հ. Ի՞նչ կը խոստանայ Տէրը հոգւով աղքատաց :  
Պ. Երկնից թաղաւորութիւնը :

Հ. Անսք ի՞նչպէս կ'ստանան երկնից թաղաւո-  
րութիւնը :

Պ. Ներկայ կենաց մէջ ներքնապէս և նախա-  
պատրաստութեամբ հաւատոյ և յուսոյ միջոցով .  
սպազային մէջ կատարելապէս յախտնական  
բարեաց հաղորդակցութեամբ :

ՅԱՂԱԳՍ Բ. ԵՐԱՆՈՒԹԵԱՆ

Հ. Ի՞նչ է Տիրոջ Բ. պատուիրանը երանու-  
թեան համար :

Պ. Ասոր փափաքողները պէտք է որ սգաւոր  
ըլլան :

Հ. Այս պատուէրին մէջ սգոյ ուղիղ իմաստը  
ի՞նչ է :

Պ. Կը նշանակէ սրտի ցուր և բեկումը և ար-  
տաստք՝ Տիրոջ անկասար և անարժան կերպով  
ժառայելուս համար, և անոր բարկութիւնը մեր  
վրայ ձգելուս համար մեր մեղաց պատճառաւ .  
« Զի որ ըստ Աստուծոյն արտմութիւն է, յապաշ-  
խարութիւն ՚ի փրկութիւն առանց զզանալոյ գոր-  
ծէ, իսկ աշխարհի արտմութիւն մահ գործէ » .  
Բ. Կորնթ. Ի. 40 :

Հ. Մասնաորաբար Տիրոջ առ. սգաւորս ըսած



խոստումն ի՞նչ է :

Պ. Թէ պիտի մխիթարուին :

Լ. Ի՞նչ մխիթարութիւն կը հասկցուի ասոր, մեջ :

Պ. Մխիթարութիւն ըստ շնորհաց կայացեալ մեղաց լծարութեան և խղճմանաց խաղաղութեան մեջ :

Լ. Ինչո՞ւ համար այս աւետիսը սգոյ պատուի-  
րանին հետ կը միանայ :

Պ. Արդէս զի մեղքերէն յուսաջ եկած կզկիծը  
յուսահատութեան չի հասնի :

ՅԱՂԱԳՍ Գ. ԵՐԱՆՈՒԹԵԱՆ

Լ. Տիրոջ երանութեան համար սուած Գ. պատ-  
ուիրանը ո՞րն է :

Պ. Պէտք է որ անոր փախաքողները հեղ ըլլայ :

Լ. Ի՞նչ է հեղութիւնը :

Պ. Հոգւոյ խաղաղ արամադրութիւնը, այսինքն  
զգուշանալ՝ մէկը չի զայրացնելու և չի զայրա-  
նալու :

Լ. Քրիստոնէական հեղութեան նկարագիրքն  
զրո՞նք են :

Պ. Չի արանջալ չէ թէ միայն Աստուծոյ այլ և  
մարդոց դէմ, և սրչափ արհամանք հանդիպին,  
բարկանալու չի զայրանալ :

Լ. Տիրոջ առ հեղ, ըրած խոստումը ի՞նչ է :

Պ. Թէ պիտի զերկիր ժառանգեն :

Լ. Ի՞նչպէս հասկնալու է այս խոստումը :

Պ. Ընդհանրապէս Քրիստոսի հետևողներուն  
հիշատակաբ՝ խոստումը կանխատեսութիւն մ'է որ  
իսկին կատարուեցաւ, ըստ որու մ'հեղ և անմեղ

քրիստոնէայեանքը փոխանակ կորսուելու կատարի  
հեթանոսներէն, ժառանգեցին զտիեզերս, որ  
նախ հեթանոսաց ձեռքն էր, իսկ ներքին իմաս-  
տան է թէ՛ քրիստոնէայք պիտի վայելեն այն  
կենդանեաց երկիրը՝ ուր ըստ Գաւթի՝ կ'ապրին  
ու չեն մեռնիր. Սաղմ. ԻԶ. 13 :

ՅԱՂԱԳՍ Գ. ԵՐԱՆՈՒԹԵԱՆ

Լ. Տիրոջ երանութեան համար սուած Գ.  
պատուիրանը ո՞րն է :

Պ. Թէ երանութեան փախաքողները պէտք է  
որ անօթի և ծարաւ ըլլան արգարութեան :

Լ. Հոս ի՞նչ պէտք է հասկնալ արգարութիւն  
ըսելով :

Պ. Թէ և հոս ամեն տեսակ առաքինութիւն կը  
հասկցուի, որուն փախաքիլ պարտի քրիստոնէայե  
իրր հացի և ջրոյ, այլ սակայն մասնաւորապէս ի-  
մանալու է նոյն իսկ այն արգարութիւնը, որ Գա-  
նիէլ մարդարէ կը յայտնէ ըսելով « Եւ ՚ի հասա-  
նել յախտենական արգարութեան » այսինքն  
Աստուծոյ առջև մեղաւոր մարդու արգարութիւ-  
նը՝ շնորհաց և Քրիստոսի հաւատոյցը միջոցաւ  
Գան. Թ. 24 : Այս արգարութեան համար Պողոս  
առաքեալ կ'ըսէ. « Քանզի արգարութիւնն Աս-  
տուծոյ ՚ի հաւատոյ անախ Յիսուսի Քրիստոսի,  
յամենայն հաւատացեալս, և ոչինչ է խաիր : Քան-  
զի ամենեքին մեղան, և նուազեալ են. ՚ի փա-  
ռացն Աստուծոյ, և արգարանան ձրի նովին չը-  
նորհօք ՚ի ձեռն փրկութեան որ ՚ի Քրիստոս Յի-  
սուս զոր յառաջն ետ Աստուած, քաւութիւն ՚ի  
ձեռն հաւատոյն արեամբ նորա ՚ի հանդէս ար-



գարութեան նորա, վասն թողութեան յառաջա-  
գոյն մեղացի գործերց»։ Առ Հռոմ. Գլ. Գ. Հա-  
մար 22—23։

Լ. Արդարութեան ծարաւիները և անօթինե-  
րը որո՞ւ եք են։

Պ. Անն.ք՝ որոնք իրելով բարեգործութիւնք  
ինքզինքնին արդար չեն կարծեր, ոչ ալ համա-  
զում ունին իրենց գործին բարութեան վրայ.  
այլ ինքզինքնին մեղաւոր կը խոստովանին և իրենք  
իրենցմէ գատապարտուած Աստուծոյ առջև, ա-  
նոնք՝ որոնք սրտագին փափաքով ՚ի հաւատա իբր  
հաց և շուր հոգեւոր անօթի և ծարաւ Յիսուսի  
Յրիստոսի ըստ Հնորհաց արգարութեանը։

Լ. Տէրը արգարութեան անօթիններուն և ծա-  
րաւիններուն ի՞նչ կը խոստանայ։

Պ. Թէ պիտի յաղ ենան։

Լ. Հոս ի՞նչ կը նշանակէ յաղ ենալ։

Պ. Իբր մարմնական յաղ եցու թիւն. Ա. կը նշա-  
նակէ ծարաւի և անօթութեան զգացմանց դա-  
դարումը. Բ. կը զօրացնէ մարմինը սնունդով.  
նոյնպէս կը նշանակէ հոգեւոր յաղ եցու թիւն՝ Ա.  
ներքին հանցատու թիւն սպարմ թիւն գտան մե-  
ղաւորին և Բ. բարին գործելու զօրութեամբ ըս-  
տացումը որն որ կը շնորհաւի արգարութեան չը-  
նորհ.քով վերջին յաղ եցու թիւնը հոգւոյ, որ ըս-  
տեղծուեցաւ ՚ի վաղելումն անհուն բարեաց. պի-  
տի կատարուի յաւիտենական կենաց մէջ ըստ  
Գաւթի «Յաղ եցայց յերևիլ փառաց քոց» Սաղ-  
մեա ԺԶ. 13։

### ՅԱՂԵՑԻ Ե՛ ԵՐԱՆՈՒԹԵԱՆ

Լ. Տիրոջ երանութեան համար տուած Ե.  
պատուիրանը որն է։

Պ. Երանութեան փափաքողները պէտք է որ  
ողորմած ըլլան։

Լ. Ի՞նչ կերպով կը կատարուի այս պատուի-  
րանը։

Պ. Թէ մարմնաւոր և թէ հոգեւոր ողորմու-  
թեամբ. որովհետև ինչպէս կ'ըսէ Ս. Յովհաննէս  
Ոսկերեբան «Ողորմութեան կերպը զանազան է  
և պատուէրն ընդարձակ»։ ՚ի ԺԵ. Մատթէի։

Լ. Ողորմութեան մարմնաւոր գործերը որո՞նք  
են։

Պ. Ա. անօթին կերակրել. Բ. ծարաւին շուր  
տալ. Գ. հազուեղենը մերկը, Գ. բանասարկելոյ  
սցցելու թիւն ընել. Ե. հիւանդին տեսութեան  
երթալ և զայն գարմանել և անոր ապաքինութեան  
օգնել կամ իբր քրիստոնէաց մեռնելու պատրաս-  
տել զայն. Զ. օտարականը հիւրընկալել. Է. աղ-  
քաւ մեռելները թաղել։

Լ. Ողորմութեան հոգեւոր գործերը որո՞նք են։

Պ. Ա. Մեղաւորը իր խոստրեալ ճամբէն դար-  
ձնել. Յակոբ. Ե. 20։ Բ. աղէտին ուսուցանել  
ղջնարիտն և բարին. Գ. ճնարիտ խրատներ տալ  
ընկերին՝ երբ շուարած ու փտանդի մէջ է. Դ.  
անոր համար Աստուծոյ աղօթել. Ե. մխիթարել  
ողաւորը. Զ. մեղի շարութիւն ընողներուն շար  
չհատուցանել. Է. անիրաւութեանց սրտովներել։

Լ. Արդեօք յանցաւորը արգարութեան պատ-  
ժէրը ողորմութեան պատուիրանին հակառակ է։



Պ. Ամենեւ ին, երբ ասիկայ կ'ըլլայ ըստ պարտուց և բարի նպատակաւ այսինքն յուզող թիւն յանցաւորին կամ 'ի պաշտպանութիւն անմեղաց :

Լ. Տէրը ի՞նչ կը խոստանայ ողորմածաց :

Պ. Թէ սղորմութիւն պիտի գտնան :

Լ. Ի՞նչ ողորմութիւն կը հասկցուի հոս :

Պ. Առաջի Աստուծոյ դորձած մեղքերնուս համար կրելիք դատապարտութենէն ազատիլ :

ՅԱՂԱԳՍ Զ. ԵՐԱՆՈՒԹԵԱՆ

Լ. Տիրոջ երանութեան համար տուած Զ. պատուերանը սրն է :

Պ. Անոր փափաքողները պէտք է որ սրտով սուրբ ըլլան :

Լ. Սրտի սրբութիւնը մտերմութեան հետ նոյնն է :

Պ. Մտերմութիւնը որով մարդ չէ թէ միայն իր սրտին մէջ չեղած բարի արամադրութիւններ չի կեղծաւորեր, այլ մանաւանդ սրտին բարի արամադրութիւնները կը ցուցնէ բարի դորձերով այն վերջին աստիճան առաքինութիւնը, կրսեմ, սրտի մաքրութենէն կը բլլիլի : Ատոր կը հասնի մարդ յարատեւ և արթուն ու շաղթութեամբ ջանալով դուրս ձգել իւր սրտէն ամեն ապօրինաւոր փափաք կամ մտածմունք . և ամեն մարմնաւոր փափաքը . վերջուպէս, պահելով սրտին մէջ Աստուծոյ և մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի յիշատակը հաւատով և սիրով :

Լ. Մեր Տէրը սրտով մաքորներուն ի՞նչ կը խոստանայ :

Պ. Թէ զԱստուած պիտի տեսնան :

Լ. Ի՞նչպէս հասկնալու է այս խոստմունքը :

Պ. Աստուծոյ խօսքը՝ մարդկային սիրաբ կը նըմանցնէ աչքի և կատարեալ քրիստոնեայներու սրտի լուսաւոր աչքեր . Առ Եփես. Ա. 18. քանզի ինչպէս որ մաքուր աչքը ընդունակ է լուսոյ տեսութեան, այնպէս ալ մաքուր սիրաբ Աստուծոյ տեսութեան ընդունակ է, և որովհետեւ այս պիտի տեսութիւնը յաւիտենական երանութեան աղբիւրն է՝ Աստուածային տեսութեան աւետիլը բարձր աստիճանի և անվախճան երանութեան մը աւետումն է :

ՅԱՂԱԳՍ Է. ԵՐԱՆՈՒԹԵԱՆ

Լ. Տիրոջ երանութեան համար տուած Է. պատուէրը սրն է :

Պ. Երանութեան փափաքողները պէտք է որ խաղաղարար ըլլան :

Լ. Այս պատուէրը ի՞նչպէս կը կատարուի :

Պ. Ամեն բանի մէջ խոհեմութեամբ վարուելով և փախչելով երկմտութեան առիթներէ, եթէ երկմտութիւն մը պատահի՝ կը պարտաւորիք ամենայն կերպով գաղթեցնել զայն, ամենայն կերպով՝ մեր ֆրաստիլն անցամ. բայց ու շաղթութիւն բնելով որպէս զի մեր պարտաւորութիւնը սոնա կրիս չլինիք և ոչ ալ մէկուն ֆրաստեք : Նաև կը պարտաւորիք հայտեցունել զիրար աստղներն՝ ըստ կարի . և 'ի պակասութիւն կարողութեան՝ ազալել զԱստուած 'ի հաշտութիւն նոցին :

Լ. Մեր Տէրը ի՞նչ կը խոստանայ խաղաղարարաց :

Պ. Թէ Աստուծոյ որդի պիտի կոչուին :



Լ. Այս խոստմունքը ի՞նչ կը նշանակէ :

Պ. Խաղաղարարաց աշխատութեան վսեմութիւնը կը նշանակէ և նոցա համար պատրաստուած վարձարու թեանց գերազանցութիւնը : Եւ որովհետեւ այս պատուէրը կատարողները կը նմանին Աստուծոյ միածին որդւոյն՝ որ եկաւ յաշխարհ մեզաւոր մարդը աստուածային արդարութեան հետ հաշտեցնելու , վասն որոյ շնորհօք անսնք որդի Աստուծոյ կոչուեցան և անտարակոյս պիտի արուի անոնց արժանի աստիճան մը երանութեան :

ՅԱՂԱԳՍ Ը • ԵՐԱՆՈՒԹԵԱՆ

Լ. Տիրոջ երանութեան համար տուած Ը. պատուիրանը սո՞ն է :

Պ. Երանութեան վախաքողները պէտք է որ պատրաստ ըլլան համբերելու արդարութեան համար կրելիք հալածանայ՝ և ջանալ զայն օտնակրիս չընելու :

Լ. Ի՞նչ ձիրքերով կը կատարէ այս պատուիրանը :

Պ. Ճշմարտասիրութեամբ , համբերութեամբ և յարատևութեամբ յառաքինութիւն : Երբ արկած մը կամ վտանգ մը պատահի՝ պէտք է ջանալ տանելու զայն առաքինութիւնն ու ճշմարտութիւնն օտնակրիս չընելու համար :

Լ. Ի՞նչ կը խոստանայ մեր Տէրը արդարութեան համար հարածելոց :

Պ. Երկնից թաղաւորութիւնը՝ ՚ի վարձարութիւն հալածանաց պատճառաւ կրած զրկմանց : Ինչպէս որ ըսուեցաւ Հոգւոյ աղքատներուն ալ իրենց կարօտութիւնը լեցուելու համար :

ՅԱՂԱԳՍ Թ • ԵՐԱՆՈՒԹԵԱՆ

Լ. Տիրոջ երանութեան համար տուած Թ. պատուիրանը սո՞ն է :

Պ. Երանութեան վախաքողները պէտք է որ պատրաստ ըլլան կրել ու բախտութեամբ ամեն տեսակ հալածանք , արհամարհանք , արկածք և նոյն իսկ մահն յանուն Քրիստոսի և ՚ի պաշտպանութիւն ուղղափառ հաւատոյ :

Լ. Ի՞նչպէս կ'անուանուի այն ջանքը որով կը կատարուի այս պատուիրանը :

Պ. Մարտիրոսութիւն :  
Լ. Տէրը ի՞նչ կը խոստանայ մարտիրոսներուն :  
Պ. Բազում վարձք , յերկինս , այսինքն ըարձր և քնաիր աստիճան երանութեան :

ՄԱՍՆ Գ.

ՔՐԻՍՏՈՆԵՍԱՎԱՆ ՎԱՐԳԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ՅԱՂԱԳՍ ՄԻՐՈՑ

ՄԻՐՈՑ ԵՒ ՀԱՌԱՏՈՅ ՄԻՋ ԵՂԱՄ ԿՅՊԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Լ. Ի՞նչպիսի պէտք է ըլլալ քրիստոնէական ճշմարիտ հաւատոյ գոցներն ու պատուները :

Պ. Սէրը և անոր համաձայն եղող բարի գործերը « Զի ՚ի Քրիստոս Յիսուս (կ'ըսէ Պօղոս առաքելը) ոչ թշտատութիւն ինչ կարող է և ոչ անթիփտութիւն, այլ հաւատք տիրով յաշտելալք »



առ Գաղ. Գլ. Ե. Հմբ. 6 :

Լ. Քրիստոնէին բառակա՞ն է միայն հաւանք ունենալ առանց սիրոյ և բարի գործոց :

Պ. Այ, վասն զի հաւատքը առանց սիրոյ և բարի գործոց մեռեալ է, և ոչ ալ յախտնական կեանք կրնայ պարգեւել : « Իսկ որ ոչն սիրէ զեղբայր, անդէն ՚ի մահու մնայ » . Յովհ. Թղթ. Ա. Գլ. Գ. Հմբ. 14 : « Զի՞նչ օգուտ իցէ, եղբայր իմ եթէ ասի ոք հաւատս ունել և գործս ոչ ունիցի, միթէ կարիցեն հաւատք ւարեցուցանել զնա, զոր օրինակ մարմին առանց հոգւոյ մեռեալ է . սոյնպէս և հաւատք առանց գործոց մեռեալ են » . Յակ. Գլ. Բ. Հմբ. 14, 26 :

Լ. Ընդհակառակն արդեօք կրնա՞նք վերադառնալ սիրով և բարի գործերով առանց հաւատոց :

Պ. Անկարելի է ճշմարտագէտ սիրել զԱստուած առանց անոր վրայ հաւատք ունենալու, բայց ՚ի տակէ մեղքով ազականալ մարդը չի կրնար բարի գործ ալ ընել, քանզի ՚ի Քրիստոսի հաւատքով ընդունած չէ այն հոգեւոր կարողութիւնը կամ Աստուծոյ շնորհքը ՚ի ճշմարիտ բարեգործութեան : « Առանց հաւատոյ անհնար է հաճոյ լինել Աստուծոյ, այլ հաւատալ արժան է այնմ որ մեք ձեռնայ առ Աստուած լծէ է Աստուած և որ խնդրեն զնա լինի պարգեւատու » . առ Եբր. ԺԱ. 6 : « Զի որ միանգամ ՚ի գործոց օրինացն են, ընդ անիծիւք են . քանզի դրեալ է, լծէ անիծեալ ամենայն մարդ որ ոչ կացցէ յամենայն զըրեալսն ՚ի զիր օրինաց՝ առնել զամենայն » : Առ Գաղ. Գ. 10 : « Զի մեք հոգւոյն ՚ի հաւատոց յուսոյն արդարութեան ակն ունիմք » . Առ Գաղ. Ե. 5 : « Զի չնորհօք նորա էք վրկեալք ՚ի ձեռն հա-

ւատոցն, և այս ոչ ՚ի ձէնջ, այլ Աստուծոյ պարգեւ է, ոչ ՚ի գործոց, զի մի ոք պարծեացի » . առ Եփես. Բ. 8, 9 :

Լ. Ի՞նչ կարծիք ունենալու է այն սիրոյն վրայ որ բարի գործ չարդիւնաւորեր :

Պ. Այս սէրը ճշմարիտ չէ և որովհետեւ ճշմարիտ սէրը բնականաբար յայտնի կ'ըլլայ բարի գործով, վասն որոյ Յիսուս Քրիստոս կ'ըսէ . « Որ ոչնի զպատուիրանս իմ և պահէ զնոսա՝ նա է որ սիրէ զիս, եթէ ոք սիրէ զիս՝ զբանն իմ պահեսցէ » . Յովհ. ԺԳ. Հմբ. 21, 28 : Յովհաննէս առաքեալը կը գրէ . « Բանզի այս է սէրն Աստուծոյ, եթէ զպատուիրանս նորա պահեացուք » . Թուղթ Յովհ. Ա. Գլ. Ե. Հմբ. 3 : « Մի բանիւք և ըրգուօք սիրեցուք այլ արդեամբք և ճշմարտութեամբք » : Յովհ. Ա. Գլ. Գ. Հմբ. 18 :

ՅԱՂԱԳՍ ԱՍՏՈՒՄԵԱՅԻՆ ՕՐԻՆԱՅ ԵՒ ՊԱՏՈՒՐԱՆՍՅՑ

Լ. Որո՞նք են բարի գործերը չարերէն որոշեալու միջոցները .

Պ. Աստուծոյ ներքին օրէնքը այսինքն խղճմաւորանաց վկայութիւնը և Աստուծոյ արտաքին օրէնքը, այսինքն աստուածային պատուիրանները :

Լ. Ս. Կերքը ներքին օրինաց վրայ բան մը կ'ըսէ՞ :

Պ. Պօղոս առաքեալը կ'ըսէ հեթանոսաց համար . « Որք ցուցանեն զգործս օրինացն դրեալ ՚ի սիրտս իւրեանց, վկայութեամբ մտաց իւրեանց և յանդիմանել զմիմեանս ՚ի խորհրդոց իւրեանց կամ լծէ պատասխանի իսկ տալ » . առ Հռովմ. Գլ.



Բ. Հմբ. 15:

Լ. Եթէ մարդուն մէջ ներքին օրէնք մը կայ ինչո՞ւ համար արուեցաւ արտաքինը:

Պ. Վասն զի մարդիկ զանց ըրին ներքին օրէնքը և մարմնական ու անտրբ կեանք վայելելով իրենց մէջ եղած հոգեոր օրինաց ձայնը խեղդեցին. վասն որոյ պէտք եղաւ անոնց յիշեցնել արտաքին պատուիրանաց միջոցով. «Իսկ զի՞նչ իցեն օրէնք, յանցումոց վասն յաւելուն» . առ Գաղ. Գ. Հմբ. 19:

Լ. Ե՞րբ և ի՞նչ կերպով արուեցաւ մարդոց Աստուծոյ արտաքին օրէնքը:

Պ. Երբ Արքայաձակն սերտը խորոյեցուց ժողովուրդը հրաշագործութեամբ ազատուեցաւ և գիտաւորաց ժառանգութենէն, այն ատեն անոնց Աւետեաց երկիրը երթալու ճամբան տնապատին մէջ Սինա լեռան վրայ Աստուած յայտնեց իւր ներկայութեամբ հուրով և մուշով, և օրէնք տրուաւ իտայեղացւոց իրենց Մովսէս առաջնորդին միջոցաւ:

Լ. Ար՞նք են այս օրինաց գլխաւոր և ընդհանուր պատուիրանները:

Պ. Հետեւեալ տասն հատը, որք քանդակուած էին երկու քարէ տախտակներու վրայ. 1. Ես եմ Տէր Աստուած քո մի եզրիցն քեզ այլ աստուածք բաց յինէն. 2. Մի արասցես դու քեզ կուռս բառ ամենայն նմանութեան որ ինչ յերկինս ՚ի վեր է, և որ ինչ յերկրի ՚ի խոնարհ և որ ինչ ՚ի ջուրս ՚ի ներքոյ երկրի մի երկիրպագանիցես նոցա և մի պաշտեցես զնոսա. 3. Մի առնուցուս զանուն Տեառն Աստուծոյ քոյ ՚ի վերայ սնտեաց. 4. Յիշեալիր զօրն շարժուց սրբել զնա, զլեց

քր զործեսցես և արասցես զամենայն զգործս քո յառարս եօթներորդի շաբաթ Տեառն Աստուծոյ քոյ. 5. Պատուեա զհայր քո և զմայր քո, զի քեզ բարի լիցի և զի երկայնակեաց լինիցիս ՚ի վերայ երկրին բարութեան. 6. Մի սպանաներ. 7. Մի շնար. 8. Մի գողանար. 9. Մի սուտ վկայեր զընկերէ բուձմէ. 10 Մի ցանկանար ասն ընկերի քոյ, և մի անդոյ նորա, մի ցանկանար կնոջ ընկերի քոյ և մի ծառայի նորա, և մի աղախնայ նորա, և մի եզին նորա և մի իշոյ նորա, և մի ամենայն անասնոյ նորա և մի ամենայնի զինչ ընկերի քոյ իցէ» . Ելից Գլ. Խ. Հմբ. 1—17:

Լ. Իտայեղի ժողովրդեան արուած պատուէրները մեք ևս պահել կը պարտաւորի՞նք:

Պ. Այո, վասն զի ասոնք գլխաւորաբար կը պարունակեն օրէնքը որն որ բառ ասելոյ Պողոս առաքելոյն զբուձմ են ամեն մարդոց սրտին վերայ այսպէս զի ամէնքը անոր հետեւին:

Լ. Արդեօք Յիսուս Քրիստոս հրամայեց մեզ ասար պատուիրանաց համեմատ վարուիլ:

Պ. Այո, ինքը հրամայեց պահել զանոնք ՚ի վայելումն յախտեանական կենաց, ուսոյց նաև թէ ինչպէս պէտք է հասկեալ և կատարել զանոնք կատարելապէս. Տես Մատթ. Գլ. ԺԹ. Հմբ. 17 և Ե. Ղլուխն անբող:

ՅԱՂԱՂՍ ԲԱԺԱՆՄԱՆ ՏԱՄՆ ՊԱՏՈՒԻՐԱՆԱՅ  
ՅԵՐԿՈՒԿ ՏԱԽՏԱԿՍ

Լ. Տասն պատուիրանաց երկու տախտակներու բաժնուիլը ի՞նչ կը նշանակէ:

Պ. Կը նշանակէ անոնց մէջ պարունակուած սի-



բոյ երկու տեսակը սյտինքն սէր առ Աստուած  
և սէր առ ընկերն, և յորմէ յառաջ կուգան եր-  
կու տեսակ սրբաբան որով թիւնք :

Ը. Արդ եօք Յիսուս Քրիստոս ասոր համար բան  
մը յիշած է :

Պ. Իրեն հարցուելով թէ՞ « ո՞ր պատուիրան  
մեծ է յօրէնս » ըստ . « Սիրեցեաց զսէր Աստուած  
քո յամենայն սրտէ քումմէ, և յամենայն յանձնէ  
քումմէ և յամենայն մտոց քոց . սյս է մեծն և  
առաջին պատուիրան . և երկրորդ նման սմին,  
սիրեցեաց զընկեր քո, իբրև զանձն քո, յայս եր-  
կուս պատուիրանս ամենայն օրէնք և մարդ արէք  
կոխեալ կան » . Մատթ. Ի. Զմր. 36—41 :

Ը. Ամեն մարդ մեր ընկերը կրնայ սեպուիլ :

Պ. Այո, վասն զի ամենն ալ մի Աստուծոյ ա-  
բարածն են, և ամենն ալ մարդէ սերեալ : Այլ  
ասկայն մեր հաւատակիցնրը երկակի մեզ ընկեր  
են, իբր սրգիք մի երկնասար հօր հաւատքով ՚ի  
Յիսուս Քրիստոս :

Ը. Ինչա՞ ինքզինքնիս սիրելու համար պատուի-  
րանք մը չի արանցաւ :

Պ. Վասն զի ասանց պատուիրանի ալ բնակա-  
նորար « Այ սք եր էք ատեոյ զանձն իւր այլ ո՞ր-  
նուցանէ և դարմանէ զնա » . առ Եփես. ԳԼ Ե.  
Հմր. 29 :

Ը. Ի՞նչ կը պահանջէ առ Աստուած, առ ըն-  
կերն և առ անձինս եզած սէրը :

Պ. կը պարտաւորիմք սիրել զանձինս մինակ  
Աստուծոյ համար և մասամբ բնկերնուս համար,  
և ընկերը սիրել կը պարտաւորիմք Աստուծոյ հա-  
մար, վերջապէս Աստուած պէտք է սիրուիլ մեզ-  
մէ և ամենայն բանէ աւելի . առ անձինս ունե-

ցած սէրը կը պարտաւորիմք զոհել վասն սիրոյ  
ընկերնուս և առ անձինս ու առ ընկերս ունե-  
ցած սէրը կը պարտաւորիմք զոհել վասն սիրոյն  
Աստուծոյ : « Մեծ ևս քան զայն սէր՝ ոչ ոք ու-  
նիցի եկէ զանձն իւր դիցէ ՚ի վերայ բարեկամոց  
իւրոց » . Յովհ. ԺԵ. Հմր. 13 . « Ար սիրէ զՏայր  
կամ զմայր առաւել քան զիս, կըսէ Քրիստոս՝  
նչ է ինձ արժանի, և որ սիրէ զուս ար կամ զգուս,  
արր առաւել քան զիս, ոչ է ինձ արժանի » .  
Մատթ. ԳԼ Ժ. Հմր. 37 :

Ը. Եթէ բոլոր օրէնքը երկու պատուիրանոց  
մէջ կը պարունակուի ինչա՞ համար առանի բաժ-  
նուած է :

Պ. Արպէս զի աւելի բացայայտ կերպով բա-  
ցարաւի մեր առ Աստուած և առ ընկերն ունե-  
ցած պարտաւորու թիւննիս :

Ը. Պատուիրաններէն որոնց մէջ կը վճու ին առ  
Աստուած ունեցած պարտաւորու թիւննիս :

Պ. Առջի չորս պատուիրաններուն մէջ :

Ը. Եւ ի՞նչ են բացայայտ պարտաւորու թիւն-  
ներնիս :

Պ. Ա. ճանչնալ և պատուել ճշմարիտ Աստուածը  
Բ. Փոխել ամեն սուտ պաշտամանիքէ :

Գ. Խօսքով սնդամ աստուած պաշտու ըլեան  
դէմ բան մը չընել :

Դ. Աստուած պաշտու ըլեան մէջ կարգ մը պա-  
հել ժամանակաց և դ սրժոց :

Ը. Պատուիրաններէն որոնց մէջ առ բնկերս ու-  
նեցած պարտաւորու թիւննիս վճուումն են :

Պ. Վերջի վեց պատուիրաններուն մէջ :

Ը. Արժեք են այս պարտքերը :

Պ. Ե. պատուիրանն է սիրել և պատուել բն-



կերնիս , և մասնաւորապէս մեր աղբականները , ծնողքներնէս սկսելով Զ. ն է չի վնասել մեր ընկերին կենաց , Է. ն է այլոց բարուց մաքրութեան չի դպել . Բ. ն է ուրիշին ստացուածոց աչք չի դնել . Թ. ն է ուրիշը խօսքով չի ջառջնել . Ժ. ն է անոնց վնասը չի փախաբիլ :

Ը. Արդեօք տասն պատուիրանաց մէջ կը պարունակուի առ անձինս ունեցած պարտաւորութիւննիս :

Պ. Այս պարտքերը կը պարունակուին առ ընկերս ունեցած պարտաւորութեանց պատուիրանին մէջ , վասն զի մեր ընկերները կը պարտաւորիմք սիրել իրը զանձինս մեր :

ՅԱՂԱՅՍ Ա. ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՆ

Ը. Ի՞նչ յայտնել կ'ուզէ « Ես եմ Տէր Աստուածքս » խօսքերով :

Պ. Ասոնցմով Աստուած , կը ցուցնէ մարդուն ինքզինքն և հետեւաբար կը հրամայէ ճանչնալ ՂՏէր Աստուած :

Ը. ՁԱստուած ճանչնալու պատուիրանէն ի՞նչ դիտար պարտաւորութիւններ յառաջ կուգան :

Պ. Նախ պէտք է ուսանիլ Աստուածագիտութիւն իրը վերնագոյն ամենայն դիտութեանց Բ. պէտք է լսել ուշադրութեամբ եկեղեցւոյ մէջ Աստուծոյ և անոր գործոց վրայ եղած քարոզութիւնները և անկան բարեպաշտ խօսակցութիւնները , Գ. վերժանել և լսել Աստուածապաշտութիւն սորվեցնող գիրքերը . որք են . նախ՝ Ս. Գիրքը , Բ. Սուրբ Հորոց գրուածքներն :

Ը. Ի՞նչ կը հրամայեն « Մի եկեցին քեզ այլ

աստուածք բաց յինէն » խօսքերը :

Պ. Դառնալ և միայն ճշմարիտ Աստուծոյ հետեւիլ :

Ը. Ներքին պաշտաման ի՞նչ պարտաւորութիւններ կը վերաբերին :

Պ. Նախ հաւատալ Աստուծոյ , Բ. Աստուծոյ հետեւիլ , այսինքն զայն յիշել և միշտ ուշադիր ըլլալ իւր անձին . վասն զի Աստուած կը տեսնայ չէ թէ միայն գործերը , այլ ներքին մտածումնիս . Խակ Գ. վախնալ յԱստուծոյ , կամ սանկ բռնք , բարեպաշտութիւն ընել անոր առջև , երկնաւոր Հօր բարկութիւնը մեծ պատուհաս մը համարելով մեզի համար . վասն որոյ պէտք է ուշ դնել զայն չի զայրացնելու . Գ. Աստուծոյ վրայ դնել յոյսերնիս . Ե. սիրել զԱստուած . Զ. Աստուծոյ հնազանդիլ , այսինքն միշտ պատրաստ ըլլալ Աստուծոյ հրամայածները կատարելու և մեր փափաքանաց համեմատ չըրած ատենը չի տրանջալ անոր դէմ . Է. երկրպագել Աստուծոյ իբր գերագոյն էակի . Ը. փառաւորել զԱստուած իբր ինքնակատարիակ . Թ. շնորհակալ ըլլալ յԱստուծոյ իբր Արարիչ Նախախնամող և Փրկիչ . Ժ. յօգնութիւն կոչել զԱստուած իբր Ամենաբարի և Ամենակարող և օգնող ամեն բարի ձեռնարկութեանց :

Ը. Արտաքին պաշտաման ի՞նչ պարտաւորութիւններ կը վերաբերին :

Պ. Նախ խոստովանիլ և քարոզել զԱստուած , այսինքն ճանչնալ թէ անիկայ մեր Աստուածն է , և զայն չուրանալ թէ և այս խոստովանութեան համար մեզի տանջանք և մահ սպառնան . Բ. հըրապարակական պաշտամանց մասնակցիլ , զոր Աստուած պահանջեց և ուզափառ եկեղեցին կար



Գաղթեց :

Լ. Ս. պատուիրանը մանրամասնորաբ ճանաչելու և զոյն պահելու համար սր մեղքերէն պէտք է զրուշանայ :

Պ. Ա. պատուիրանին գէմ եղող մեղքերն են Ա. անասուածու թիւն . երբ մարդիկ կ'ուզեն ազատիլ Աստուծոյ վախէն և դատաստանէն ըսելով իրենց սրտերուն մէջ « թէ ոչ զոյ Աստուծոյ Ստով. ԺԳ. Հմր. 1 . և զորս Աստուծոյն անգամ կը կոչէ . Բ. բազմասուածու թիւն , երբ վտխանակ ճշմարիտ աստուածութեան մը շատ մը աստուած կարծուածները կ'ընդունին . Գ. անհաւատութիւն , երբ Աստուծոյ հաւատարմով նախախնամութեան և յայանութեան շին հաւատար . Դ. հերետիկոսութիւն , երբ մարդիկ հաւատոյ վարդապետութեան մէջ աստուածային ճշմարտութեանց հակադասութեան կարծիքներ կը ներմուծեն . Ե. հերձուած , այսինքն Աստուծոյ ոգգախառ և կաթողիկէ եկեղեցոյ պաշտաման միութեան ինքնայոժար խառնուրդ . Զ. ուրացութիւն , այսինքն ճշմարիտ հաւատքէն հեռուսրութիւն կամ մարդոց վախէն և կամ աշխարհային շահերու համար . Է. յուսահատութիւն , երբ բոլորովին մէկը յոյսը կը կորէ Աստուծոյ շնորհէն և վերկու թեւէն . Ը. կախարդութիւն , երբ Աստուծոյ կարողութեան վրայ ունեցած հաւատքնիս ձգելով կը հաւատամք ծածկեալ և մեծաւ մասամբ արարածոց շար կարողութիւններուն և շար ոգիներուն շինծու ներդարմութեանը . Թ. կրօնամարտութիւն (ու նայնահաւատութիւն) երբ կուտանք սուբորական բանի մը աստուածային կարողութիւն , և զոյն իբրև աստուած կը յարգենք և կը պաշ

տենք . զորօրինակ կը դանուին մարդիկ որք կը հաւատան հին գրքի մը ուրիշ վրկաթիւն կը յուսան , առանց ընդունելու նոյն օրինակ նոր աստուած զիրքր . Ժ. անհողութիւն բարեպաշտութեան ազօթից և հասարակաց պաշտաման .

ԺԱ. սէր արարածոց քան Արարչին , ԺԲ. Մարդահաճութիւն , երբ մարդոց հաճելի ըլլալու համար առ Աստուած ունեցած պարտականութիւնն իս զանց կ'առնեմք . ԺԳ. յուսալ մարդոց վրայ , այսինքն հաւատալ մարդու մը կարողութեանը , և ոչ թէ Աստուծոյ սպրմութեան և օգնութեան :

Լ. Ինչո՞ւ համար մարդահաճութիւնը և մարդուս վրայ յոյս ունենալը Արարչին պատուիրանին գէմ է :

Պ. Բանդի այն մարդը , որուն հաճելի երևնալ կ'աշխատենք կամ թէ յոյսերնիս անոր վրայ կը գնենք զխոտուած զանց առնելով , մեզի համար երկրորդ աստուած մը եղած կ'ըլլայ փխսանակ ճշմարտին Աստուծոյ :

Լ. Ս. Գիրքը ի՞նչ կ'ըսէ մարդահաճութեան վրայ :

Պ. Պօղոս առաքեալ կ'ըսէ « Եթէ առկաին մարդկան հաճոյ լինէի , ապա Բոլիստոսի ծառայ ոչ էի » առ Գաղ. Գլ. Ա. Հմր. 10 :

Լ. Մարդոց վրայ յոյս ունենալուս համար Ս. Գիրք ի՞նչ կը գրէ :

Պ. « Այսպէս ասէ Տէր , անիծեալ լիցի մարդոր արասցէ զոյս իւր 'ի մարդ , և ապաստան լինիցի 'ի մարմին բազկի նորա և ապաստմբիցէ 'ի տեառնէ սիրա նորա » Երեմ. Գլ. ԺԵ. Հմր. 5 :

Լ. Մարդս առ Աստուած ունեցած պարտականութիւնները ըստ արժանոյն կատարելու հա



մար ինքնիրեն հետ ի՛նչպէս պէտք է վարուի :  
Պ. Պէտք է ինքզինքն ուրանալ « Եթէ ոք կամի  
գալ զինի իմ, ուրացի զանձն իւր » . Մարկ. Գլ  
Ը. Հմբ. 34 :

Լ. Ինքզինքն ուրանալ ի՛նչ կը նշանակէ :

Պ. Ս. և մեծն Բարսեղ հետևեալ կերպով կը  
բացատրէ, « Կ'ուրանայ մէկը իւր անձը երբ հին  
մարդը իւր գործերովն հանդերձ վրայէն թողծ  
ուելով նորը կ'զգենու նաև ուրացած կ'ըլլայ իւր  
անձը երբ կը ձգէ աշխարհիս զբաղու մները սրտնք  
խոշոգոտ կ'ըլլան բարեպաշտութեան » : Կատար  
եալ հրաժարումն է անտարբեր ըլլալ նոյն իսկ  
կենաց . և արհամարհել զմահ : Եւ իւր անձին վը  
րայ չը փոտահանալու : Տես կանոնաց պատասխան Ը :

Լ. Ի՞նչ միտթարութիւն կրնայ ունենալ մարդ  
ինքզինքն ուրանալով և բոլոր բնական հաճոյք  
ներէ հրաժարելով :

Պ. Շնորհօք Աստուածոյն միտթարութիւնը ,  
զոր չարչարանքն ալ չեն կրնար տկարացնել « Զի  
որպէս առաւելան չարչարանքն Քրիստոսի 'ի մեզ  
նոյնպէս և 'ի ձեռն Քրիստոսի առաւել լիցի և  
միտթարութիւն մեր » առ Կորնթ . Բ. Գլ Ս. Հա  
մար 3 :

Լ. Եթէ Ա. պատուիրանը կը հրամայէ մինակ  
դԱստուած բարեպաշտութեամբ յարգել ի՛նչպէս  
ուրեմն այս պատուիրանին համաձայն է յարգել  
հրեշտակները և Ս. մարդերը :

Պ. Միշտ առ նոսաունեցած ճշմարիտ յարգան  
քը այս պատուիրանին կը համաձայնի , ըստ ո՞  
րում մենք կը յարգենք Աստուծոյ շնորհքը որ կը  
բնակի անոնց մէջ և կը ներգործէ և ասոնց միջնոր  
դութեամբ Աստուծոյ օգնութիւն կ'ստանանք :

ՅԱՂԱԴՍ Բ. ՊԱՏՈՒԻՐԱՆԻՆ

Լ. Ի՞նչ է այն կուռքը որուն կը վերաբերի Բ.  
պատուիրանը :

Պ. Կուռք կ'ըսուի երկնային , երկրային կամ  
ջրային որ և է արարածի պատկեր , որ փոխա  
նակ Աստուծոյ կը պաշտուի և կ'երկրպագուի :

Լ. Աւրեմն ի՞նչ կ'արդիւ է Բ. պատուիրանը :

Պ. Աստուած կարծուած կուոց չերկրպագել :

Լ. Արդեօք ասով սրբազան նկարները կ'ար  
գիլուին :

Պ. Սմենեին . և ասիկայ անկէ յայտնի է թէ  
Մովսէս որու տուաւ Աստուած կուոց արդեւման  
պատուիրան , միանգամայն պատուիրեց Աստուած  
վրանին հրէից շարժական տաճարին մէջ կանդ  
ներ Քերպլեից ոսկեղէն Ս. պատկերքը , բուն իսկ  
տաճարին ամենէն ներքին կողմը դէպ 'ի ուր ժո  
ղովորդը կը դառնար՝ Աստուծոյ երկրպագու  
թիւն մատուցանելու համար :

Լ. Ի՞նչ բանի համար ուշադրութեան արժա  
նի է այս օրինակը Քրիստոսի ուղղափառ եկե  
ղեցւոյն մէջ :

Պ. Որովհետև բացայայտ կերպով կը ներկայա  
ցնէ ուղղափառ եկեղեցւոյ մէջ Սրբոց պատկե  
րաց կիրառութեան ուղղութիւնը :

Լ. Ի՞նչ է պատկերը :

Պ. Պատկեր կ'անուանուի ուղղափառ եկեղեց  
ւոյ մէջ Աստուծոյ նուիրական նկարները , այսին  
քըն , Յիսուսի Քրիստոսի , որ երեւցած է մարմ  
նով , իւր ամենամաքուր Մօրը և իւր սրբոցը :

Լ. Արդեօք կը համաձայնի՞ Բ. պատուիրանաց



հետ Սրբոց պատկերաց կիրառութիւնը :

Պ. Երբէք չպիտի համաձայնէր, եթէ մէկը յանդգնէր պատկերներ աստուածայնելու, բայց բարբոսիւն ալ այն պատուէրին դէմ չէ գաննք իբրև սրբազան նկարներ պատուելը, որոնց կիրառութիւնն է ՚ի բարեպաշտ յիշատակ Աստուծոյ և անոր Սրբոց գործողը. այն կիրառութեամբ պատկերք անց իր գրքեր կը սեպուին. Տես Մեծն Գրիգորի Թ. գրքին Թ. նամակը առ եպիսկոպոսն Սէրէսի :

Լ. Պատկերաց երկրպագութիւն բրած ատեն նիս որպիսի՝ արամագրութիւն ունենալ կը պարտախմբ :

Պ. Զանոնք սեանողը կը պարտաւորի իւր միտքը ուղղել առ Աստուած և առ Սուրբս, որք նըկարեալ են անոնց վրայ :

Լ. Երկրորդ պատուիրանին զանցառութիւնը ընդհանրապէս ի՛նչ կ'անուանուի :

Պ. Կռայաշտութիւն կ'անուանուի :

Լ. Երկրորդ պատուիրանին դէմ արդեօք ուրիշ բան չկայ :

Պ. Անհեղեղ կռայաշտութեան զատ կան նաև ուրիշ նրբագոյն բաներ, որք են .

Ա. Ազահութիւն .

Բ. Որովայնապաշտութիւն, այսինքն որդրամուլութիւն և արբեցողութիւն .

Գ. Հպարտութիւն. որուն կը վերաբերի սնափառութիւն :

Լ. Ինչո՞ւ համար ազահութիւնը կռայաշտութեան կը վերժանի :

Պ. Անոր համար որ յայտնապէս կ'ըսէ Պօղոս առաքեալ Կողոսացուց գրած թղթոյն մէջ թէ՛

« . . . զազահութիւն՝ որ է կռայաշտութիւն » կող. Գլ. Ծ : Որովհետև ազահը առաւել հարբատութեան կը ծառայէ, բան թէ Աստուծոյ :

Լ. Երկրորդ պատուէրը շահասիրութիւնը արգելելով ի՛նչ կը սովորեցնէ :

Պ. Անընչութիւն և առատաձեռնութիւն :

Լ. Ինչո՞ւ համար սրկրամուլութիւնը կռայաշտութեան կը վերաբերի :

Պ. Որովհետև որովայնի ծառայողները ամեն բանէ աւելի նիւթական վայելքները կը սիրեն, որուն համար կ'ըսէ Առաքեալը . . . « որոց Աստուած որովայնն իսրեանց է » ուրիշ տեղ մ'ալ կ'ըսէ . « Կուգք նոցա որովայն է նոցա » . Փիլիպ. Գլ. 19 :

Լ. Երկրորդ պատուիրանը որովայնապաշտութիւնը արգելելով ի՛նչ կը սովորեցնէ :

Պ. Ժուժկալութիւն և ծովապահութիւն :

Լ. Ի՛նչ նկատմամբ հստատութիւնը և սնտափառութիւնը կռայաշտութեան կը վերաբերին :

Պ. Որովհետև հստատը ամեն բանէ աւելի իւր զօրութիւնը և իւր առանձնաշնորհութիւնը կը յարգէ, որք իրեն համար առաջին կուգք կը համարուին. սնտափառը կը բաղձայ որ ուրիշներն ալ յարգեն այս կուգքը . հպարտին և սնտափառին այս վիճակը զգալի կերպով երեւցաւ Բաբելոնի Նաբոսոյ գո սնտոր թագաւորին վրայ, որ իւր պատկերը կանգնել ստալով հրամայեց երկրպագութիւն ընելու անոր. Տես Դան. Գ .

Լ. Կռայաշտութեան մօտ ուրիշ մոլութիւն մ'ալ կրնայ գտնուիլ .

Պ. Այո՛, այն է կեղծաւորութիւնը, որ բարեպաշտութեան արտաքին գործքերով, այսինքն



Յոմսպահու թեամբ և ծէսերու մանրամասն պահ-  
պանույութեամբը ժողովրդեան ընդհանուր հա-  
մակրութիւնը կ'որսայ . ամենին հոգ չընելով իւր  
սրտին ներքին ուզութեանը . Տես Մատ. 9.  
3, 6, 7 :

Լ. Երկրորդ պատուիրանը , հպարտութիւնը ,  
անախառութիւնը և կեղծաւարութիւնը արդիւն-  
ւով անոնց դէմ ի՛նչ կը պատուիրէ մեզ :

Պ. Մեզ կը պատուիրէ հեղութիւն և դաղանի  
կերպով բարի դարձել :

ՅԱՂԱԳՍ Գ. ՊԱՏՈՒԹՅԱՆ

Լ. Ի՛նչ կերպով Աստուծոյ անունը ընդունայն  
կ'առնուի :

Պ. Երբ կ'արտաբերենք զայն անօգուտ և ու-  
նայն տեղը , նա մանաւանդ երբ կ'արտասանուի  
ստութեամբ և պէտք եղած բարեպաշտութեան  
ղանցառութեամբը :

Լ. Երրորդ պատուէրը ս'ը մեզ բերը կ'արդիւնէ :  
Պ. Ա. Հայհոյութիւն . կամ Աստուծոյ բանին  
դէմ եղած յանդգնութիւնը .

Բ. Աստուծոյ կամ նորա նախախնամութեան  
դէմ տրանջարը :

Գ. Ծաղրածութիւնը , երբ նուիրական բաները  
կը ծաղրուին և կը հայհոյուին :

Դ. Անուշագրութեամբ եղած արօթքը :

Ե. Երդմնազանցութիւնը , երբ ստութիւն մը  
երդմամբ կը հաստատուի :

Զ. Օրինազանցութիւնը , երբ ուրիշ տակ կ'առ-  
նուի արդար և օրինաւոր ուխտը :

Է. Առ Աստուած եղած խոստմանոց զոնցառու-

թիւնը :

Ը. Աստուծոյ անուան չարայար կիրառութիւնը  
այսինքն հասարակ խոսակցութեանց մէջ անտար-  
բեր կերպով երդման կիրառութիւնը :

Լ. Արդեօք այս մասին յատկացեալ արդելք մը  
կը պարունակէ՞ սուրբ Գիրքը :

Պ. Այո , ինչպէս որ մեր փրկիչը կ'ըսէ «Այլ ես  
ասեմ ձեզ , ամենին մի երդնուլ . այլ եղիցի ձեր  
բան այոն՝ այո , և ոչն՝ ոչ . զի՞ աւելին քան զայն  
'ի չարէն է » Մատ. Ե. 34, 37 :

Լ. Արդեօք հասարակ բաներու մէջ եղած ա-  
մեն տեսակ երդում կ'արգելուի՞ :

Պ. Ոչ , ինչպէս որ Պողոս անաբեալ կ'ըսէ .  
«Ապաքէն մարդիկ որ ինչ 'ի վեր է քան զինքեա-  
նըս՝ յայն երդնուն . և ամենայն հակառակութեան  
նոցա վճիռ 'ի հաստատութիւն երդումն է , որով  
առաւել ևս կամեցեալ Աստուծոյ՝ ցուցանել ժա-  
ռանգաւորաց աւետեայն զհաստատութիւն խոր-  
հրդոյն իւրոյ . միջնորդեաց երդմամբ » . Եբր. 9.  
16, 17 : Ասկէ կը հասկնամք թէ , քանի որ Աստ-  
ուած անփոփոխելի հաւատարմութեան համար  
երդում գործածեց , ուրեմն մեզի առաւել հրա-  
ման կը տրուի , եթէ անխուսափելի առիթներ  
մեզ պատահին ըստ պահանջման օրինաւոր իշ-  
խանութեան երդնուլ բարեպաշտութեամբ և հաս-  
տատուն մտօք ոտնակոխ չընել զայն :

ՅԱՂԱԳՍ Գ. ՊԱՏՈՒԹՅԱՆ

Լ. Ինչո՞ւ համար եօթներորդ , և ոչ թէ ո և  
իցէ ուրիշ օր Աստուծոյ նուիրում է :

Պ. Արդեօք ևս Աստուած վեց օրուան մէջ ըս-



տեղծեց զաշխարհ . իսկ եօթներորդ օրը դադարեցաւ զործեղէն :

Ը. Շարժ զօրուան տօնը կը կատարուի Գ. Գրիստոսի եկեղեցւոյն մէջ :

Պ. Իրբև նշանաւոր տօն մը չի կատարուիր , բայց ՚ի յիշատակ արարչադործութեան , այս օրը միւս օրերէն ծովնապահութեան բարձմանը կը զանազանի :

Ը. Արեմն ի նշպէս կը կատարուի Գ. պատուէրը Գրիստոսի եկեղեցւոյն մէջ :

Պ. կը կատարուի վեց օր անցնելէն ետքը եօթներորդ օրը և ոչ թէ եօթը աւուրց վերջին օրը , այսինքն շարժմը այլ ի թաքանչիւր եօթներկէն աւաջին օրը որ է յարութեան օրը :

Ը. Արշափ տօնէն ՚ի վեր յարութեան տօնը կամ կիրակին (Κυριακή) կը կատարուի :

Պ. Գրիստոսի յարութեան ժամանակէն ՚ի վեր :

Ը. կիրակի օրուան կատարման համար սուրբ զըբոց մէջ բառ մը կը դանուի :

Պ. Գործք աւաքեղցին մէջ կը նշանակուի աշակերտաց . այսինքն քրիստոնէից շարժմ աւուր ժողովը որն որ կը նշանակէ եօթներկէն աւաջին օրը , այսինքն կիրակին , վասն բեկանեղց հացին . այսինքն վասն կատարման հարորութեան . Գործք Ի. 7 : Յովհաննէս աւետարանչին Յայտնութեան դրքին մէջ ալ կը յիշուի կիրակին կամ յարութեան օրը . Յայտ. Ա. 10 :

Ը. եօթներորդ կամ շարժ օրէն զատ ուրիշ տօնելի օր կայ :

Պ. Ինչպէս որ հին օրինաց եկեղեցւոյն մէջ շարժմ անուան սակ կը համարուէին նաև ուրիշ տօնախմբելի կամ պահոց օրերը , այսինքն Պատկ.

քը և սրբացման օրը . նմանապէս Գրիստոսի եկեղեցւոյն մէջ ալ , բաց ՚ի կիրակիէն պէտք է պահել ուրիշ տօնախմբան օրերն ալ ի փառս Աստուծոյ և ՚ի պատիւ ամենատուրը Աստուածամանայ և այլ Արբոյ սահմանեալ տօները և պահքերը : Տես Ազգափառ Խոտա . Մասն Գ. Հարց . 60 . և Մասն Ա. Հարց . 88 :

Ը. Արմ.ք են նշանաւոր տօները :

Պ. Անտ.ք . սր.ք հաստատուեցան ՚ի յիշատակ մարդկային սիրկութեան համար Աստուածորդւոյն պատահած նշանաւոր իրողութեանց և աստուածային յայտնութեանց և երկրորդ արար ՚ի պատիւ ամենատուրը Աստուածամանայ տօնախմբութեան , իրբև ծառայած մարմնաւոր անօրէնութեան խորհրդոյն մէջ և ահաւասիկ ըստ կարգին և ըստ ժամանակագրութեան աստ.ք են :

Ա. Ծնունդ ամենատուրը Աստուածամանայ (Γέννησις τῆς ὑπεραγίας Θεοτόκου) .

Բ. Ընծայումն ՚ի տաճարի (Εισόδια)

Գ. Աւետումն (Ευαγγελισμός) ամենաւարուրկումն , ուրիշ մարմին աւաւ Աստուածորդին .

Դ. Ծնունդ (Γέννησις) Յիսուսի Գրիստոսի :

Ե. Մկրտութիւն (Βάπτισις) Յիսուսի Գրիստոսի և ասոր հետ մէկանց աստուածայայտնութիւն . (Θεοφάνεια) .

Զ. Տեսանլնդաւաջ . (Υπαπαντή)

Է. Գրիստոսի այլակերպութիւնը (Μεταμόρφωσις)

Ը. Գալուստ Տեսանլնդաւաջ .

Թ. Սուրբ Զատիկը (Πάσχα) կամ Գրիստոսի Յարութեան տօնը , տօնից տօն նախերգանք յաւիտեանական տօնախմբութեան անվախճան երանութեանը :



Ճ. Քրիստոսի համարձուճք. (Ανάληψις)

ՃԱ. Պէնտէկոստէ (Πεντηκοστή) 'ի յիշատակ իջման  
Հոգւոյն սրբոյ և 'ի փառս ամենասուրբ երրոր-  
դու թեան :

ՃԲ. Վերացումն խաչին (Ἐψωσις) ի ձեռն Հեղի-  
նէ թագուհւոյն .

ՃԳ. Վերափոխումն (Κολησις) ամենասուրբ Աստ-  
ուածածնայ :

Հ. Արն է նշանաորագոյն պահքը :

Պ. Սուրբ Բառասնորեայ պահքը .

Հ. Ինչո՞ւ համար Բառասնորեայ կը կոչուի :

Պ. Արտհետե քառասուն օր կը տևէ բաց 'ի  
չարչարանայ եօթնեկէն :

Հ. Ինչո՞ւ համար այս պահքը քառասուն օր  
ասհմանուած է :

Պ. Ըստ օրինակի Յիսուսի Քրիստոսի, որ քա-  
ռասուն օր ծո՞մ պահեց : Մատթ. ԳԼ. Գ. Հ. 2 :

Հ. Ինչո՞ւ համար չորեքշաբթին և ուրբաթը կը  
պահուի :

Պ. Չորեքշաբթին 'ի յիշատակ մատու թեան 'ի  
չարչարանս Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և  
ուրբաթը 'ի յիշատակ իւր չարչարանայ և մահ-  
ուանը :

Հ. Ինչո՞ւ համար Առաքելոց, Վերափոխման  
Իննգոց պահքերը գրուեցան :

Պ. Առաջին երկուքը հաստատուեցան որպէս  
գի ժուժկալութեան ճո՞նտ թեամբը կանխաւ յար-  
գենք Աստուածածնայ մահուան և Քրիստոսի ծը-  
նըդեան տօները . իսկ վերջինը նոյն պատճառաւ  
Առաքելոց նմանելու համար, որոնք ծո՞մ կը բռ-  
նէին Սուրբ Աւետարանին քարոզութեանը պա-  
լաստուելու ատեն . Գործ . Առաք . ՃԳ. 3 :

Հ. Ի՞նչպէս պէտք է տօնից օրերը ըստ պա-  
ուիրանին կատարել :

Պ. Պէտք չէ այս օրերուն մէջ ոչ աշխատիլ և  
ոչ ալ աշխարհային գործոց զբաղիլ . Բ. պէտք է  
զանոնք սրբութեամբ պահել, այսինքն այն օրե-  
րը 'ի փառս Աստուծոյ սուրբ և հոգևոր գործե-  
լու վանել :

Հ. Ինչո՞ւ համար այս օրերուն մէջ աշխատու-  
թիւնը կ'արգիլուի :

Պ. Արպէս զի զայն առանց արդելքի սուրբ և  
նուիրական գործոց նուիրենք :

Հ. Բացառիւ ինձ թէ ի՞նչ պէտք է տօն օրը  
գործել :

Պ. Ա. Եկեղեցւոյ մէջ ժողովուիլ հասարակաց  
պաշտաման և աստուածային փառարանութեանց  
համար : Բ. Նմանապէս տանը մէջ ալ աղօթից,  
կարդալու և կամ հոգևոր խօսքերու պարապիլ :  
Գ. Մեր ստացածոց մէկ մասը Աստուծոյ նուի-  
րել, վասնելով զանոնք եկեղեցւոյ պիտայիցը և  
նորա սպասուորոց և աղքատաց բարեգործու-  
թեան, և յիշել հիւանդները, բանտարկեալները  
նոյնպէս և քրիստոնէական սիրոյ ուրիշ գործ-  
քերը :

Հ. Արդեօք ամեն օր կրնա՞նք սյուսիսի բարե-  
գործութիւններ ընել :

Պ. Օրհնեալ են սյուսիսի բարեգործութիւններ  
ընել կրցողները, այլ գործով զբաղեալը գոնէ կը  
պարտաւորի տօն օրերը սրբել վերոյիշեալ կեր-  
պով . աղօթիլ ամեն առաօտ և երեկոյ ճաշէն  
և ընթրիքէն առաջ և վերջը, և կորեկի եղածին  
չափ ամեն գործոց սկիզբն և վերջը :

Հ. Ի՞նչ կարծիք ունենալու է սյնպիսեաց վը-



րայ, որոնք տօնից օրերը անհամեստ խաղեր, թատրոններ, և անպարկեշտ երգեր երգելով ինքզինքնին կերտ խուճի կուտան :

Պ. Այսպիսիները խիստ շատ գէժ կը դորձեն տօնից օրրութեանը . քանի որ չեն ներու իր սոժա մանակեայ կենաց օգտակար եղող գործքերը, որչափ արդեօք աններելի են մարմնական անպիտան և նախատալից գործքերը :

Լ. Չորրորդ պատուիրանը վեց օրուան աշխատութիւն պատուիրելով կը դատապարտէ արդեօք անգործութեան մէջ գտնուող մարդիկը :

Պ. Անտարակոյս կը դատապարտէ այնպիսիները որոնք պարապոյ օրերը չեն զբաղիր իրենց կոչման գործոյը, այլ իրենց ժամանակը անպործութեամբ և չապշուրթեամբ կը վատնեն :

ՅԱՂԱԳՍ Ե. ՊԱՏՈՒԻՐԱՆԻՆ

Լ. Գլխաւորաբար ի՞նչ կը պատուիրէ հինգերորդ պատուէրը ծնողաց և զանոնք պատուելու նկատմամբ :

Պ. Խոնարհութեամբ վարուիլ անոնց հետ : Բ. Հպատակիլ անոնց : Գ. Զանոնք սնուցանել և հանգստացունել իրենց հիւանդութեան և ծերութեան ատեն : Դ. Անոնց մահուանէն վերջը ինչպէս նաև կենդանութեան ատեննին իրենց հոգոյն փրկութեանը համար աղօթել և հաւատարմաբար անոնց կտակները կատարել, որք ոչ աստուածային և ոչ ալ քաղաքական օրինաց կը հակառակին . Տես Մակար . Բ. Գիրք ԺԲ. 43, 44 : Երեմ. ԼԻ. 18, 19 : Յովհան Դամաս . ճառ յաղաղըս ննջեցելոց :

Լ. Ի՞նչպէս պէտք է դատողութիւն ընել առ ծնողս եղած մեղաց ծանրութեան վրայ :

Պ. Արշափ դիւրին և բնական են սիրել և յարգել զծնողս, որոնց մեր կեանքը կը պարտիւր, նոյնպէս ընդ հակառակը ծանր մեղք է անոնց դէմ հակառակիր, ասոր համար էր որ մովսիսական օրինաց մէջ հօր կամ մօր դէմ չարախօսողն իմաս կը դատապարտուէր, Ելից . ԽԼ. 15 :

Լ. Ինչո՞ւ համար ի վերայ ծնողաց եղած պատուիրանն մէջ ի մասնաւորի անոր վրայ կը կայանան բարօրութեան և երկայնակեցութեան խոստումը :

Պ. Արպէս զի յայտնի վարձատրութեան հաստատմամբ մարդիկ փութան ի պահպանութիւն այսպիսի պատուիրանի մը, որուն վրայ էր հիմնուի, նախ առանին բարեկարգութիւնը և երկրորդ՝ ընկերական կեանքը :

Լ. Ի՞նչպէս կը կատարուի այս խոստումը :

Պ. Նահապետաց և նախահարց օրինակները կ'ապացուցանեն որ Աստուած զօրութիւն տուած է մասնաւորապէս ծնողաց օրհնութեանցը . Մտուել ի՛նչ «Օրհնութիւն հօր հաստատէ զտունս որդեկաց» . Իմաստ, Սիր . Գ. 9 : Աստուած իմաստութեամբ և արդարութեամբ նախախնամելով կը պահպանէ զկեանս, և կը անօրինէ զբարեբաղ դուժիւն անոնց՝ որք յարգեն իրենց ծնողն երկրի վրայ, միանդ ամայն կատարելապէս կը վարձատրէ զառաքինութիւն, շնորհելով ամահ և երանեալ կեանք այնպիսեաց յերկնաւ որ հայրենիս :

Լ. Ինչո՞ւ համար սիրոյ վրայ եղած պատուէրները նախ զծնողս կը յիշեցնեն :

Պ. Արովհետև ծնողք բնականաբար մեղ ամէ



նէն մերձաւորացոյն են :

Լ. Արդեօք յանուն ծնողաց եղած հինգերորդ պատուիրանին տակ ուրիշներու ալ կ'իմացուին :

Պ. Ամեն անոնք որ գանազան կերպով ծնողաց տեղ կր բռնեն, պէտք է շանոնք իբրև ծնողք ըմբռնենք :

Լ. Արո՞նք են նոյն տեղերը բռնողները :

Պ. Ա. Թագաւորը և հայրենիքը. ըստ որում թագաւորու թիւնը մեծ դերդաստան մ'է, որուն հայրը թագաւորն է, իսկ որդիքը հպատակներն են :

Բ. Հովիւք և հողեոր ուսուցիչք. ըստ որում անոնք իրենց վարդապետութիւններովը զմեզ 'ի հողեոր կեանս կր ծնին :

Գ. Հասակով ծերագոյնները .

Դ. Բարերարք .

Ե. Անոնք, որ զանազան կերպով կառավարելու իշխանութիւն ունին :

Լ. Ի՞նչ կըսէ Սուրբ Գիրք թագաւորին պարտաւորեալ յարգանաց նկատմամբ :

Պ. « Ամենայն անձն որ ընդ իշխանութեամբ է, ի հնազանդութեան կայցէ »: Ա. Ղուկ. ԺԳ. 1, 2 : « Տուք զկայսերն՝ կայսեր, և զԱստուծոյն՝ Աստուծոյ » Մատթ. ԻԲ. 21 : Քանզի ոչ ուստեք է իշխանութիւն, եթէ ոչ յԱստուծոյ. և որ էնն, յԱստուծոյ կարգեալ են : Այսուհետև որ հակառակ կայ իշխանութեան՝ Աստուծոյ հրամանին հակառակ կայ . . . » : « Վասն որոյ հարկ է հընազանդ լինել, ոչ միայն վասն բարկութեան այլ և վասն խղճի մտացն » : Ծ Երկիր յԱստուծոյ, որդեանկ, և 'ի թագաւորէ. և 'ի միջէ 'ի նոցանէ մի ապստամբիցես » : Առակք ԻԳ. 21 : « Եր-

կերուք, յԱստուծոյ, և յարդեցէք զարքայս » : Պետր. Ա. Գլ. Բ. Հմբ. 17 :

Լ. Մինչև ո՞ր պէտք է տարածել առ թագաւորս և առ հայրենիս եղած սէրը :

Պ. Մինչև անգամ մեր կեանքը անոնց նուիրել Տես. Յովհ. ԺԵ. 13 :

Լ. Ի՞նչպէս կ'ըսէ Ս. Գիրք հողեոր հովուաց և վարդապետաց արժան եղած յարգանաց նկատմամբ :

Պ. « Աւեկնդիր լերուք առաջնորդաց ձերոց և հստակ կացէք նոցա. զի նոքա տքնին վասն որդւոց ձերոց, որպէս թէ համարս տալոց են ընդ ձեր. զի խնդութեամբ արասցեն զայն՝ և մի յողւոց հանելով. զի այն ոչ յողուա ձեր է. » Երբ. ԺԳ. 17 :

Լ. Արդեօք կը գանուի՞ Սուրբ Գրոց մէջ մասնաւոր պատուէր մը երկցագոյնները իբրև ծնողք յարգելու :

Պ. Պօղոս Առաքեալ այսպէս կը գրէ առ Տիմոթէոս. « Զմերն մի պատու հասնիցես, այլ միութարեսլիր իբրև զհայր. զերիասարգս՝ իբրև զեղբարս. զպառաւունս՝ իբրև զմարս. » Ս. Տիմ. Ե. 1, 2 : « Առաջի արեաց յառնիցես, և պատուեսցես զերեսս ծերոյն : Եւ երկնչիցիս յԱստուծոյ քումնէ » : Ղերու. Գլ. ԺԹ. Հմբ. 32 :

Լ. Ի՞նչպէս հաւատի կ'ըլլամք թէ բարերարները պէտք են իբրև ծնողք յարգուիլ :

Պ. Նոյն իսկ Յիսուսի ֆրիստոսի օրինակաւը, որ Յովսէփայ հնազանդ էր թէպէտ և իւր ծնողքը չէր, այլ լոկ ինամակալը. Տես. Ղուկ. Բ. 51 :

Լ. Արո՞նք են մեր ծնողքէն վերջը անոնց չափ յարգուելու արժանի անձինք :



Պ. Անտնք՝ որք ծնողաց տեղ հող կը տանին մեռ դաստիարակութեանը, այսինքն՝ ուսուցչք ու դաստիարակք. նաև անտնք՝ որք բնկերակցութեան մէջ զմեզ անկարգութեանէ և խռովութեանէ ազատ կը պահեն. այսինքն՝ քնդաքական իշխանք. նաև անտնք՝ որք զմեզ կը պաշտպանեն օրինաց զօրութեամբը. այսինքն՝ գատաւորք, նաև անտնք՝ որք յանձն առած են թաղաւորէն հասարակաց անդ որբութեան պահպանութիւնը ընդ դէմ արտաքին թշնամեաց, այսինքն՝ զօրապետք. վերջապէս այն ամենաբնորոշ օրոնք, յարաբերութիւն ունին իրենց իշխանութեան ասկէ ցոյց տրուելուն հետ:

Ինչ կը պատուիրէ Սուրբ Գիրք ընդ հանրապէս առ իշխանս եղած պարտաւորութեանց վրայ:

Պ. «Արդ՝ հատուցէք ամենեցուն զպարտս, որում զհարկ՝ զհարկն, որում զմաքս՝ զմաքսն, որում զերկիրդ՝ զերկիրդն, որում զպատիւ՝ զպատիւն.» Նոովմ. Ս. Գ. 7:

Ը. Ինչ կ'ըսէ Սուրբ Գիրք հարտակաց և ծառայից իրենց տեարց նկատմամբ ունեցած հնազանդութեան վրայօք:

Պ. «Ծառայք՝ հնազանդ լերտք տերանց ձերոց մարմնաւորաց,» Եփես. Զ. 3, 6: Ահիւ և դոպոս թեամբ և միամտութեամբ սրտից ձերոց՝ որպէս և Քրիստոսի: Մի առ ահանէ ծառայել իրերէ մարդահանոցք, այլ իրրե ծառայք Քրիստոսի առնել զկամս Աստուծոյ: «Ծառայք հնազանդ իրենէլ շտանային երկիրդ տիրանց, ոչ միայն իրարարացն և սիրողացն՝ այլ և կամակորացն» Եփես. Պետր. Ա. Գլ. Բ. Հիւր. 18:

Ը. Քանի որ Ս. Գիրքը կը հրամայէ առ ծնողս եղած պարտաւորութիւննիս, արդևօք կը սահմանէ՞ նաև առ որդիս եղած պարտաւորութիւնը:

Պ. Այո՛, կը սահմանէ ըստ վիճակի ծնողաց. «Հայրք, մի զայրացուցանէք զորդիս ձեր, այլ անուցանի՛ք զնոսա խրատու և ուսմամբ Տեառն.» Եփես. Զ. 4:

Ինչ կ'ըսէ Ս. Գիրք հովուաց առ հօգևոր հօտն ունեցած պարտաւորութեանը վրայով:

Պ. Արածեցէք որ ՚ի ձեզ հօտք է Աստուծոյ. վերակացու լինել՝ մի իրրե ահամայ, այլ կամաւ ըստ Աստուծոյ. մի զօշաքաղու թեամբ այլ յօժարութեամբ. մի իրրե տիրելով վիճակացն, այլ լինել օրինակ հօտին.» Ա. Պետ. Ե. 2, 3:

Ինչ կ'ըսէ Ս. Գիրք իշխանաց և տեարց պարտականութեանը վրայով:

Պ. «Տեարք. զիրաւունս և զհաւասարութիւն ծառայից ձերոց շնորհեցէք. զխտաշիք զի և ձեր Տէր գոյ յերկինս.» Կող. Դ. 1:

Ինչ ընելու է թէ որ մեր ծնողքները կամ մեր իշխանները հաւատքի և Աստուծոյ օրինաց հակառակ մեզմէ բան մը պահանջեն:

Պ. Ասանկներուն պարտիւք ըսել ինչ որ ըսին Առաքեալք Հրէից իշխաններուն. «Լի՛թէ արժան իցէ առաջի Աստուծոյ՝ ձեզ լսել առաւել քան Աստուծոյ, ընտրեցէք. այլ մեք ոչ կարեմք զոր տեսաքն և լուաք՝ չխօսել.» Գործ. Դ. 19: Եւ այն ատեն պէտք է հաւատոյ և աստուածային օրինաց պահպանութեանը համար տանիլ ինչ որ մեզի պատահի:

Ընդհանրապէս ի՞նչպէս կ'անուանուի այն ձիրքը կամ առաքիլնութիւնը, զոր մեզմէ կը պա-



հանջէ Ե. պատուիրանը :

Պ. Հնազանդութիւն կ'անուանուի :

ՅԱՂԱՅՍ Զ. ՊԱՏՈՒԻՐԱՆԻՆ

Հ. Զ. Պատու էրն ի՞նչ կ'արդ իլէ :

Պ. Մարդասպանութիւնը կամ որ և է եղանակաւ իւր ըն՛ երին կենաց բարձումը :

Հ. Արդեօք ամեն տեսակ կենաց բարձումը ապօրինաւոր սպանում են :

Պ. Ապօրինաւոր սպանում եղած չըլլար եթէ մէկու մը կեանքը ըստ պարտուց բարձուի . այսինքն՝ Ա. եթէ մահուամբ պատժուի ոճրագործ մը ըստ արդար դատաստանի . Բ. եթէ թշնամին պատերազմի մէջ սպաննուի ի պաշտպանութիւն հայրենեաց :

Հ. Ի՞նչ պէտք է կարծել ակամայ եղած մարդասպանութեան վրայ . այսինքն երբ մէկը ստաց յառաջմանէ իւր գիտաւորութեան մէջ դնելու տրիշ մը կ'սպաննէ :

Պ. Ակամայ մարդասպան մը անմեղ չը կրնար համարուիլ . որովհետեւ այնպիսն չէ զգուշացած անակնկալ մահ պատճառող վտանգաց սռաջքն առնելու և այնպիսին ըստ հրամանի եկեղեցւոյն խղճմանաց մարդութեան պէտք ունի :

Հ. Որո՞նք են ապօրինաւոր մարդասպանութեան կարգն անցնող մեղքերը :

Պ. Որ և է գէ՛ւքով անմիջական սպանումէն դատ՝ այս դասակարգութեան կր վերաբերին հետեւեալ դիպուածներն և անոնց նմաններն . Ա. երբոր դատաւորը դատի տակ եղողը կը դատապարտէ մինչդեռ անոր անմեղութիւնը ծանօթ

է իրեն . Բ. երբոր մէկը կը պահէ կամ կ'ողտտէ սպանիչն , և սոսի՛ անոր նոր սպանմանց առ թկուայ . Գ. երբ մէկը իր ընկերը մահուանէ փրկել կրնալով չի փրկէր զայն . նոյնպէս և հարուստ մը երբ աղքատ մը անօթութենէ մեռնելու համար երեսի վրայ կը թողու զայն . Դ. երբ մէկը իր ծառաները կը ճնշէ անոնց կարողութենէն վեր ծանր պարտաւորութիւններ վրանին դնելով , և անոնց հետ ծայրայեղ խտութեամբ վարուելով , որով և անոնց մահը կը փութացնէ . Ե. երբ մէկը անժամ ժկալութեամբ , կամ ուրիշ զղուելի բաներով իւր կեանքը կ'ընդմիջէ :

Հ. Ի՞նչ դատաւորութիւն պէտք է ընել անձնասպանութեան վրայ :

Պ. Մարդասպանութեանց ամենէն չարագոյնն է այս . որովհետեւ եթէ բնութեան դէմ է մեզ նման ուրիշ մարդ մը սպաննելը՝ առաւել ևս բնութեան դէմ է՝ ինքզինքն սպաննելը . քանզի մեր կեանքը մեր ստացուած քը չէ , այլ Աստուծոյ , որ զայն պարգևած է մեզ :

Հ. Ի՞նչ կարծիք ունենալու է մենամարտութեանց վրայօք , սրնք տեղի կ'առնենան անձնական կռիւներու լուծման համար :

Պ. Որովհետեւ անձնական կռիւներու լուծումը կառավարութեան դործն է , և մենամարտողը կը յանդգնի թէ իրեն և թէ՛ ախոյեանին կանխահատ մահ գործել , ասոնցմէ կը հետևի թէ՛ մեռաւարտութիւնը երեք քստմնելի մեղքեր կը պարունակէ . ապստամբութիւն ընդդէմ՝ կառավարութեան , սպանումն և անձնասպանութիւն :

Հ. Մարմնական սպանումէ՛ զատ արդեօք հոգեւոր սպանում ալ կայ :



Պ. Հոգևոր սպանման մէկ տեսակն է գայ. թժական թիւնը, երբ մէկը իւր բնկերը յանհաւատութիւն կամ յորինագանցութիւն կը գրդէ, և այսպէս անոր հոգին հոգևոր մահուան կը մատնէ: Մեր ֆրկիչը կ'ըսէ. «Եւ որ ոք գայթակցեցուցէ զմի 'ի փոքրկանցս յայսցանէ յիս հաւատացելոյ, լաւ է նմա՝ եթէ կախիցի երկան իշոյ բնդ պարանոց նորա՝ և ընկղմիցի 'ի խորս ծովու» Մատթ. ժԼ. 6:

Հ. Որդեօք չկամն սպանման ուրիշ ներագոյն տեսակներ:

Պ. Այս մեղքին կը վերաբերին մինչև անգամ այն մեղքերը ու խօսքերը՝ որք սիրոյ կը հակառակին, և անիրաւ արար ընկերին ապահովութիւնը ու հանցատու թիւնը կը խռովեն և վերջապէս մէկու մը գէմ եղած ի խորոց արտէ ատելութիւնը, թէ և ծածկուկ մնայած ըլլայ. «Ամենայն որ ատեայ զեղբայր իւր՝ մարդասպան է» Ա. Յովհ. Գ. 15:

Հ. Թէ որ ընկերին կենաց վնասելը արգելուած է անոր հակառակը ի՞նչ հրամայուած է:

Պ. Խնայելը, որչափ որ կարելի է ընկերին կենացն ու երջանկութեանը:

Հ. Ասկէ յառաջ եկած պարտաւորութիւնները որո՞նք են:

Պ. Ա. օգնել աղքատաց. Բ. ծառայել հիւանդաց. Գ. սղաւորը մխիթարել, թշուառաց կարեկից ըլլալ. Դ. ամենուն հետ սիրով և հեղութեամբ վարուիլ ի շինութիւն. Ե. մեզմէ զայլացողներուն հետ դիւրաւ հաշտուիլ. Զ. անիրաւաց ներել և թշնամեաց բարեք գործել:

ՅԱՂԱԳՍ Է. ՊՍՏՈՒԻՐԱՆԻՆ

Հ. Եթ՛մներորդ պատուիրանը ի՞նչ բան կարդելու:

Պ. Պանկոստեանը:

Հ. Ո՞ր տեսակ մեղքերը կ'արգիլուին պողոնք կուժեան անուամբ:

Պ. Պողոս առաքեալը կը խրատէ զքրիստոնէսայ՝ մինչև անգամ չխօսիլ այսպիսի զգուելի իրաց վրայ. (Տե՛ս. Եփես. Ե. 3:) Բայց ի հարկէ և այսպիսի մեղաց նախադուշութեան համար պէտք է նոցա մի քանին հոս անուանել: Որք են 1. Պանկոստեան, այսինքն մարմնաւոր անկարգ տուփանք առ ամուրիս. 2. Ենկոստեան, երբ ամուսնացեալք ապօրինաւ որապէս ուրիշ առարկաներու կը փոխարկեն հարսանեկան սէրը. 3. Աբնախառնութեան, երբ մերձաւոր ազգականք հարսանեկան կապ կը հաստատեն ի միմեանս:

Հ. Ի՞նչ կը վարդապետէ Քրիստոս պողոնք կուժեան վրայ:

Պ. Ինքն ըսաւ. «Ամենայն որ հոյի 'ի կին մարդ առ 'ի ցանկանալոյ նմա՝ անգէն շնացաւ 'ի սրտի իւրում»:» (Մատթ. Ե. 28)

Հ. Ի՞նչ դիտելու արժանի բան կայ այս ներքին ու նուրբ շնութեանէն զերժ մնալու համար:

Պ. Պէտք է փախչիլ այն ամեն առարկայներէ՝ որք սրտի մէջ զգուելի ախորժակներ կը յարուցանեն, այսինքն, հեշտակոն երգերէ, պարերէ, չար խորհորդներէ, անվայել տեսարաններէ, անհամեսախաղերէ և խաղալիքներէ, և այնպիսի զգրքեր կարգապէս, որոց մէջ սքզգալի սէք



կը նկարագրի : Ըստ Աւետարանին պէտք է ջանալ շտեմանել միանգամայն գայթակղութեան պատճառներն : « Եթէ ակն թո գայթակղեցուցանէ զքեզ , խլեան զնա և ընկեան 'ի քէն . զի լաւ է քեզ եթէ մի յանգամայն քոյ կորիցէ , և մի ամենայն մարմին քո անկանխի 'ի գեհէն . » Մատթ . Ե . 29 )

Ը . Արդեօք իրապէ՞ս զմեզ գայթագղեցունող աչքը խլել կը հրամայէ :

Պ . Պէտք է խլել , բայց ոչ ձեռամբ այլ կամօք . քանզի հաստատ վճիռն ընողը արդէն խլած է գայթակղեցուցիչ աչքը :

Ը . Եթէ արդիւրեւ է պոռնկութեան մեղքը , որք են ուրեմն նորա զէմ' սահմանուած առաքիւտ թիւներն :

Պ . Ամուսնական սէրն ու հաւատարմութիւնը . իսկ տանելու կարող անձանց համար կատարեալ ողջխտհոյթիւն և զղաստութիւն :

Ը . Ի՞նչպէս կը խօսի Ս . Գիրք արանց և կանանց պարտուց վրայ :

Պ . « Արք սիրեցէք զկանայս ձեր , որպէս Քրիստոս սիրեաց զեկեղեցի և մասնեաց զանձն իւր վանն նորա . » Եփես . Ե . 23 : « Կանայք իւրեանց արանց հնազանդ լիցին իբրև Տեառն . զի այր է գլուխ կեանք և որպէս Քրիստոս գլուխ է եկեղեցւոյ և ինքն է վերկիչ մարմնոյ . » Անդ . 22, 23 :

Ը . Ի՞նչ յորդորանքներ կան Ս . Գրոց մէջ պոռնկութենէ փախչելու և համեստութեամբ աւրելու համար :

Պ . Ս . Գիրք կը պատուիրէ մարմինը ողջխտհոյթիւն մէջ պահելու . որովհետև նա Քրիստոսի անդամն ու Ս . Հոգւոյ տաճարն է . իսկ

պոռնիկը կը մեղանչէ նոյն իսկ իւր մարմնոյն գէմ' այսինքն , կ'ապականէ և կ'եղծէ զայն զանազան կրքերով . քնասելով միանգամայն հոգևոր կարողութիւններն , այսինքն երեւակոյցութիւնն ու յիշողութիւնը . (Տես Ա . Կորն . 2 . 13, 18, 19 : )

ՅԱՂԱՌՍ Ը . ՊՍՏՈՒԻԹԱՆԻՆ

Ը . Ընդհանրապէս ի՞նչ բան կ'արդելու Ը . պատուիրանք .

Պ . Գողթնէն , այսինքն որ և է կերպիւ իւրացուցում այլոց վերաբերածներն :

Ը . Մասնաւորապէս ի՞նչ տեսակ մեղքեր կ'արդիլուին այս պատուիրանա :

Պ . Գլխաւորներն ասոնք են . 1 . Աստուծոյն , այսինքն յայտ յանդիման և բռնի յափշտակութիւն օտարին ընչից : 2 . Գողթնէն , այսինքն նենդութեամբ յափշտակութիւն օտարին ընչից . 3 . Խաբէնէն , այսինքն նենդութեամբ իւրացումն այլոց իրաց . զորօրինակ՝ նենդեալ գրամ' տալ այլոց փոխանակ հարազատի . գէշ բան մը փոխանակ աղէկի վարել . սուտ կշիռով պակաս տալ կամ երբ մէկը կը ծածկէ իր ունեցածը , պարտքը վճարելու համար . կամ դաշնագրութիւններն և կտակներն զանց ընել , և ով որ կը թաքուցանէ զողը՝ կը գրկէ անիրաւոյը հատուցումէ : 4 . Աստուծոյն , այսինքն իւրացումն Աստուծոյ նուիրելոց կամ եկեղեցւոյ վերաբերողաց . 5 . Հոգևոր սեղանապարտութիւն , երբ ոմանք ոչ ըստ արժանւոյն , այլ շահախնդրութեամբ առատաբար կը պարգեւեն սրբազան աստիճաններն . 6 . Կաշառնէն , երբ մարդիկ մէկ մէկէ կամ ամբաստ



տանեալներէն պարգեւ կ'առնուն, և շահա-  
խընդոր թեամբ յառաջ կը տանին անարժանե-  
րըն, կ'արգարայնեն յանցաւորներն, կը դատա-  
պարտեն անմեղներն. 7. Թռչի, երբ մէկը ձեռա-  
գործութեանն համար թողակ կամ ուժիկ կ'ըն-  
դունի պաշտօնով. և որ ոչ պաշտօնը կը վարէ և  
ոչ գործը կը կատարէ, և այս կերպով կը գողա-  
նայ թէ ուժիկը թէ վարձքը և թէ աշխատան-  
քէն ծագելիք շահը: Նմանապէս երբ կարող է  
մէկը աշխատութեամբ և քրտամբ ապրիլ, և մու-  
րացկանութեամբ կ'ապրի. 8. Առջիկա՝ սոսիս-  
երբ ոմանք արդարութեան պատրուակաւ, բայց  
ստուգապէս ամեն անդարութիւն և մարդասի-  
բութիւն սոնակոխ ընելով կը իւրացնեն այլոց ըս-  
տայուածքը, կամ աշխատութիւններն, և կամ  
օգուտ կը քաղեն դրացոյն արկածներէն. զոր  
օրինակ երբ փոխատուներն կը բեռնաւորեն պար-  
տապաններն չափազանց ստիպեօք և կալուածա-  
տէրերն գործաւորաց հետ բռնութեամբ փարուե-  
լով պահակի (անպէտ) կը բռնեն, և վերջապէս  
սովի ժամանակ ունեցած ցորեննին ծանր գնով  
կը ծախեն:

Լ. Այս արդիւլուած մեղաց փոխարէն ի՞նչ ա-  
ռաքիտութիւններ կը սահմանուին:

Պ. 1. Անշահատիրութիւն, 2. Անյողողղ 'ի խոսա-  
մունս, 3. Իրաւադատութիւն, 4. գութ առ ազ-  
քասա:

Լ. Աղքատաց գէմ անդ թութեամբ վարուողն  
Ը. պատուիրանին գէմ չը մեղանչէր:

Պ. կը մեղանչէ, եթէ անոնց օգնելու միջոց  
ունի ու չընէր. փասն զի մեր բոլոր բաներն Աս-  
տուծոյ կը պատկանին և մեր բոլոր աւերորդ բա-

ներն աստուածային նախախնամութենէն կը պար-  
գեւին 'ի նպատ կարօտելոյ. ուստի երբ մենք  
աւերցածներէն աղքատաց բոժին չը հանենք,  
Աստուծոյ պարգեւն յափշտակած և ծածկած  
կ'ըլլանք:

Լ. Արգեօք կայ վերնագոյն առաքինութիւն մը  
որ բողոքովն հակառակ ըլլայ Ը. պատուիրանին  
մէջ արդիւլուոյ մեղաց:

Պ. Այսպիսի առաքինութիւն մը կը յիշուի  
Ա. ետարանին մէջ բայց ոչ իբրև ընդհանուր պար-  
տաւորութիւն, այլ իբր իրաւաբարեպաշտութիւն  
խնդրուոյ, այն է կատարեալ աննշուօթիւն, այ-  
սինքն կամաւոր աղքատութիւն, « եթէ կամիս  
կատարեալ լինիլ, երթ' վաճառեա գինչս քո՝ և  
տուր աղքատաց, և ունիցիս գանձս յերկինս »:  
Մատթ. 9. Ժ. Ժ. Ժ. 21:

ՅԱՂԱԳՈ Թ. ՊԱՏՈՒԻՐԱՆԻՆ

Լ. Ի՞նչերորդ պատուիրանը ի՞նչ կ'արգելու:

Պ. Սուտ վկայութիւն ընդդէմ ընկերին, և որ  
և իյէ ստախօսութիւն:

Լ. Սուտ վկայութեան անուամբ ի՞նչ կ'արգիլ-  
ուի:

Պ. 1. Դատաստաններու մէջ եղած սուտ վկա-  
յութիւնը. այսինքն՝ եթէ մէկը դատաւորաց առ-  
ջեւ զուր տեղը կը գանգաւոր կամ կը զրպարտէ  
զայս. 2. դատաստանէն դուրս եղած սուտ վը-  
կայութիւնն, այսինքն՝ երբ մէկը բացակայ ըն-  
կերը կը բամբասէ սուտ տեղը:

Լ. Արգեօք ներելի է բամբասանաց արժանի  
եղող անձ մը յանդիմանելն:



Պ. Աւետարանը չը ներէր՝ ընկերին չար դոր-  
ծոցը կամ պակասութեանց վրոյց դատաստան ը-  
նել, քանիցս պարտքը չի ստիպեր զանոնք յան-  
դիմանելու : « Մի գատէք զի մի գատիցիք » .  
Մատթ. Է. Ա. :

Լ. Արդ եօք ընկերին մնաս չը հասցնելու նպա-  
տակաւ ելլած սուան ալ կ'արդ իլուի՞ :

Պ. Կ'արդ իլուի . որովհետեւ այս տեսակ ստու-  
թիւնն ալ ընկերին սիրոյն ու յարգանաց գէմ կը  
գործէ, և մարդոց համար անխոյել, նա մանա-  
ւանդ քրիստոնէիկն՝ որ ճշմարտութեան և սիրոյ  
համար ստեղծեալ է : « Վասն որոյ 'ի բաց ընկե-  
ցէք զստութիւն . խօսեցարուք զճշմարտութիւն  
իւրաքանչիւր ընդ ընկերի իւրում, զի եմք մի-  
մեանց անդամ » . Եփես. Գ. 25 :

Լ. Թ. Պատուիրանին գէմ չը մեղանչելու հա-  
մար աւելի գիւրու ի՞նչ պէտք է ընել :

Պ. Պէտք է սանձահարել զեզու . « Զի որ կա-  
մի զկեանս սիրել և զաւուրս իւր տեսանել 'ի բա-  
րութեան, լռեցուացէ զեզու իւր 'ի շարս թեանէ,  
և զչրթունս իւր 'ի չիօսելոյ զնեղութիւն » .  
Պետրոս. Ա. Թուղթ. Գ. 10 : « Եթէ ոք կամիցի  
կրօնաւոր լինել, և ոչ սանձահարեացէ զեզու  
իւր, այլ զբաղեցուցանիցէ զսիրան իւր, այնպիս-  
ւոյն վայրագարէ կրօնաւորութիւն » : Թղթ. Յա-  
կոբ. Գլ. Ա. Հմբ. 26 :

ՅԱՂԱԴՄ Ժ. ՊԱՏՈՒԻՐԱՆԻՆ

Լ. Ի՞նչ կարգելու թ. պատուիրանը :

Պ. Զար փափաքներն ու մտածմունքները :

Լ. Ինչո՞ւ համար ոչ միայն չար գործերն, այլ

և չար փափաքներն ու խորհուրդները կ'ար-  
դ իլուին :

Պ. Որովհետեւ նախ՝ այս օրինակ փափաքներ  
անուցանող հոգին չը կրնար մարտը և հաճելի  
ըլլալ Աստուծոյ առջեւ . ինչպէս կ'ըսէ Սողոմոն .  
« Պիղծ է առաջի Տեառն խորհուրդ անիրաւ »  
Աւակ. ԺԵ. 26 : Աւստի պէտք է սրբել մեր ան-  
ձը նաև այդ ներքին զուանքներէն, ինչպէս կը  
փորձապետէ Առաքեալը : « Իսկ որովհետեւ զայս  
աւետիս ունիմք սիրելիք . սրբեսցուք զանձինս  
մեր յամենայն պղծութենէ մարմնոյ և հոգւոյ,  
կատարեսցուք զըրբութիւն ահիւն Աստուծոյ : »

Բ. Կորնթ. Է. 1 : Իսկ երկրորդ՝ մեղաց առաջը  
տարբեր եղանակաւ չ'առնուիր . եթէ անմարտը  
փափաքներն ու խորհուրդները չը հեղձնէք, յու-  
րոց իբրև սերմէ կը ծլին չար գործերն ինչպէս  
կ'ըսուի . « Զի 'ի սրտէ եղանեն խորհուրդք չարք,  
ապանութիւնք, շնութիւնք, պոռնկութիւնք,  
սուտ վկայութիւնք, հայհոյութիւնք, գողու-  
թիւնք, » Մատթ. ԺԵ. 19 : Իւրաքանչիւր փոր-  
ձի՞ առ 'ի յիւրոցն ցանկութեանց ձգեալ և պատ-  
րեալ : Ապա այնուհետև ցանկութիւն յղացեալ  
զմեղս ծնանի, և մեղքն կատարեալ զմահ ծնա-  
նին » . Յակովբ. Գլ. Ա. Հմբ. 14, 15 :

Լ. Ի՞նչ է այն մղութիւնը, որ օտարին ընչից  
ցանկութիւնը կը ծնանի :

Պ. Նախանձն է .

Լ. « Մի ցանկանայցես կնոջ ընկերի քո » խօս-  
քով ի՞նչ բան կ'արդ իլուի :

Պ. Կ'արդ իլուին հեշտական խորհուրդներն ու  
ախորժակներն, որք են ներքին շնութիւն :

Լ. Ի՞նչ կ'արդ իլուի այս խօսքով « Մի ցանկա-



նոր տան ընկերի քոյ և մի անդոյ նորա . միցանկանար կնոջ ընկերի քոյ և մի ծառայի նորա , և մի աղախնոյ նորա , և մի եղան նորա և մի իշոյ նորա . և մի ամենայն անասնոյ նորա , և մի ամենայնի գինչ ընկերի քոյ իցէ . » Եւք . Ի . 17 :

Պ . Կ'արգիլուին անձնասիրութեան ու իշխանասիրութեան խորհուրդներն ու փափաքներն :

Հ . Տոաներորդ պատուիրանը այս արգելմանց փոխարէն ի՞նչ պարտք կը սահմանէ :

Պ . Պէտք է ունենալ սրտի մաքրութիւն 2 . Իւրաքանչիւր ոք տարտի բաւականանալ իւր վիճակովն :

Հ . Ի՞նչ բան զխաւորաբար կ'օգնէ սրտի մաքրութեան :

Պ . Հանապազօրեայ և ջերմեամեղեամբ յիշատակութիւն անուան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի :



### ՎԵՐՉԱԲԱՆ

ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ՅԱՂԱԳՍ ՀԱՌԱՏՈՅ ԵՒ ԲԱՐԵՊԱՆՏՈՒԹԵԱՆ

Հ . Ի՞նչպէս պէտք է օգուտ քողել հաւատոյ և բարեպաշտութեան նկատմամբ եղած վարդապետութեանն :

Պ . Պէտք է եռանդեամբ գործել մեր գիտցածներն անհոգութեան յառաջ գալիք պատասխանատուութեան և գաւառիքէ տղատ մնալու

պատճառաւ . « Եթէ զայո գիտէք երանելի ևս էք եթէ առնիցէք . » Յով . ԺԳ . 17 : « Եւ ծառայ որ զխիցէ զկամս աեառն իւրոյ և ոչ պատրաստեցն ըստ կամաց նորա , արբցէ դան բաղում » : Ղուկ . ԳԼ . ԺԲ . Հմբ . 17 :


Հ . Ի՞նչ ընենք երբ զգանք մեր մեղքը :

Պ . Ոչ միայն զղջալ այն մեղքը կրկին չընելու հատուտ վճուով այլ նաև պէտք է ըստ կարեաց բոլորովին ջնջել աստի ծագած գայթակղութիւնը կամ փեսաբ բարի գործողութեամբ : Այսպէս ըրա Զաքքէոս մաքսաւոր ըսելով Տէրոջ , « Տէր ահա զկէս ընչից իմոց տաց աղքատաց և եթէ զքզուկեցի հատուցից չորեքիկին . » Ղուկ . ԺԹ . 8 :

Հ . Ի՞նչ նախադրուչութիւն կը պահանջուի այնպիսի պարագաներու մէջ յորում մեզ կը թուրթէ ամեն պատուիրանք կատարած ենք :

Պ . Պէտք է մեր սիրտը տրամադրել Յիսուսի Քրիստոսի բանից համաձայն՝ որ կ'ըսէ : « Եոյնպէս և դուք յորժամ առնիցէք զամենայն հրամայեալսն ձեզ՝ ասասջիք թէ ծառայք անպիտանք եմք . զոր պարտէաքն առնել արարաք . » Ղուկ . ԺԷ . 10 :







3196

ԱԿ

« Ազգային գրադարան



NL0030048

ԵՐԵՎԱՆ



